Let's hope that you're not mistaken.

2. *A and B are girlfriends, engaged in gossip.*

A. *Հավանո՞ւմ ես Կարոյի նշանածին։*
[Havanum es Karoyi nᵊshanatsin?]
Do you like Karo's fiancé?

B. *Ես նրան դեռ չեմ տեսել։*
[Yes nᵊran der chʰem tesel]
I haven't seen her yet.

A. *Երեկ եկել էր մեր հավաքույթին։*
[Yerek yekel er mer havakʰuytʰin]
She came to our party yesterday.

B. *Ինչպիսի՞ն է։ Դուրդ եկա՞վ։*
[Incḫʰpisin e? Durᵊt yekav?]
What is she like? Did you like her?

A. *Կարոյից ավելի բարձրահասակ է*
[Karoyitsʰ aveli bartsʰrahasak e]
She's taller than Karo,

և նրանից՝ տարիքով մեծ։
[yev nᵊranitsʰ tarikʰov mets]
and older than him.

B. *Գոնե գեղեցի՞կ է։*
[Gone geghetsʰik e?]
Is she pretty at least?

A. *Եթե ինձ հարցնես, տգեղ է։*
[Yetʰe indz hartsʰᵊnes, tᵊgegh e]
If you ask me, she's ugly.

B. *Ի՞նչ էր հագել։*
[Incḫʰ er hakʰel?]
What was she wearing?

A. *Անճաշակ կին է։*
[Ancḫashak kin e]
She is a woman with no taste.

B. *Հետը խոսեցի՞ր։*
[Hetə kḫosetsʰir?]
Did you talk to her?

A. *Ո՛չ, չկարողացա։ Ինքն էր*
[Voch, chʰᵊkaroghatsʰa. Inkʰn er]
No, I couldn't. She did

բոլորից շատ խոսում։
[bolorits shat kḫosum]
all of the talking.

B. *Ինձ զարմացնում է Կարոյի ճաշակը։*
[In zarmatsʰᵊnum e Karoyi cḫashakə]
I am surprised at Karo's taste.

A. *Նա ե՞րբ է ճաշակ ունեցել։*
[Na yerpʰ e cḫashak unetsʰel?]
Did he ever have taste?

II TEXT

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ

Մի գիտնական երիտասարդ օգնական էր փնտրում կարևոր փորձարկման համար։ Շատերը դիմեցին հայտարարված տեղի համար, և վերջապես գիտնականը ընտրեց մեկին։

— Ասա՛, խնդրեմ, — հարցրեց նրան ընկերներից մեկը, — ինչո՞ւ ընտրեցիր այդ երիտասարդին։ Նա ոչ միայն քեզ անծանոթ էր, այլև վկայական էլ չուներ։ Ուրիշ թեկնածուներ, որքան գիտեմ, եկան ու գնացին լավ վկայականներով ու բնութագրերով, իսկ դու նրանց չընդունեցիր։

— Ասեմ, — պատասխանեց գիտնականը, — թե ինչու այդ երիտասարդին աշխատանքի ընդունեցի։ Դեռ սպասասրահում տեսա, թե նա ինչպես նստած տեղից վեր կացավ ու աթոռը զիջեց տարեց մի տիկնոջ։ Գրասենյակս մտնելուց առաջ գլխարկը հանեց և դուռը փակեց առանց աղմուկի։ Ապա սպասեց, որ իրեն տեղ առաջարկեմ։ Ուրեմն քաղաքավարի է ու նրբանկատ։ Գիտեմ, որ դեռ ուսանող է, բայց և հատուկ թռչակ է ստանում։ Ուրեմն մտավոր կարողություններ ունի, ընդունակ է ու աշխատասեր։ Հարցերիս տվեց արագ, ճշգրիտ և ճիշտ պատասխաններ, որոնք բոլորն էլ ինձ գոհացրին։ Իսկ երբ նրան հարցրի, թե ինչու բնութագիր չունի, պատասխանեց, որ սա աշխատանք գտնելու իր առաջին փորձն է։ Եվ որ շատ էր ուզում հնարավորություն ստանալ՝ աշխատանքում իրեն դրսևորելու։ Ի՞նչ ես կարծում, այս բոլոր հատկությունները, միասին վերցրած, մի՞թե մի փայլուն վկայական չարժեն։

III NEW WORDS AND EXPRESSIONS

լավագույն	[lavaguyn]	*best*
վկայական	[vᵊkayakan]	*diploma*
գիտնական	[gitnakan]	*scientist*
փնտրել	[pʰᵊntrel]	*to search*
օգնական	[okʰnakan]	*assistant*
կարևոր	[karevor]	*important*
փորձարկում	[pʰortʂʰarkum]	*experiment*
դիմել	[dimel]	*to apply*
հայտարարված	[haytararvatʂ]	*announced*
վերջապես	[verʧʰapes]	*finally*

երիտասարդ	[yeritasartʰ]	*young (man)*
անծանոթ	[antʦanotʰ]	*unknown*
թեկնածու	[tʰeknaʦu]	*candidate*
բնութագիր	[bᵊnutʰagir]	*recommendation*
ընդունել	[ənt*ʰ* unel]	*to accept*
սպասասրահ	[spasasᵊrah]	*waiting room*
վեր կենալ	[ver kenal	*to get up*
զիջել	[zijel]	*to yield*
տարեց	[tareʦʰ]	*aged*
մտնել	[mᵊtnel]	*to enter*
հանել	[hanel]	*take off*
փակել	[pʰakel]	*to close*
աղմուկ	[aġhmuk]	*noise*
առաջարկել	[aṙaǰʰarkel]	*to offer*
քաղաքավարի	[kʰaġhakʰavari]	*polite*
նրբանկատ	[nᵊrpʰanᵊkat]	*considerate*
հատուկ	[hatuk]	*special*
թոշակ	[tʰoṣhak]	*stipend*
ստանալ	[stanal]	*to receive*
մտավոր	[mᵊtavor]	*mental*
կարողություն	[karoġhutʰyun]	*capacity*
ընդունակ	[ənt*ʰ* unak]	*capable*
աշխատասեր	[aṣhkẖataser]	*diligent*
արագ	[arag]	*fast, quick*
ճշգրիտ	[cẖʰᵊṣhgrit]	*exact*
գոհացնել	[gohaʦʰᵊnel]	*to satisfy*
գտնել	[gᵊtnel]	*to find*
փորձ	[pʰorʦʰ]	*attempt, try*
հնարավորություն	[hᵊnaravorutʰyun]	*chance*
դրսևորվել	[dᵊrsevorvel]	*to reveal himself*
հատկություն	[hatkutʰyun]	*quality*
միասին վերցրած	[miasin verʦʰᵊraʦ]	*taken together*
մի՞թե	[mitʰe?]	*Don't you think?/Isn't it?*
փայլուն	[pʰaylun]	*brilliant*
արժենալ	[arzẖenal]	*to be worth*

IV THEMATIC GROUP OF WORDS

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ [Masnagitutʰyunner]		PROFESSIONS
հաշվապահ	[hashvapah]	*accountant*
դերասան*	[derasan]	*actor*
գյուղատնտես	[gyughatᵊntes]	*agronomist*
ճարտարապետ	[chartarapet]	*architect*
արվեստագետ	[arvestaget]	*artist*
նկարիչ	[nᵊkarichʰ]	*artist-painter*
հացագործ	[hatsʰagorts]	*baker*
վարսավիր	[varsavir]	*barber*
դարբին	[darpʰin]	*blacksmith*
որմնադիր / հյուսն	[vormnadir / hyusᵊn]	*bricklayer*
մսավաճառ	[mᵊsavachar]	*butcher*
ատաղձագործ	[atakhtsʰagorts]	*carpenter*
գանձապահ	[gandzapah]	*cashier*
շինարար	[shinarar]	*constructor, builder*
խոհարար	[khoharar]	*cook*
ատամնաբույժ	[atamnabuyzh]	*dentist*
դիվանագետ	[divanaget]	*diplomat*
տնօրեն	[tᵊnoren]	*director*
բժիշկ	[bᵊzhishk]	*doctor, physician*
դերձակ	[dertsʰak]	*dressmaker*
տնտեսագետ	[tᵊntesaget]	*economist*
ինժեներ, ճարտարագետ	[inzhener, chartaraget]	*engineer*
ձեռնարկատեր	[dzernarkater]	*entrepreneur*
երկրաբան	[yerkraban]	*geologist*
ոսկերիչ	[voskerichʰ]	*goldsmith, jeweler*
վարսահարդար	[varsahardar]	*hairdresser*

* Some nouns indicating professions have female counterparts formed by the suffix *-ուհի* [-uhi]: *դերասան* [derasan] actor → *դերասանուհի* [derasanuhi] actress, *ուսուցիչ* [usutsʰichʰ] male teacher → *ուսուցչուհի* [usutsʰchʰuhi] female teacher (see p. 57).

քննիչ	[kʰᵊnnic̲h̲ʰ]	*inspector*
լրագրող	[lᵊragrog̲h̲]	*journalist*
դատավոր	[datavor]	*judge*
իրավաբան	[iravaban]	*lawyer*
լեզվաբան	[lezvaban]	*linguist*
վաճառական	[vac̲h̲aṙakan]	*merchant*
բուժքույր	[buz̲h̲kʰuyr]	*nurse* (female)
բուժակ	[buz̲h̲ak]	*nurse* (male)
ներկարար	[nerkarar]	*painter*
դեղագործ	[deg̲h̲agort̲s̲]	*pharmacist*
բանասեր	[banaser]	*philologist*
լուսանկարիչ	[lusanᵊkaric̲h̲ʰ]	*photographer*
դաշնակահար	[das̲h̲nakahar]	*pianist*
օդաչու	[otʰac̲h̲ʰu]	*pilot*
բանաստեղծ	[banasteg̲h̲t̲s̲]	*poet*
ոստիկան	[vostikan]	*policeman*
վարչապետ	[varc̲h̲ʰapet]	*premier*
քահանա	[kʰahana]	*priest*
դասախոս	[dasak̲h̲os]	*professor, lecturer*
ծրագրավորող	[t̲s̲ᵊragravorog̲h̲]	*programmer*
հրատարակիչ	[hratarakic̲h̲ʰ]	*publisher*
թղթակից	[tʰᵊg̲h̲tʰakit̲s̲ʰ]	*reporter, correspondent*
քարտուղար	[kʰartug̲h̲ar]	*secretary* (male)
կոշկակար	[kos̲h̲kakar]	*shoemaker*
վարորդ	[varortʰ]	*driver*
մասնագետ	[masnaget]	*specialist*
վիրաբույժ	[virabuyz̲h̲]	*surgeon*
ուսուցիչ	[usut̲s̲ʰic̲h̲ʰ]	*teacher*
առևտրական	[arevtᵊrakan]	*trader*
անասնաբույժ	[anasnabuyz̲h̲]	*veterinarian*
ժամագործ	[z̲h̲amagort̲s̲]	*watchmaker*
բանվոր	[banvor]	*worker*
գրող	[gᵊrog̲h̲]	*writer*

ԱԾԱԿԱՆՆԵՐ	[Atsakanner]	ADJECTIVES
հին	[hin]	*old*
նոր	[nor]	*new*
երիտասարդ	[yeritasartʰ]	*young*
ծեր	[tser]	*old*
ազնիվ	[azniv]	*honest*
անազնիվ	[anazniv]	*dishonest*
զգույշ	[zguyšh]	*careful, cautious*
անզգույշ	[anəzguyšh]	*careless*
աչխատասեր	[ašhkhataser]	*diligent*
ծույլ	[tsuyl]	*lazy*
առատաձեռն	[aṙatadzeṙn]	*generous*
ժլատ	[zhəlat]	*stingy*
գեղեցիկ	[gegheʦʰik]	*beautiful*
տգեղ	[təgegh]	*ugly*
գեր	[ger]	*fat*
նիհար	[nihar]	*slim*
թափթփված	[tʰapʰtʰəpʰvaʦ]	*sloppy*
կոկիկ	[kokik]	*neat*
թուխ	[tʰukh]	*dark* (about people)
խարտյաշ	[khartyašh]	*blonde, fair*
բարձրահասակ	[barʦʰrahasak]	*tall*
կարճահասակ	[karchahasak]	*short*
հաճելի	[hacheli]	*pleasant*
տհաճ	[təhach]	*unpleasant*
հետաքրքրական	[hetakʰərkʰrakan]	*interesting*
ձանձրալի	[dzandzrali]	*boring*
հետաքրքրասեր	[hetakʰərkʰraser]	*curious*
անտարբեր	[antarber]	*indifferent*
ուժեղ	[uzhegh]	*strong*
թույլ	[tʰuyl]	*weak*
քաջ, անվախ	[kʰaj, anvakh]	*brave, fearless*
վախկոտ	[vakhkot]	*coward*
լուրջ	[lurj]	*serious*
թեթևամիտ	[tʰetʰevamit]	*frivolous*

V GRAMMAR

A. VERBS

I. THE MANDATIVE MOOD

The mandative mood expresses actions or states considered by the speaker to be necessary and obligatory. There are four mandative tenses:

1. Mandative future I

The mandative future I is a compound tense consisting of the modal particle *պիտի* or *պետք է* and the personal forms of the base verb in the subjunctive future (see p. 150):

subjunctive future: *գրեմ/կարդամ* → *mandative future I*: *պիտի գրեմ* or *պետք է գրեմ*, *պիտի կարդամ* or *պետք է կարդամ*. All regular verbs follow the pattern given below:

	SINGULAR	
1st (*ես*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եմ/ամ*	[piti or petkʰ e + verb stem+em/am]
2nd (*դու*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*ես/աս*	[piti or petkʰ e + verb stem+es/as]
3rd (*նա*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*ի/ա*	[piti or petkʰ e + verb stem+i/a]
	PLURAL	
1st (*մենք*)	*պիտի* or *պետք է*+ verb stem+*ենք/անք*	[piti or petkʰ e + verb stem+enkʰ/ankʰ]
2nd (*դուք*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եք/աք*	[piti or petkʰ e + verb stem+ekʰ/akʰ]
3rd (*նրանք*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*են/ան*	[piti or petkʰ e + verb stem+en/an]

MANDATIVE FUTURE I

	գրել	*կարդալ*
(*ես*)	*պիտի* or *պետք է գրեմ*	*պիտի* or *պետք է կարդամ*
(*դու*)	*պիտի* or *պետք է գրես*	*պիտի* or *պետք է կարդաս*
(*նա*)	*պիտի* or *պետք է գրի*	*պիտի* or *պետք է կարդա*
(*մենք*)	*պիտի* or *պետք է գրենք*	*պիտի* or *պետք է կարդանք*
(*դուք*)	*պիտի* or *պետք է գրեք*	*պիտի* or *պետք է կարդաք*
(*նրանք*)	*պիտի* or *պետք է գրեն*	*պիտի* or *պետք է կարդան*

2. Mandative past I

The mandative past I is a compound tense that consists of the particle *պիտի* or *պետք է* and the conjugated personal forms of the subjunctive past (see p. 151).

subjunctive past: *գրեի/կարդայի* → *mandative past I*: *պիտի գրեի* or *պետք է գրեի*, *պիտի կարդայի* or *պետք է կարդայի*.

All regular verbs follow the pattern given below:

SINGULAR		
1st (*ես*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եի/այի*	[piti or petkʰ e + verb stem+eyi/ayi]
2nd (*դու*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եիր/այիր*	[piti or petkʰ e + verb stem+eyir/ayir]
3rd (*նա*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եր/ար*	[piti or petkʰ e + verb stem+er/ar]
PLURAL		
1st (*մենք*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եինք/այինք*	[piti or petkʰ e + verb stem+einkʰ/ayinkʰ]
2nd (*դուք*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եիք/այիք*	[piti or petkʰ e + verb stem+eikʰ/ayikʰ]
3rd (*նրանք*)	*պիտի* or *պետք է* + verb stem+*եին/ային*	[piti or petkʰ e + verb stem+eyin/ayin]

MANDATIVE PAST I

	գրել	*կարդալ*
	affirmative	
(*ես*)	*պիտի* or *պետք է գրեի*	*պիտի* or *պետք է կարդայի*
(*դու*)	*պիտի* or *պետք է գրեիր*	*պիտի* or *պետք է կարդայիր*
(*նա*)	*պիտի* or *պետք է գրեր*	*պիտի* or *պետք է կարդար*
(*մենք*)	*պիտի* or *պետք է գրեինք*	*պիտի* or *պետք է կարդայինք*
(*դուք*)	*պիտի* or *պետք է գրեիք*	*պիտի* or *պետք է կարդայիք*
(*նրանք*)	*պիտի* or *պետք է գրեին*	*պիտի* or *պետք է կարդային*

3. Formation of the negative paradigms

For both the mandative future I and mandative past I, the negation particle *չ-* is prefixed to *պիտի* or *պետք է*, resulting in *չպիտի* or *չպետք է* + the corresponding subjunctive form.

	MANDATIVE FUTURE I	**MANDATIVE PAST I**
	negative	
(*ես*)	*չպիտի* or *չպետք է գրեմ*	*չպիտի* or *չպետք է կարդայի*
(*դու*)	*չպիտի* or *չպետք է գրես*	*չպիտի* or *չպետք է կարդայիր*
(*նա*)	*չպիտի* or *չպետք է գրի*	*չպիտի* or *չպետք է կարդար*
(*մենք*)	*չպիտի* or *չպետք է գրենք*	*չպիտի* or *չպետք է կարդայինք*
(*դուք*)	*չպիտի* or *չպետք է գրեք*	*չպիտի* or *չպետք է կարդայիք*
(*նրանք*)	*չպիտի* or *չպետք է գրեն*	*չպիտի* or *չպետք է կարդային*

4. Mandative future II and the mandative past II

In addition to the primary set of mandative paradigms, mandative future I and mandative past I, there are two secondary paradigms, which we will call mandative future II and mandative past II. They consist of the mandative future I and past I forms of the auxiliary verb *լինել* (cf. *պիտի լինեմ* and *պիտի լինեի*) respectively and the past participle (ending in *-ած* or *-ացած*) (see p. 236): *գրած* or *կարդացած պիտի/պետք է լինեմ* and *գրած* or *կարդացած պիտի/պետք է լինեի*.

All regular verbs follow the pattern given below:

SINGULAR		
1st pers. (*ես*)	participle in *-ած* or *-ացած*	*պիտի* or *պետք է լինեմ/լինեի*
2nd pers. (*դու*)	participle in *-ած* or *-ացած*	*պիտի* or *պետք է լինես/լինեիր*
3rd pers. (*նա*)	participle in *-ած* or *-ացած*	*պիտի* or *պետք է լինի/լիներ*
PLURAL		
1st pers. (*մենք*)	participle in *-ած* or *-ացած*	*պիտի* or *պետք է լինենք/լինեինք*
2nd pers. (*դուք*)	participle in *-ած* or *-ացած*	*պիտի* or *պետք է լինեք/լինեիք*
3rd pers. (*նրանք*)	participle in *-ած* or *-ացած*	*պիտի* or *պետք է լինեն/լինեին*

	MANDATIVE FUTURE II	MANDATIVE PAST II
	affirmative	
(*ես*)	*գրած պիտի* or *պետք է լինեմ*	*գրած պիտի* or *պետք է լինեի*
(*դու*)	*գրած պիտի* or *պետք է լինես*	*գրած պիտի* or *պետք է լինեիր*
(*նա*)	*գրած պիտի* or *պետք է լինի*	*գրած պիտի* or *պետք է լիներ*
(*մենք*)	*գրած պիտի* or *պետք է լինենք*	*գրած պիտի* or *պետք է լինեինք*
(*դուք*)	*գրած պիտի* or *պետք է լինեք*	*գրած պիտի* or *պետք է լինեիք*
(*նրանք*)	*գրած պիտի* or *պետք է լինեն*	*գրած պիտի* or *պետք է լինեին*

5. Formation of the negative paradigms

For this secondary set of mandative paradigms, the negative particle *չ-* is prefixed to *պիտի* or *պետք է*, resulting in *գրած չպիտի* or *չպետք է լինեմ* etc. (mandative future II) and *գրած չպիտի* or *չպետք է լինեի*, etc. (mandative past II).

6. Uses of the mandative future I

a) The mandative future I denotes actions or states anticipated by the speaker in the future. Compared to the indicative future (cf. *գրելու/կարդալու եմ* etc.), the action expressed by the mandative future I (cf. *պիտի գրեմ/պիտի կարդամ* etc.) contains a sense of necessity or obligation, which at times can be perceived as an action contrary to the speaker's wish:

Այս տարի բանակ պիտի/պետք է գնամ։
This year I must go to the army.

b) The modal particles *պիտի, պետք է* are used as synonyms, although at times the forms with *պետք է* express a stronger necessity. In the second person, *պետք է* is widely used in orders:

Դուս պետք է անմիջապես հեռանաս այստեղից։
You must leave this place immediately.

c) In certain contexts, mandative future I may also connote determination on the part of the speaker to carry out an action in the future:

Ես պիտի/պետք է շարունակեմ իմ գործը։
I intend to continue my work.

d) Used in the second person, in some contexts the mandative future I may also indicate a supposition or presumption:

Ընկերոջս պիտի/պետք է ճանաչես։
You must know my friend.

e) At times, *պիտի* or *պետք է* are followed by the conjunction *որ*, which softens the mandatory meaning. Compare the translation:

Ընկերոջս պիտի/պետք է որ ճանաչես։
You must certainly know my friend.

7. Uses of the mandative past I

a) The mandative past I denotes a potential action or state that according to the speaker could have occured, but did not. Hence the negative meaning of affirmative forms and the affirmative meaning of negative forms. Thus, *պիտի գրեի* *I should have written* implies *չգրեցի* *I haven't written* and *չպիտի գրեի* *I shouldn't have written* implies *գրեցի* *I have written.*

Հաջորդ կիրակի նա պիտի ամուսնանար։
Next Sunday he was to get married. (In reality, he didn't get married.)

b) As the mandative past I indicates potential actions that did not occur, second-person forms are frequently used to express advice or a reproach:

Այդ տունը պիտի գնեիր։
You should have bought that house. (You were going to, but didn't.)

This can be expressed by shorter sentences, such as:

Պիտի գնեիր։
You should have bought (it).

Այդ բանը չպիտի անեիր։
You shouldn't have done that.

c) The mandative past I may also refer to the present time to express wishes and desires in a more polite manner. In that sense, it corresponds to the English "*I would ...*" or "*I wouldn't...*":

Պիտի խնդրեի, որ հետս գայիր։
I would ask you to come with me.

8. Uses of the mandative future II

a) The mandative future II indicates an action that in the speaker's mind must be completed at a certain point in the future:

Մինչև վաղը այս աշխատանքը պետք է ավարտած լինեմ։
By tomorrow I must have this work completed.

b) Used in the second person, the mandative future II can be synonymous with the imperative mood, indicating an order or a strong demand for an action to be completed at a certain point in the future:

Ժամը 12-ին դրամը բերած պիտի լինես։
By 12 o'clock you must have brought the money.

c) In some contexts, the mandative future II can express an action that according to the speaker's conviction or guess must have been completed at the time of speech:

Նա վաղուց պետք է գնացած լինի։
He must have gone long ago.

9. Uses of the mandative past II

a) The mandative past II indicates an action that should have taken place in the past but failed to do so:

Նամակը մինչև հիմա պիտի/պետք է գրված լիներ։
The letter should have been written by now.

b) The very meaning of failure imparts to the statement a sense of wrong-doing. Hence the recurrent use of the mandative II in reproaches to others, as well as to oneself. It can be rendered in English by *should have, shouldn't have,* etc.

Ձեզ պիտի/պետք է զանգահարած լինեի։
I should have phoned you. (But I didn't.)

Այդ բանը ինձ չպիտի/չպետք է ասած լինեիր։
You shouldn't have told me that. (But you did.)

II. THE NOMINALIZED INFINITIVE

The Armenian infinitive is readily nominalized and it is used in two forms:

a) with the definite article *-ը/-ն*
b) with the possessive articles *-ս, -դ, -ը/-ն*

երգել to sing → երգելը the singing → երգելս my singing
խաղալ to play → խաղալը the playing → խաղալդ your playing
խոսել to speak → խոսելը the speaking → խոսելը his/her speaking

The nominalized infinitive is declined like a regular noun following the *-ու* declension. Below is the declension paradigm of the infinitive with the definite article *-ը/-ն* in the singular:*

SINGULAR			
Nom./Acc.	*երգելը*	*խաղալը*	*խոսելը*
Gen./Dat.	*երգելու(ն)*	*խաղալու(ն)*	*խոսելու(ն)*
Abl.	*երգելուց*	*խաղալուց*	*խոսելուց*
Instr.	*երգելով*	*խաղալով*	*խոսելով*

Below is the declension paradigm of the infinitive used with the possessive articles *-ս, -դ, -ը/-ն* in the singular:

SINGULAR			
Nom./Acc.	*երգելս*	*խաղալ*	*խոսելս*
Gen./Dat.	*երգելուս*	*խաղալուս*	*խոսելուս*
Abl.	*երգելուցս*	*խաղալուցս*	*խոսելուցս*
Instr.	*երգելովս*	*խաղալովս*	*խոսելովս*

* The plural paradigm is restricted to colloquial speech.

Uses of the nominalized infinitive

The nominalized infinitive ending with the definite article **-ը/-ն** is used as an abstract noun indicating an action or state. In this usage, the nominalized infinitive has much in common with the English gerund:

Ծխելը վնասակար է։	**Ապրելը արվեստ է։**
Smoking is harmful.	*Living is an art.*

Nominalized infinitives are readily declined and fulfill various functions in sentences:

Անցար առանց ինձ նկատելու։	**Լալով ոչինչ չես փոխի։**
You passed without noticing me.	*By crying you won't change anything.*

In the first sentence, the verb **նկատել** is in the dative case as required by the preposition **առանց** *without*. In the second sentence, the verb **լալ** appears in the instrumental case.

With an attribution to a person, the nominalized infinitive appears with a noun in the genitive case or the possessive adjective **իմ, քո, նրա,** etc. Most commonly, however, it is used with the possessive article **-ս, -դ, -ը/-ն** (see Unit 3, p. 55). It functions as a verbal noun that indirectly refers to a person's action or state. These personalized infinitives can transform complete sentences into nominal phrases designating facts. Compare:

Երեխան արդեն քայլում է։	→	**Երեխայի քայլելը մեզ ուրախացրեց։**
The child is already walking.	→	*The child's walking made us happy.*
Նրանք ուշանում են։	→	**Նրանց ուշանալը ինձ մտահոգում է։**
They are late.	→	*Their being late worries me.*
Դու ծխո՞ւմ ես։	→	**Ծխելդ ինձ զարմացրեց։**
Are you smoking?	→	*Your smoking surprised me.*

When derived from a transitive verb, these nominalizations may take a direct object:

Նոր տուն գնեցիր։	→	**Նոր տուն գնելդ լավ լուր է։**
You bought a new house.	→	*Your buying a new house is good news.*

Nominalized infinitives can also be prefixed with the negation marker **չ-**:

Աննան չի պատասխանում։	→	**Նրա չպատասխանելը տարօրինակ է։**
Anna is not answering.	→	*Her not-answering is strange.*

Personalized formations appear also with case markers, as governed by a verb, preposition or postposition:

Հիվանդանալուդ մասին ինձ չհայտնեցին։ (**հիվանդանալ** in genitive **+դ**)
They didn't inform me about your falling ill.

Մեկնելուցս հետո ամեն ինչ փոխվեց։ (**մեկնել** in ablative **+ս**)
After my departure everything changed.

B. ADJECTIVES

1. Functions of adjectives

As in many languages, Armenian adjectives are used

1) as modifiers of nouns, such as *առողջ* *healthy* in *առողջ երեխա* *healthy child* (attributive function);

2) complements to a copular verb, as *համեղ* *tasty* in *ճաշը համեղ է* *the meal is tasty,* or *ուժեղ* *strong* in *ուժեղ է թվում* *he seems strong* (predicative function);

3) as modifiers of verbs, indicating the manner in which an action is performed as *լավ* *good* in *լավ են պարում* *they dance well* (adverbial function).

In all three functions, Armenian adjectives do not change forms. When used alone, however, to refer to people and things, Armenian adjectives function as nouns. As such, they can take on the definite article *-ը/-ն*, the possessive articles *-ս*, *-դ*, *-ը/-ն*, case markers according to the *-ի* declension of nouns, and the plural ending *-(ն)երը*.

EXAMPLES: *լավը* *the good one,* *լավից* *from the good one,* *լավս* or *իմ լավը* *my good one,* *լավերը* *the good ones,* *լավերով* *with the good ones,* etc. As with regular nouns, the definite article *-ն* appears, rather than the common *-ը*, after the final vowel of an adjective or after the final consonant, if the following word begins with a vowel: *չարն ու բարին* *the evil and the good* (see p. 283).

When adjectives are used to refer to people in general, English and Armenian behave differently: While English uses only the singular, Armenian predominantly employs the plural: *հարուստները* *the rich,* *անվանիները* *the famous,* *մեր երիտասարդները* *our young.* Moreover, unlike English, where only selective adjectives can be nominalized in this role, Armenian knows almost no restrictions.

2. Comparison

To indicate the extent or the degree of quality inherent to certain items, Armenian adjectives have three degrees of comparison: *positive, comparative,* and *superlative.*

The ***positive*** degree is the plain form of adjectives as they appear in dictionaries:

լավ *good*
ուրախ *joyous*
հետաքրքրական *interesting,* etc.

1) The *positive* degree is used in constructions where two compared items, persons, or events are said to be equal or similar in quality. This is rendered in English by the correlative subordinators *as ... as.* For this purpose, Armenian uses two constructions. The first construction includes *այնքան ..., որքան· նույնքան ..., որքան· այնչափ ..., որչափ* *as (much) ... as.*

Նրա առաջին վեպը նույնքան հետաքրքրական է, որքան վերջինը։
His first novel is as interesting as the last one.

The second construction for the positive degree uses the postpositions *պես* or *չափ* that govern the dative case (see Unit 7, p. 158):

Արամը Արմենի պես աշխատասեր է։
Aram is as diligent as Armen.

2) The ***comparative*** degree serves to compare two items according to greater or lesser degrees of quality. In Armenian, it is always a combination of the comparative *ավելի* *more* (for superiority) or *նվազ* or *պակաս* *less* (for inferiority) with the simple form of the adjective:

գեղեցիկ *beautiful* → *ավելի գեղեցիկ* *more beautiful*
հետաքրքրական *interesting* → *նվազ* or *պակաս հետաքրքրական* *less interesting*

a) To introduce the second item of comparison, comparative constructions involve the word *քան* *than*:

Առաջին կարգը ավելի թանկ է, քան երկրորդը։
The first row is more expensive than the second one.

b) The second item of comparison can be shown in the ablative case:

Առաջին կարգը երկրորդից (ավելի) թանկ է։
The first row is more expensive than the second one.

c) When adjectives hark back to an earlier sentence or clause for comparison, some sentence structures can be elliptic:

Մայրս միշտ հիվանդ էր, բայց հայրս ավելի առողջ չէր։
My mother was always ill, but my father was not much healthier.

3) The ***superlative*** degree indicates the highest or lowest degree in quality. There are three superlative constructions in Armenian.

a) A construction consisting of *ամենից* *of all* and the plain form of the adjective:

երիտասարդ *young* → *ամենից երիտասարդ* *(the) youngest (of all)*
դժվար *difficult* → *ամենից դժվար* *(the) most difficult*

b) A derivation consisting of the superlative prefix *ամենա-* and the plain adjective:

մեծ *big* → *ամենամեծ* *(the) biggest*
երջանիկ *happy* → *ամենաերջանիկ* *(the) happiest*

c) A derivation that combines the plain adjective with the superlative suffix *-ագույն*:

մեծ *big* → *մեծագույն* *the biggest*
ուժեղ *strong* → *ուժեղագույն* *the strongest*

Some adjectives take both (b) and (c) constructions: *ամենալավ* and *լավագույն* *the best*, *ամենաբարձր* and *բարձրագույն* *the highest*, *ամենահին* and *հնագույն* *the oldest*, etc.

C. PRONOUNS

Declension of personal pronouns

As in English, Armenian personal pronouns make distinctions in person (first, second, and third), number (singular and plural), and case (although in Armenian, there is a more extensive declension paradigm: nominative, genitive, dative, accusative, ablative, and instrumental). The declension of personal pronouns in Armenian is more developed than that of nouns. Armenian personal pronouns, however, do not distinguish gender in the third-person singular (as in the English he/she/it), but have two sets of pronouns in the third person.

		SINGULAR		PLURAL	
1st Person		ես	*I*	մենք	*we*
2nd Person		դու	*you* (informal)	դուք	*you* (formal and plural)
3rd Person	a)	ինք(ը)	*he/she/it/himself/herself*	իրենք	*they, themselves*
	b)	նա	*he/she/it*	նրանք	*they*

	1st Person Singular	2nd Person Plural	1st Person Singular	2nd Person Plural
Nominative	ես	մենք	դու	դուք
Genitive	իմ	մեր	քո	ձեր
Dative	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Accusative	ինձ	մեզ	քեզ	ձեզ
Ablative	ինձ(ա)նից	մեզ(ա)նից	քեզ(ա)նից	ձեզ(ա)նից
Instrumental	ինձ(ա)նով	մեզ(ա)նով	քեզ(ա)նով	ձեզ(ա)նով

	3rd Person			
	Form (a): Singular	Plural	Form (2): Singular	Plural
Nominative	ինք(ը)	իրենք	նա	նրանք
Genitive	իր	իրենց	նրա	նրանց
Dative	իրեն	իրենց	նրան	նրանց
Accusative	իրեն	իրենց	նրան	նրանց
Ablative	իրենից	իրենցից	նրանից	նրանցից
Instrumental	իրենով	իրենցով	նրանով	նրանցով

VI ARMENIAN-ENGLISH CONTRASTS

The Armenian deictic system

Deictic words *(I, you, here, now, this, that*, etc.) reflect the speaker's proximity to things, people, time, and place. Languages express this proximity between speaker and reality in different ways. While standard English makes two distinctions (*this/that, here/there,* etc.), Armenian makes three (**այս/այդ/այն, այստեղ/այդտեղ/այնտեղ,** etc.).*

This is illustrated in the table below where deictics indicate various distances from the speaker: (1) immediate proximity (**այս** [ays] *this near me*); (2) moderate distance (**այդ** [ayt] *that near you*); (3) greater distance (**այն** [ayn] *that over there*).

1. **այս** [ays]	1. **այստեղ** [aystegh]	1. **այսքան** [aysk^{h}an]	1. **այսպես** [ayspes]
2. **այդ** [ayt]	2. **այդտեղ** [ayttegh]	2. **այդքան** [aytk^{h}an]	2. **այդպես** [aytpes]
3. **այն** [ayn]	3. **այնտեղ** [ayntegh]	3. **այնքան** [aynk^{h}an]	3. **այնպես** [aynpes]

Here is a table corresponding to the same group of deictics in English.

1. *this*	1. *here*	1. *this much*	1. *this way*
2. *that*	2. *there*	2. *that much*	2. *that way*

Consequently, there can be no exact equivalents in translation. As illustrated below, the Armenian groups (2) and (3) are reduced to a single category in English.

1. **այս գիրքը** [ays girk^{h}ə]	*this book*
2. **այդ գիրքը** [ayt girk^{h}ə]	} *that book*
3. **այն գիրքը** [ayn girk^{h}ə]	

The recurring sounds associated with each of these three groups are **ս, դ** and **ն**. Note that these sounds are always present in the Armenian deictic system, for instance, in the personal pronouns **ես, դու, նա**; these sounds also constitute the possessive articles **-ս, -դ, -ը/-ն**.

1. **գիրքս** [girk^{h}əs] *my book*
2. **գիրքդ** [girk^{h}ət] *your book*
3. **գիրքը** [girk^{h}ə] or **գիրքն** [girk^{h}n] *his/her book*

* Many non-standard English dialects have three demonstratives (cf. *this, that, yon/yonder*) corresponding to Early Modern English (cf. the Shakespearean *here, there, yonder*). Compare also the Spanish demonstratives *este, ese, aquel* and the Latin *hic, iste, ille.*

VII WORD FORMATION

Formation of adjectives

1. The Armenian adjectival prefixes are: **ան-** [an-], **չ-** [cẖʰ-], **դժ-** [dᵊzẖ-], **տ-** [t-], **ապ-** [ap-]. They correspond to the English prefixes *un-, dis-, in-* and the suffix *-less*.

Of all the adjectival and nominal prefixes in Armenian, **ան-** is the most productive. It is chiefly used to create antonyms derived from

a) both radical and derived adjectives:

մաքուր *clean*	→	**անմաքուր** *unclean*
կայուն *steady*	→	**անկայուն** *unsteady*
հաջող *successful*	→	**անհաջող** *unsuccessful*
պատասխանատու *responsible*	→	**անպատասխանատու** *irresponsible*

b) nouns:

նշան *sign*	→	**աննշան** *insignificant*
մեղք *guilt*	→	**անմեղ** *innocent*
հոտ *odor*	→	**անհոտ** *odorless*
հույս *hope*	→	**անհույս** *hopeless*

Note that abstract nouns ending in **-ություն** can be formed from most adjectives with the prefix **ան-** (see Unit 3, p. 58).

անհոգ *careless*	→	**անհոգություն** *carelessness*
անճաշակ *tasteless*	→	**անճաշակություն** *tastelessness*
անմեղ *innocent*	→	**անմեղություն** *innocence*
անպատիվ *dishonest*	→	**անպատվություն** *dishonor, disgrace*

The prefixes **չ-**, **դժ-**, **տ-**, and **ապ-** are less productive. They all have a negative meaning.

չ- :	**կամենալ** *to wish*	→	**չկամ** *unkind*
	խոսել *to speak*	→	**չխոսկան** *taciturn*
դժ- :	**գոհ** *content*	→	**դժգոհ** *discontent*
	գույն *color*	→	**դժգույն** *pale*
տ- :	**գիտենալ** *to know*	→	**տգետ** *ignorant*
	հաճելի *pleasant*	→	**տհաճ** *unpleasant*
ապ- :	**օրենք** *law*	→	**ապօրինի** *illegal*
	շնորհք *grace*	→	**ապաշնորհ** *disgraceful*

Many of these adjectives can have parallel formations with the more productive prefix **ան-**: **չկամ - անկամ** *unkind*, **դժգույն - անգույն** *pale*, **ապօրինի - անօրեն** *illegal*, etc.

2. The adjectival suffixes **-ալի** [-ali], **-ելի** [-eli], **-ական** [-akan]/**-եկան** [-ekan],**-ակի** [-aki], **-ային** [-ayin], **-ատ** [-at], **-ավետ** [-avet], **-ավոր** [-avor]/ **-եվոր** [-avor], **-ավուն** [-avun], **-ե** [-e]/**-յա** [-ya], **-ելի** [-eli], **-եղ** [-egh], **-ենի** [-eni], **-իչ** [-iչʰ], **-ոտ** [-ot]/**-կոտ** [-kot], **-յալ** [-yal], **-յան** [-yan], **-ու** [-u], **-ուն** [-un], etc. are productive, adding various meanings to the adjectives derived from nouns, verbs, numerals, etc. They correspond to the English adjectival suffixes, such as *-ish, -(l)y, -ful, -able, -fold, -en,* etc.

EXAMPLES:

-ալի	**սոսկալ** *to dread*	→ **սոսկալի** *dreadful*
-ելի	**ատել** *to hate*	→ **ատելի** *detestable*
-ական	**օր** *day*	→ **օրական** *daily*
-եկան	**չահ** *profit*	→ **չահեկան** *profitable*
-ակի	**բազում** *many*	→ **բազմակի** *manyfold*
-ային	**օդ** *air*	→ **օդային** *aerial*
-ատ	**գույն** *color*	→ **գունատ** *pale*
-ավետ	**բույր** *scent*	→ **բուրավետ** *fragrant*
-ավոր	**մեղք** *guilt, sin*	→ **մեղավոր** *guilty, sinful*
-եվոր	**ունենալ** *to have*	→ **ունևոր** *wealthy*
-ավուն	**կարմիր** *red*	→ **կարմրավուն** *reddish*
-ե	**փայտ** *wood*	→ **փայտե** *wooden*
-յա	**ապակի** *glass*	→ **ապակյա** *made of glass*
-եղ	**ուժ** *strength*	→ **ուժեղ** *strong*
-ենի	**մայր** *mother*	→ **մայրենի** *maternal*
-իչ	**հուզել** *to move*	→ **հուզիչ** *moving (emotionally)*
-ոտ	**յուղ** *grease*	→ **յուղոտ** *greasy, fat*
-կոտ	**վախ** *fear*	→ **վախկոտ** *fearful, faint-hearted*
-յալ	**որակել** *to qualify*	→ **որակյալ** *qualified, high-quality*
-յան	**արևելք** *East*	→ **արևելյան** *Eastern*
-ու	**հատել** *to cut*	→ **հատու** *sharp*
-ուն	**հնչել** *to sound*	→ **հնչուն** *sounding,*

VIII PRONUNCIATION

Armenian 'diphthongs'

Diphthongs are defined as the combination of two vowels that are pronounced as a complex but unsegmentable, gliding speech sound that makes up one syllable. For instance, the English *ai* in *pain, oy* in *toy, oa* in *boat,* etc. Armenian does not have diphthongs in the classical sense of the term. It combines, however, one vowel (ա, ե, ո, ու) with the semi-vowel յ to produce a sequence of two sounds that can in some positions within words be perceived as one syllable. There are two such sound combinations:

a) vowel+յ

այ [áy]: բայ [báy] *verb,* այծ [áyʦ] *goat,* ձայն [ʣáyn] *voice*
եյ [éy]: թեյ [tʰéy] *tea,* հե՛յ [héy] *hey! (exclamation)*
ոյ [óy]: խոյ [kẖóy] *ram,* Նոյ [Nóy] *Noah*
ույ [úy]: լույս [lúys] *light,* բույն [búyn] *nest,* քույր [kʰúyr] *sister*

b) յ+vowel

յա [ya]: յամբ [yamb] *iamb,* կյանք [kyankʰ] *life,* կայան [kayan] *station,* etc.
յե [ye]: ես [yes] *I,* և [yev] *and,* վայելել [vayelel] *to enjoy,* etc.
յի [yi]: կգայի [kᵊgayi] *I would come,* մարդկային [martʰkayin] *human,* etc.
յո [yo]: յոթ [yotʰ] *seven,* արդյոք [artʰyokʰ] *who knows?,* etc.
յու [yu]: յուղ [yugh] *oil,* հյուր [hyur] *guest,* արդյունք [artʰyunkʰ] *result,* etc.
յը [yə]: բայը [bayə] *the verb,* խոյը [kẖoyə] *the ram,* etc.

Of the two groups of sound combinations listed above, those under (a), i.e. vowel+յ, are closest to sounds commonly known as diphthongs. However, these sound combinations can be easily segmented in Armenian, whereas in English they cannot. This occurs when new syllables starting with another vowel are added and the stress is shifted to the next syllable. In this case, according to Armenian hyphenation rules, the vowels are separated from յ. Compare: բայ [báy] *verb* - բա-յեր [ba-yér] *verbs,* թեյ [tʰéy] *tea* - թե-յի [tʰe-yí] *of the tea,* Նո-յան Տապան [No-yan Tapan] *Noah's Ark,* etc.

This is how the sound combinations listed above under (b), i.e. յ+vowel, can be generated:

Հա-յաստան [Ha-yastan] *Armenia*	from հայ [hay] *Armenian*
հա-յեր [ha-yer] *Armenians*	—«»—
հա-յորդի [ha-yortʰi] *son of an Armenian*	—«»—
հա-յություն [ha-yutʰyun] *Armenian race*	—«»—
հա-յը [ha-yə] *the Armenian (person)*	—«»—

IX ORTHOGRAPHY

The spelling of Armenian 'diphthongs'

In addition to the combinations այ, եյ, ոյ, ույ, diphthong-like compound sounds [ey], [ye], [oy], [yo], etc., (see previous page) can result from a variety of other spellings. Here are the most common ones:

[ey] is spelled not only եյ but also էյ in initial position of words of foreign origin (cf. էյֆել *Eiffel)*

[oy] is spelled not only ոյ but also օյ in initial position of words of foreign origin (cf. Օյստրախ *Oistrakh)*

[ya] is mostly spelled յա, but also իա as in օվկիանոս [ovkyanos] *ocean,* հեքիաթ [hekʰyat] *fairy tale* and եա in հրեա [hᵊrya] *Jew,* etc.

[ye] is predominantly spelled ե in initial position and յե within words (cf. նայել), but also as իե as in Վիետնամ [Vyetnam] *Vietnam,* պրեմիեր [premyer] *premier,* etc.

[yi] is mostly spelled յի after ա (cf. ամայի). It also appears in word forms such as էի [eyi] *I was,* կասեի [kaseyi] *I would say,* etc., and in some proper names after ա followed by ի: Նաիրի [Nayiri], Այիդա [Ayida], etc.

[yo] is normally spelled յո (cf. յոթ), but also իո as in ռադիո [ṙadyo] *radio,* as well as in certain word forms such as րոպեով [ropeyov] *with/by the minute,* ձիով [ʤiyov] *by horse,* etc.

[yu] is regularly spelled յու (cf. ձյուն), but also իու as in ամոնիումի [amonyum] *amonium,* ցելսիուս [tsʰelsyus] *Celsius,* etc. It also occurs before the suffix of abstract nouns -ուիթյուն as in մարգարեուիթյուն [markareyutʰyun] *prophecy,* խաբեուիթյուն [kʰapʰeyutʰyun] *fraud,* etc.

[yə] never occurs initially and medially in Armenian words. It appears only in final position when the definite article ը is added to nouns ending in -յ: թեյը [teyə] *the tea,* հայը [hayə] *the Armenian (person),* etc. The sound combination յը [yə] is never stressed (see Unit 1, p. 17).

All above-mentioned two-sound sequences are segmentable into two syllables and therefore cannot be considered diphthongs: մի-ակ [mi-yak] *the only,* հրե-ա [hᵊr-ya] *Jew,* տի-եզերք [ti-ye-zerkʰ] *universe,* ձի-ավոր [ʤi-ya-vor] *rider,* մի-ությունն [mi-yutʰyun] *union,* Ուկրա-ինա [Ukra-yi-na] *Ukraine,* Նաիրի [Na-yi-ri], ստադիոն [stadi-yon], ձիով [ʤi-yov], etc.

X EXERCISES

1. Combine words from the left column with appropriate words from the right column.

a. *Այս տունը նոր է,*	*այն աղջկանից ավելի գեղեցիկ է։*
b. *Այս աղջիկը*	*երիտասարդներից ավելի ուժեղ է։*
c. *Նույնքան ուրախ եմ*	*ամենաբարձր թռչակը ստացավ։*
d. *Նոր ուսանողը*	*բայց հայրս էլ չատ առողջ չէ։*
e. *Այս ծեր մարդը*	*որքան որ դու։*
f. *Սա ամենաթանկ*	*բայց մյուսը ավելի նոր է։*
g. *Մայրս հիվանդ է,*	*տներից մեկն է։*

2. Form mini-dialogues according to the patterns in a, b, c, and d. Replace the items *տնօրեն/երիտասարդ* ***with*** *աշակերտ/աշխատասեր, ուսանող/խելացի, օգնական/մաքրասեր, աշխատողը/լուրջ,* ***etc.***

a. A. *Այնտեղ կանգնած է մեր նոր տնօրենը։*
B. *Ձեր տնօրենն այսքան երիտասա՞րդ է։*

b. A. *Նոր տնօրենի հետ ծանոթացա՞ր։*
B. *Այո՛, որքա՛ն երիտասարդ է։*

c. A. *Մեր նոր տնօրենին տեսա՞ր։ Հավանո՞ւմ ես։*
B. *Այո՛, չատ ավելի երիտասարդ է, քան մերը։*

d. A. *Ո՞րն է ձեր տնօրենը։*
B. *Ամենից երիտասարդը։*

3. Answer the questions, using antonyms. Follow the pattern.

a. *Այս չենքը չատ հին է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ նոր է։*
b. *Այս աղջիկը գեղեցիկ է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ ...*
c. *Ուսանողը խելացի է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ ...*
d. *Այս հարցը կարևոր է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ ...*
e. *Հայերենը դժվար է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ ...*
f. *Այս դասը հետաքրքրական է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ ...*
g. *Արմենը մի քիչ ծուլ է, չէ՞։ Ո՛չ, ընդհակառակը՝ ...*

4. Answer the questions according to the pattern.

a. *Այս գիրքը թա՞նկ է։ Այո՛, ավելի թանկ է, քան կարծում էի։ Ամենաթանկ գրքերից է։*
b. *Այս աշակերտն աշխատասե՞ր է։ Այո՛, ավելի ...*

c. *Այս խմորեղենը համե՞ղ է։ Այո՛, ...*
d. *Այս բժիշկը լա՞վն է։ Այո՛, ...*
e. *Տունը հի՞ն է։ Այո՛, ...*
f. *Սենյակը լուսավո՞ր է։ Այո՛, ...*
g. *Դասը դժվա՞ր է։ Այո՛, ...*
h. *Հայերենը հե՞շտ լեզու է։ Այո՛, ...*

5. Use the nominalized infinitive according to the pattern.

a. *Սիրում եմ կարդալ։ Կարդալ սիրելս բոլորը գիտեն։*
b. *Նա միշտ ուշանում է։ Նրա միշտ ... ինձ նեղացնում է։*
c. *Հայաստանի մրգերը համե՞ղ են։ Հայաստանի մրգերի համեղ ... ես գիտեի։*
d. *Այս մարդը շատ վկայականներ ունի։ Այս մարդու վկայական ... կարևոր չէ։*
e. *Դու սենյակ մտա՞ր։ Սենյակ ... չտեսա։*
f. *Նա շատ քաղաքավարի է։ Նրա քաղաքավարի ... կարևոր է։*
g. *Բժիշկ կանչեցի։ Բժիշկ ... օգնեց։*

6. Replace the words in boldtype with personal pronouns in the appropriate case.

a. *Այդ մարդը **աշխատակիցս** է։ Ես **նրան** վաղուց եմ ճանաչում։*
b. *Մեր **կատուն** ծեր է, այլևս մուկ չի բռնում, բայց մենք ... չատ ենք սիրում։*
c. *Երեխաները եկան։ Դու ... տեսա՞ր։*
d. *Այդ **կինը** ուսուցչուհիս է։ Ես ... էի սպասում։*
e. *Շունը հաչում է։ Ես ... վախենում եմ։*
f. *Գիտնականը օգնական է փնտրում։ ... վկայականները կարևոր չեն։*
g. *Ընկերուհիս չատ լեզուներ գիտի, բայց ... մայրենի լեզուն հայերենն է։*

7. Insert the appropriate forms of the verbs եմ, լինեմ or կամ.

a. *Մտածում եմ, ուրեմն ...* (I exist)
b. *Այս քաղաքի մեջ լավ թատրոններ ...* (there are no)
c. *Կիրակի օրերը նա տանը ...* ([usually] is not)
d. *Եթե հիմա գնաս, նա այնտեղ ...* (is expected to be)
e. *Փողոցներում չատ մարդիկ ...* (there are)
f. *Քանի՞ ուսանող դասի ...* (are usually) *ամեն օր։*
g. *Եթե մեզ փնտրեն, մենք այստեղ ...* (are not)

8. Complete the sentences following the pattern.

a. *Ինչո՞ւ չխոսեցիր։ Պետք է խոսեիր։*

b. *Ինչո՞ւ չգնեցիր։ Պետք է ...*
c. *Մեքենան չնկատեցի։ Պետք է ...*
d. *Կրկին ուշացար։ Ջպետք է ուշանայիր։*
e. *Ամմենը չուտ գնաց քնելու։ Ջպետք է ...*
f. *Շատ կերա։ Ջպետք է ...*
g. *Ամմենը չատ խմեց։ Ջպետք է ...*

9. How would you say it in Armenian?

a. Describe the appearance of your best friend.
b. Describe the character of your best friend.
c. Describe yourself.

10. You would like to know.

You have missed your first Armenian class.

You ask : i) a fellow student
ii) an older participant in the course

a. About the instructor
b. About the classroom
c. About the group
d. About the textbook(s)
e. About the assignments
f. About the next class

11. Answer the following questions with reference to the TEXT in this unit.

a. *Ո՞ւմ էր փնտրում գիտնականը։*
b. *Գիտնականը գտա՞վ մեկին։*
c. *Ի՞նչ հարցրեց գիտնականին նրա բարեկամներից մեկը։*
d. *Ի՞նչ արեց երիտասարդը սպասասրահում։*
e. *Ի՞նչ արեց երիտասարդը գիտնականի սենյակ մտնելուց առաջ։*
f. *Ինչպիսի՞ պատասխաններ տվեց երիտասարդը։*
g. *Ինչո՞ւ երիտասարդը բնութագիր չուներ։*
h. *Ինչպիսի՞ հույսեր ուներ երիտասարդը։*

XI PROVERBS

Լավ է գիտունին գերի, քան անգետին սիրելի։
[Lav e gitunin geri, kʰan angetin sireli]
Better to be a wise man's slave than a fool's friend.

Շատ անուշ է, տակը փուշ է։
[Sha̱t anusha̱ e, takə pʰusha̱ e]
(If) it's very sweet, there's a thorn underneath.
(Message: Beware of two-faced people.)

Անուշ լեզուն մեղրից անուշ է։
[Anusha̱ lezun megha̱rit͡sʰ anusha̱ e]
A sweet tongue is sweeter than honey.

Շատ լավը փնտրողը չատ վատին կհանդիպի։
[Sha̱t lavə pʰəntrogha̱ sha̱t vatin kʰəhandipi]
He who searches for the best will encounter the worst.

Unit 9



On the Agenda ...

Speech Acts in Dialogues:	Discussing weather	.198
Vocabulary:	Nature, flowers, trees, animals	.202
Grammar:	VERBS: 1. Resultative constructions	.205
	2. Two-part verbs or phrasal verbs	.207
	NOUNS: The locative case	.209
	PRONOUNS: Interrogative and relative pronouns	.210
Armenian-English Contrasts:	The relative pronoun որ(ը)	.211
Word formation:	Formation of adverbs	.212
Pronunciation:	Connecting words that belong together (liaison)	.213
Orthography:	Hyphenation in Armenian	.215

I DIALOGUES

A and B are roommates discussing the weather.

1. IN SPRING

A.	*Ի՛նչ հիանալի եղանակ է այսօր։* [Inch^{h} hianali yeghanak e aysor!]	What wonderful weather we are having today!
B.	*Վերջապես գարուն է։ Ծառերը* [Verch^{h}apes, garun e. Tsa῾rerə]	Finally, it's spring. The trees
	կանաչել են, ծաղիկները՝ բացվել։ [kanach^{h}el en, tsaghiknerə bats^{h}vel]	have become green, flowers have opened.
A.	*Այս տարվա ձմեռը մի քիչ* [Ays tarva dz^{ə}me῾rə mi k^{h}ich^{h}]	This past winter lasted a bit too
	երկար էր։ Արևին կարոտ մնացինք։ [yerkar er. Arevin karot m^{ə}nats^{h}ink^{h}]	long. We've missed the sun.
B.	*Բայց չուտով շոգն սկսվելու է։* [Bayts^{h} shutov shok^{h}n ^{ə}sk^{ə}svelu e]	But soon the hot weather will start.
A.	*Ի՛նչ կարճ է Հայաստանի գարունը։* [Inch^{h} karch e Hayastani garunə!]	Spring in Armenia is so short!

2. IN SUMMER

A.	*Ի՛նչ տաք է այստեղ։* [Inch^{h} tak^{h} e aystegh!]	It's so hot in here!
	Պատուհանը չբացե՞նք։ [Patuhanə ch^{h} ^{ə}bats^{h}enk^{h}?]	Shouldn't we open the window?
B.	*Ո՛չ, դրսում ավելի տաք է։* [Voch^{h}, d^{ə}rsum aveli tak^{h} e]	No, it's warmer outside.
A.	*Բայց այնտեղ օդն ավելի մաքուր է։* [Bayts^{h} ayntegh ot^{h}n aveli mak^{h}ur e]	But the air is fresher out there.
B.	*Այո՛, բայց այսօր խոնավ է։* [Ayo, bayts^{h} aysor khonav e]	Yes, but it's humid today.

3. IN FALL

A.	*Դո՞ւրս ես գալիս։* [Durs es galis?]	Are you going out?
B.	*Այո՛, պետք է գրասենյակ գնամ։* [Ayo, petk^{h} e g^{ə}rasenyak g^{ə}nam]	Yes, I have to go to my office.

A. *Անձրև է գալու։ Նայի՛ր ամպերին։*
[Andzrev e galu. Nayir amperin]
It's going to rain. Look at the clouds!

B. *Ոչի՛նչ, անձրևանոց ունեմ։*
[Voch'inch', andzrevanots' unem]
No problem, I have an umbrella.

A. *Որոտում է, լսո՞ւմ ես։*
[Vorotum e, lˇsum es?]
There is thunder, can you hear it?

Տաք հագի՛ր, ցուրտ է։
[Tak hakir, ts'urt e]
Put something warm on, it's cold.

B. *Ջեմ մրսում։*
[Indz hamar ts'urt ch'e]
I don't feel cold.

Սիրում եմ զով եղանակը։
[Sirum em zov yeghanakə!]
I like cool weather.

4. IN WINTER

A. *Այսօր շատ ցուրտ է, մրսում եմ։*
[Aysor shat ts'urt e, mˇrsum em]
It's very chilly today, I'm cold.

B. *Տասն աստիճան զրոյից ցածր է։*
[Tasn astichan zˇroyits' ts'atsˇr e]
It's ten degrees below zero.

Եվ ի՛նչ ուժեղ քամի է։
[Yev inch' uzhegh k'ami e!]
And what a strong wind!

Կարծես ձյուն է գալու։
[Kartses dzyun e galu]
It looks like it will snow.

A. *Մի՛ ասա, նորի՞ց ձյուն։*
[Mi asa, norits' dzyun?]
Don't tell me it's going to snow again.

B. *Մի՛ գանգատվի՛ր։*
[Mi gangatvir!]
Don't complain!

Այս տարի ձմեռը մեղմ է։
[Ays tari dzˇmeṙə meghm e]
Winter is mild this year.

A. *Իրավացի ես։ Միշտ նույնն է.*
[Irava'ts'i es. Misht nuynn e]
You're right. It's always the same:

Ամռանը ձմեռ ենք փնտրում,
[Amṙanə dzˇmeṙ enk' p'ˇntrum,]
In summer we long for winter,

ձմռանը՝ ամառ։
[dzˇmṙanə amaṙ]
and in winter we long for summer.

II TEXT

ՃՇՄԱՐԻՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Տերևախիտ մի ծառ կար անտառի մեջ։ Մի օր նրա տերևները սկսեցին դեղնել։ Հետո բոլորը ոսկեգույն դարձան ու մեկ-մեկ գետին ընկան։ Աչունն էր, որ կամաց-կամաց թափել էր ծառի տերևները։

Մի օր էլ ձյուն եկավ, ու նրա փաթիլները ծածկեցին մերկացած ճյուղերը փափուկ վերմակի պես։ Սա էլ ձմեռն էր, որ ձյունով ծածկել էր ծառը։

Հետո ձյունն անհետացավ, ու մեղմ մի հովիկ չոյեց քնած ճյուղերը։ Ապա արևը ծագեց ու համբուրեց ճյուղերը, որոնք ծածկվեցին բողբոջներով։ Նրանցից դուրս եկան սիրուն տերևներ ու ծաղիկներ։ Գարունն էր, որ ծառին հագցրել էր նոր հագուստներ։

Ի վերջո այդ ծառից կախվեցին պտուղներ, որոնք պես-պես գույներով փայլում էին արևի տակ։ Եկան երեխաներ և մեկ առ մեկ պոկեցին պտուղները։ Ամառն էր, որ ծառին տվել էր ոսկի պտուղներ։

Բայց պատմությունը այստեղ չի վերջանում, քանի որ այն ամեն տարի կրկնվում է։

ԳԱՐՆԱՆ ԿԱՐՈՏ

Կարոտել ենք քեզ, գեղեցի՛կ գարուն,
Շու՛տ արի մեզ մոտ, բե՛ր տաքուկ օրեր,
Բե՛ր պայծառ արև, բե՛ր ծաղիկ սիրուն,
Բե՛ր երգող թռչուն, բե՛ր կանաչ դաշտեր։
Բա՛ց մեր սրտերը, դուռ ու պատուհան,
Թող բացվեն, ծաղկեն վարդ, մեխակ, չուչան։
Փակ սենյակներից դուրս գանք, ազատվենք,
Կանաչ դաշտ գնանք, խաղանք, ցատկոտենք։

III NEW WORDS AND EXPRESSIONS

ճշմարիտ	[cʰəšmarit]	*true, genuine*
պատմություն	[patmutʰyun]	*story*
տերևախիտ	[terevaxit]	*full of leaves*
ծառ	[tsar]	*tree*
անտառ	[antar]	*forest*
տերև	[terev]	*leaf*
սկսել	[skəsel]	*to start*
դեղնել	[deġnel]	*to turn yellow*
հետո	[heto]	*after, then*
բոլորը	[bolorə]	*all of them*
ոսկեգույն	[voskeguyn]	*gold-colored*
դառնալ	[darnal]	*to become*
մեկ-մեկ	[mek-mek]	*one-by-one*
գետին	[getin]	*ground*
ընկնել	[ənknel]	*to fall*
աշուն	[ašun]	*autumn*
կամաց-կամաց	[kamatsʰ-kamatsʰ]	*slowly*
թափել	[tʰapʰel]	*to pour*
մի օր էլ	[mi or el]	*and one day*
ձյուն	[ʒyun]	*snow*
փաթիլ	[pʰatʰil]	*flake*
ծածկել	[tsatskel]	*to cover*
մերկացած	[merkatsʰatʃ]	*naked*
ճյուղ	[cʰyuġ]	*branch*
փափուկ	[pʰapʰuk]	*soft*
վերմակ	[vermak]	*blanket*
պես	[pes]	*like*
ձմեռ	[ʒməreṙ]	*winter*
անհետանալ	[anhetanal]	*to disappear*
մեղմ	[meġm]	*mild*
հով(իկ)	[hov(ik)]	*wind*
շոյել	[šoyel]	*to caress*
քնած	[kʰənatʃ]	*asleep*
արև	[arev]	*sun*
ծագել	[tsakʰel]	*to rise*
համբուրել	[hampʰurel]	*to kiss*
ծածկվել	[tsatskəvel]	*to get covered*
բողբոջ	[boġboj]	*bud*
սիրուն	[sirun]	*pretty*
ծաղիկ	[tsaġik]	*flower*
հագցնել	[hagtsʰənel]	*to dress*
ի վերջո	[i verčʰo]	*finally*
կախվել	[kaxvel]	*to hang*
պտուղ	[pətuġ]	*fruit*
պես-պես	[pes-pes]	*various*
փայլել	[pʰaylel]	*to shine*
պոկել	[pokel]	*to pick*
ամառ	[amar]	*summer*
ոսկի	[voski]	*gold(en)*
վերջանալ	[verčʰanal]	*to end*
քանի որ	[kʰani vor]	*since*
կրկնվել	[kərkənvel]	*to repeat itself*
կարոտել	[karotel]	*to miss*
գեղեցիկ	[geġetsʰik]	*beautiful*
գարուն	[garun]	*spring*
չուտ արի	[šut ari]	*come soon!*
բերել	[berel]	*to bring*
տաք(ուկ)	[takʰ(uk)]	*warm*
պայծառ	[paytsar]	*bright*
երգող	[yerkoġ]	*singing*
թռչուն	[tʰəṙčʰun]	*bird*
դաշտ	[dašt]	*field*
բացել	[batsʰel]	*to open*
թող	[tʰoġ]	*may, let*
բացվել	[batsʰvel]	*to open up*
ծաղկել	[tsaġkel]	*to bloom*
վարդ	[vartʰ]	*rose*
մեխակ	[mexak]	*carnation*
շուշան	[šušan]	*lily*
փակ	[pʰak]	*close*
ազատվել	[azatvel]	*to break away*
ցատկոտել	[tsʰatkotel]	*to jump around*

IV THEMATIC GROUP OF WORDS

ԵՂԱՆԱԿ	[Yeghanak]	WEATHER
ամպ(եր)	[amp(er)]	*cloud(s)*
մշուշ/մառախուղ	[mᵊshush/marakhugh]	*fog*
կարկուտ	[karkut]	*hail*
սառույց	[saṙuytsʰ]	*ice*
կայծակ	[kaytsak]	*lightning*
անձրև	[andzrev]	*rain*
ծիածան	[tsiatsan]	*rainbow*
որոտ	[vorot]	*thunder*
երկինք	[yerkinkʰ]	*sky*
ձյուն	[dzyun]	*snow*
փոթորիկ/ձյունամրրիկ	[pʰotʰorik/dzyunamᵊrrik]	*storm/snowstorm*
արև	[arev]	*sun*
քամի	[kʰami]	*wind*
ԾԱՂԻԿՆԵՐ	[Tsaghikner]	**FLOWERS**
աստղածաղիկ	[astghatsaghik]	*aster*
մեխակ	[mekhak]	*carnation*
մարգարտածաղիկ	[margartatsaghik]	*daisy*
հասմիկ	[hasmik]	*jasmine*
շուշան	[shushan]	*lily*
հովտաշուշան	[hovtashushan]	*lily of the valley*
վարդ	[vartʰ]	*rose*
կակաչ	[kakachʰ]	*tulip*
ԾԱՌԵՐ	[Tsarer]	**TREES**
նշենի	[nᵊsheni]	*almond tree*
խնձորենի	[khᵊndzoreni]	*apple tree*
ծիրանենի	[tsiraneni]	*apricot tree*
կեչի	[kechʰi]	*birch*
բալենի	[baleni]	*cherry tree*

նոճի	[noǰi]	*cypress*
թխկենի/թխկի	[tʰəkʰkeni/tʰəkʰki]	*maple tree*
կաղնի	[kaġni]	*oak tree*
արմավենի	[armaveni]	*palm tree*
տանձենի	[tandzeni]	*pear tree*
եղևնի	[yeġevni]	*pine tree*
սալորենի	[saloreni]	*plum tree*
նռնենի	[nəṙneni]	*pomegranate tree*
բարդի	[bardi]	*poplar*
կեռասենի	[keṙaseni]	*cherry tree*
ընկուզենի	[ənkuzeni]	*walnut tree*
ուռենի	[uṙeni]	*willow*
ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ	[Əntani kentʰaniner]	**DOMESTIC ANIMALS**
գոմեշ	[gomeš]	*buffalo*
հորթ	[hortʰ]	*calf*
կատու	[katu]	*cat*
կով	[kov]	*cow*
շուն	[šun]	*dog*
էշ/ավանակ	[eš/avanak]	*donkey*
այծ	[ayts]	*goat*
ձի	[dzi]	*horse*
գառ(նուկ)	[gaṙ(nuk)]	*lamb*
խոզ	[kʰoz]	*pig*
ճագար	[čʰagar]	*rabbit*
ոչխար	[voč^ʰkʰar]	*sheep*
ՏՆԱՅԻՆ ԹՌՉՈՒՆՆԵՐ	[Tənayin tʰəṙčʰunner]	**DOMESTIC BIRDS**
դեղձանիկ	[deġtsʰanik]	*canary*
ճուտ	[čʰut]	*chick*
աղավնի	[aġavni]	*dove, pigeon*
բադ	[bad]	*duck*
սագ	[sag]	*goose*

հավ	[hav]	*hen*
աքաղաղ/աքլոր	[akʰaġhaġh/akʰlor]	*rooster, cock*
հնդկահավ	[hᵊndkahav]	*turkey*
թութակ	[tʰutʰak]	*parrot*
սիրամարգ	[siramarg]	*peacock*
ՎԱՅՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐ	[Vayri tʰᵊṙčʰunner]	**WILD BIRDS**
ագռավ	[agṙav]	*crow*
արծիվ	[arʦiv]	*eagle*
բազե	[baze]	*falcon*
կաչաղակ	[kačʰaġhak]	*magpie*
սոխակ	[soḵhak]	*nightingale*
բու	[bu]	*owl*
կաքավ	[kakʰav]	*partridge*
լոր(իկ)	[lor(ik)]	*quail*
ճնճղուկ	[čʰᵊnčʰᵊġhuk]	*sparrow*
սարյակ	[saryak]	*starling*
արագիլ	[aragil]	*stork*
ծիծեռնակ	[ʦiʦeṙnak]	*swallow*
անգղ	[angᵊġh]	*vulture*
փայտփորիկ	[pʰaytpʰorik]	*woodpecker*
ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ	[Vayri kentʰaniner]	**WILD ANIMALS**
արջ	[arčʰ]	*bear*
փիղ	[pʰiġh]	*elephant*
աղվես	[aġhves]	*fox*
ընձուղտ	[ənʤuġht]	*giraffe*
նապաստակ	[napastak]	*hare*
առյուծ	[aṙyuʦ]	*lion*
կապիկ	[kapik]	*monkey*
ռնգեղջյուր	[ṙᵊngeġhjyur]	*rhinoceros*
վագր	[vagᵊr]	*tiger*
գայլ	[gayl]	*wolf*

V GRAMMAR

A. VERBS

1. Resultative constructions

(դուք)	չէիք	վազում	չէիք	խաղում	չէիք	ուտում
(նրանք)	չէին	վազում	չէին	խաղում	չէին	ուտում
Aorist						
(ես)	չվազեցի		չխաղացի		չկերա	
(դու)	չվազեցիր		չխաղացիր		չկերար	
(նա)	չվազեց		չխաղաց		չկերավ	
(մենք)	չվազեցինք		չխաղացինք		չկերանք	
(դուք)	չվազեցիք		չխաղացիք		չկերաք	
(նրանք)	չվազեցին		չխաղացին		չկերան	
Perfect						
(ես)	չեմ	վազել	չեմ	խաղացել	չեմ	կերել
(դու)	չես	վազել	չես	խաղացել	չես	կերել
(նա)	չի	վազել	չի	խաղացել	չի	կերել
(մենք)	չենք	վազել	չենք	խաղացել	չենք	կերել
(դուք)	չեք	վազել	չեք	խաղացել	չեք	կերել
(նրանք)	չեն	վազել	չեն	խաղացել	չեն	կերել
Pluperfect						
(ես)	չէի	վազել	չէի	խաղացել	չէի	կերել
(դու)	չէիր	վազել	չէիր	խաղացել	չէիր	կերել
(նա)	չէր	վազել	չէր	խաղացել	չէր	կերել
(մենք)	չէինք	վազել	չէինք	խաղացել	չէինք	կերել
(դուք)	չէիք	վազել	չէիք	խաղացել	չէիք	կերել
(նրանք)	չէին	վազել	չէին	խաղացել	չէին	կերել

Future

(ես)	չեմ վազելու	չեմ խաղալու	չեմ ուտելու
(դու)	չես վազելու	չես խաղալու	չես ուտելու
(նա)	չի վազելու	չի խաղալու	չի ուտելու
(մենք)	չենք վազելու	չենք խաղալու	չենք ուտելու
(դուք)	չեք վազելու	չեք խաղալու	չեք ուտելու
(նրանք)	չեն վազելու	չեն խաղալու	չեն ուտելու

Future Imperfect

(ես)	չէի վազելու	չէի խաղալու	չէի ուտելու
(դու)	չէիր վազելու	չէիր խաղալու	չէիր ուտելու
(նա)	չէր վազելու	չէր խաղալու	չէր ուտելու
(մենք)	չէինք վազելու	չէինք խաղալու	չէինք ուտելու
(դուք)	չէիք վազելու	չէիք խաղալու	չէիք ուտելու
(նրանք)	չէին վազելու	չէին խաղալու	չէին ուտելու

Mandative Future

(ես)	չպիտի վազեմ	չպիտի խաղամ	չպիտի ուտեմ
(դու)	չպիտի վազես	չպիտի խաղաս	չպիտի ուտես
(նա)	չպիտի վազի	չպիտի խաղա	չպիտի ուտի
(մենք)	չպիտի վազենք	չպիտի խաղանք	չպիտի ուտենք
(դուք)	չպիտի վազեք	չպիտի խաղաք	չպիտի ուտեք
(նրանք)	չպիտի վազեն	չպիտի խաղան	չպիտի ուտեն

Mandative Past

(ես)	չպիտի վազեի	չպիտի խաղայի	չպիտի ուտեի
(դու)	չպիտի վազեիր	չպիտի խաղայիր	չպիտի ուտեիր
(նա)	չպիտի վազեր	չպիտի խաղար	չպիտի ուտեր
(մենք)	չպիտի վազեինք	չպիտի խաղայինք	չպիտի ուտեինք
(դուք)	չպիտի վազեիք	չպիտի խաղայիք	չպիտի ուտեիք
(նրանք)	չպիտի վազեին	չպիտի խաղային	չպիտի ուտեին

IMPERATIVE MOOD (Prohibitive)

Prohibitive 2nd pers. sing.:	մի՛ վազիր	մի՛ խաղա	մի՛ կեր
Prohibitive 2nd pers. plur.:	մի՛ վազեք	մի՛ խաղացեք	մի՛ կերեք
Inclusive plural:	չվազե՛նք	չխաղա՛նք	չուտե՛նք

Hypothetical Future

(ես)	չեմ	վազի	չեմ	խաղա	չեմ ուտի
(դու)	չես	վազի	չես	խաղա	չես ուտի
(նա)	չի	վազի	չի	խաղա	չի ուտի
(մենք)	չենք	վազի	չենք	խաղա	չենք ուտի
(դուք)	չեք	վազի	չեք	խաղա	չեք ուտի
(նրանք)	չեն	վազի	չեն	խաղա	չեն ուտի

Hypothetical Past

(ես)	չէի	վազի	չէի	խաղա	չէի ուտի
(դու)	չէիր	վազի	չէիր	խաղա	չէիր ուտի
(նա)	չէր	վազի	չէր	խաղա	չէր ուտի
(մենք)	չէինք	վազի	չէինք	խաղա	չէինք ուտի
(դուք)	չէիք	վազի	չէիք	խաղա	չէիք ուտի
(նրանք)	չէին	վազի	չէին	խաղա	չէին ուտի

SUBJUNCTIVE MOOD (Negative)

Subjunctive Future

(ես)	չվազեմ	չխաղամ	չուտեմ
(դու)	չվազես	չխաղաս	չուտես
(նա)	չվազի	չխաղա	չուտի
(մենք)	չվազենք	չխաղանք	չուտենք
(դուք)	չվազեք	չխաղաք	չուտեք
(նրանք)	չվազեն	չխաղան	չուտեն

Subjunctive Past

(ես)	չվազեի	չխաղայի	չուտեի
(դու)	չվազեիր	չխաղայիր	չուտեիր
(նա)	չվազեր	չխաղար	չուտեր
(մենք)	չվազեինք	չխաղայինք	չուտեինք
(դուք)	չվազեիք	չխաղայիք	չուտեիք
(նրանք)	չվազեին	չխաղային	չուտեին

Infinite Forms

Infinitive:	չվազել	չխաղալ	չուտել
Present participle:	չվազող	չխաղացող	չուտող
Past participle:	չվազած	չխաղացած	չկերած
Future participle:	չվազելու	չխաղալու	չուտելու

CONJUGATION OF THE IRREGULAR VERB
ԵՄ and *ԼԻՆԵԼ*
INDICATIVE MOOD (Affirmative)

	Present		Imperfect	
(ես)	եմ	լինում եմ	էի	լինում էի
(դու)	ես	լինում ես	էիր	լինում էիր
(նա)	է	լինում է	էր	լինում էր
(մենք)	ենք	լինում ենք	էինք	լինում էինք
(դուք)	եք	լինում եք	էիք	լինում էիք
(նրանք)	են	լինում են	էին	լինում էին

	Aorist	Perfect	Pluperfect
(ես)	եղա	եղել եմ	եղել էի
(դու)	եղար	եղել ես	եղել էիր
(նա)	եղավ	եղել է	եղել էր
(մենք)	եղանք	եղել ենք	եղել էինք
(դուք)	եղաք	եղել եք	եղել էիք
(նրանք)	եղան	եղել են	եղել էին

	Future	Future Imperfect
(ես)	լինելու եմ	լինելու էի
(դու)	լինելու ես	լինելու էիր
(նա)	լինելու է	լինելու էր
(մենք)	լինելու ենք	լինելու էինք
(դուք)	լինելու եք	լինելու էիք
(նրանք)	լինելու են	լինելու էին

	Mandative future	Mandative Past
(ես)	պիտի լինեմ	պիտի լինեի
(դու)	պիտի լինես	պիտի լինեիր
(նա)	պիտի լինի	պիտի լիներ
(մենք)	պիտի լինենք	պիտի լինեինք
(դուք)	պիտի լինեք	պիտի լինեիք
(նրանք)	պիտի լինեն	պիտի լինեին

Infinite Forms		IMPERATIVE MOOD	
Infinitive	լինել	Assertive 2nd person singular:	եղի՛ր
Present participle	եղող	Assertive 2nd person plural:	եղե՛ք
Past participle	եղած	Assertive 3nd person singular:	թող լինի
Future participle	լինելիք	Assertive 3nd person plural:	թող լինեն
Synchronic participle	լինելիս	Inclusive plural:	լինե՛նք

Hypothetical Future		Hypothetical Past
(ես)	կլինեմ	կլինեի
(դու)	կլինես	կլինեիր
(նա)	կլինի	կլիներ
(մենք)	կլինենք	կլինեինք
(դուք)	կլինեք	կլինեիք
(նրանք)	կլինեն	կլինեին

Subjunctive Future		Subjunctive Past
(ես)	լինեմ	լինեի
(դու)	լինես	լինեիր
(նա)	լինի	լիներ
(մենք)	լինենք	լինեինք
(դուք)	լինեք	լինեիք
(նրանք)	լինեն	լինեին

INDIMATIVE MOOD (Negative)
ԵՄ and *ԼԻՆԵԼ*

	Present		Imperfect	
(ես)	չեմ	չեմ լինի	չէի	չէի լինի
(դու)	չես	չես լինի	չէիր	չէիր լինի
(նա)	չէ/չի	չի լինի	չէր	չէր լինի
(մենք)	չենք	չենք լինի	չէինք	չէինք լինի
(դուք)	չեք	չեք լինի	չէիք	չէիք լինի
(նրանք)	չեն	չեն լինի	չէին	չէին լինի

	Aorist	Perfect	Pluperfect
(ես)	չեղա	չեմ եղել	չէի եղել
(դու)	չեղար	չես եղել	չէիր եղել
(նա)	չեղավ	չի եղել	չէր եղել
(մենք)	չեղանք	չենք եղել	չէինք եղել
(դուք)	չեղաք	չեք եղել	չէիք եղել
(նրանք)	չեղան	չեն եղել	չէին եղել

	Future		Future Imperfect	
(ես)	չեմ	լինելու	չէի	լինելու
(դու)	չես	լինելու	չէիր	լինելու
(նա)	չի	լինելու	չէր	լինելու
(մենք)	չենք	լինելու	չէինք	լինելու
(դուք)	չեք	լինելու	չէիք	լինելու
(նրանք)	չեն	լինելու	չէին	լինելու

Mandative Future		Mandative Past
(ես)	*չպիտի լինեմ*	*չպիտի լինեի*
(դու)	*չպիտի լինես*	*չպիտի լինեիր*
(նա)	*չպիտի լինի*	*չպիտի լիներ*
(մենք)	*չպիտի լինենք*	*չպիտի լինեինք*
(դուք)	*չպիտի լինեք*	*չպիտի լինեիք*
(նրանք)	*չպիտի լինեն*	*չպիտի լինեին*

Hypothetical Future		Hypothetical Past
(ես)	*չեմ լինի*	*չէի լինի*
(դու)	*չեմ լինի*	*չէիր լինի*
(նա)	*չեմ լինի*	*չէր լինի*
(մենք)	*չեմ լինի*	*չէինք լինի*
(դուք)	*չեմ լինի*	*չէիք լինի*
(նրանք)	*չեմ լինի*	*չէին լինի*

Subjunctive Present		Subjunctive Past
(ես)	*չլինեմ*	*չլինեի*
(դու)	*չլինես*	*չլինեիր*
(նա)	*չլինի*	*չլիներ*
(մենք)	*չլինենք*	*չլինեինք*
(դուք)	*չլինեք*	*չլինեիք*
(նրանք)	*չլինեն*	*չլինեին*

Infinite Forms		IMPERATIVE MOOD (Prohibitive)	
Infinitive	*չլինել*	Prohibitive 2nd pers.sing.	*մի՛ լինիր/եղիր*
Present participle	*չլինող/չեղող*	Prohibitive 2nd pers. plur.:	*մի՛ լինեք/եղեք*
Past participle	*չեղած*	Inclusive plural:	*չլինե՛նք*
Future participle	*չլինելիք*		

TABLE OF IRREGULAR VERBS

Infinitive	Present Indicative	Imperfect Indicative	Aorist Indicative	Future Subjunctive	Assertive Imperative
անել	*անում եմ*	*անում էի*	*արեցի/արի*	*անեմ*	*արա՛/արե՛ք*
առնել	*առնում եմ*	*առնում էի*	*առա*	*առնեմ*	*ա՛ռ/առե՛ք*
ասել	*ասում եմ*	*ասում էի*	*ասացի*	*ասեմ*	*ասա՛/ասե՛ք*
բանալ	*բացում եմ*	*բացում էի*	*բացեցի/բացի*	*բանամ/բացեմ*	*բա՛ց/բացե՛ք*
բերել	*բերում եմ*	*բերում էի*	*բերեցի/բերի*	*բերեմ*	*բե՛ր/բերե՛ք*
գալ	*գալիս եմ*	*գալիս էի*	*եկա*	*գամ*	*ե՛կ (արի՛)/եկե՛ք*
դառնալ	*դառնում եմ*	*դառնում էի*	*դարձա*	*դառնամ*	*դարձի՛ր/դարձե՛ք*
դնել	*դնում եմ*	*դնում էի*	*դր(եց)ի*	*դնեմ*	*դի՛ր/դրե՛ք*
ելնել	*ելնում եմ*	*ելնում էի*	*ելա*	*ելնեմ*	*ելի՛ր/ելե՛ք*
զարկել	*զարկում եմ*	*զարկում էի*	*զարկեցի*	*զարկեմ*	*զարկի՛ր/զարկեցե՛ք*
ընկնել	*ընկնում եմ*	*ընկնում էի*	*ընկա*	*ընկնեմ*	*ընկի՛ր/ընկե՛ք*
թողնել	*թողնում եմ*	*թողնում էի*	*թողեցի/թողի*	*թողնեմ*	*թո՛ղ/թողե՛ք*
լալ	*լալիս եմ*	*լալիս էի*	*լացեցի/լացի*	*լամ*	*լա՛ց/լացե՛ք*
լինել	*լինում եմ*	*լինում էի*	*եղա*	*լինեմ*	*եղի՛ր/եղե՛ք*
լվանալ	*լվանում եմ*	*լվանում էի*	*լվացի*	*լվամ*	*լվա՛/լվացե՛ք*
տալ	*տալիս եմ*	*տալիս էի*	*տվեցի*	*տամ*	*տու՛ր/տվե՛ք*
տանել	*տանում եմ*	*տանում էի*	*տարա*	*տանեմ*	*տա՛ր/տարե՛ք*
տեսնել	*տեսնում եմ*	*տեսնում էի*	*տեսա*	*տեսնեմ*	*տե՛ս/տեսե՛ք*
ուտել	*ուտում եմ*	*ուտում էի*	*կերա*	*ուտեմ*	*կե՛ր/կերե՛ք*

TABLE OF IRREGULAR VERBS (cont-ed from p. 334)

Negative participle	Present participle	Past participles	Future participle	Prohibitive Imperative
չեմ/չէի անի	անող	արել/արած	անելու/անելիք	մի՛ արա/արեք
չեմ/չէի առնի	առնող	առել/առած	առնելու/առնելիք	մի՛ առ/առեք
չեմ/չէի ասի	ասող	ասել/ասած	ասելու/ասելիք	մի՛ ասա/ասեք
չեմ/չէի բանա	բացող	բացել/բացած	բանալու/բանալիք	մի՛ բաց/բացեք
չեմ/չէի բերի	բերող	բերել/բերած	բերելու/բերելիք	մի՛ բեր/բերեք
չեմ/չէի գա	եկող	եկել/եկած	գալու/գալիք	մի՛ գար/եկեք*
չեմ/չէի գառնա	գարձող	գարձել/գարձած	գառնալու/գառնալիք	մի՛ գարձիր/գարձեք
չեմ/չէի դնի	դնող	դրել/դրած	դնելու/դնելիք	մի՛ դիր/դրեք
չեմ/չէի ելնի	ելնող	ելել/ելած	ելնելու/ելնելիք	մի՛ ելնիր/ելնեք
չեմ/չէի զարկի	զարկող	զարկել/զարկած	զարնելու/զարնելիք	մի՛ զարկիր/զարկեք
չեմ/չէի ընկնի	ընկնող	ընկել/ընկած	ընկնելու/ընկնելիք	մի՛ ընկնի/ընկեք
չեմ/չէի թողնի	թողնող	թողել/թողած	թողնելու/թողնելիք	մի՛ թող/թողեք
չեմ/չէի լացի	լացող	լացել/լացած	լալու/լալիք	մի՛ լա/լացեք
չեմ/չէի լինի	եղող	եղել/եղած	լինելու/լինելիք	մի՛ եղիր/եղեք
չեմ/չէի լվանա	լվացող	լվացել/լվացած	լվալու/լվալիք	մի՛ լվանա/լվացեք
չեմ/չէի տա	տվող	տվել/տված	տալու/տալիք	մի՛ տուր/տվեք
չեմ/չէի տանի	տանող	տարել/տարած	տանելու/տանելիք	մի՛ տար/տարեք
չեմ/չէի տեսնի	տեսնող	տեսել/տեսած	տեսնելու/տեսնելիք	մի՛ տես/տեսեք
չեմ/չէի ուտի	ուտող	կերել/կերած	ուտելու/ուտելիք	մի՛ կեր/կերեք

TABLE OF DEFECTIVE VERBS

Infinitive	Present	Imperfect	
---	*եմ*	*էի*	(The rest of the paradigm is filled with forms of the verb *լինել*)
---	*կամ*	*կայի*	(The rest of the paradigm is filled with forms of the verb *լինել*)
---	*գիտեմ*	*գիտեի*	(The rest of the paradigm is filled with forms of the verb *գիտենալ*, as well as *իմանալ*)
---	*ունեմ*	*ունեի*	(The rest of the paradigm is filled with forms of the verb *ունենալ*)
---	*արժեմ*	*արժեի*	(The rest of the paradigm is filled with forms of the verb *արժենալ*)
---	*հուսամ*	*հուսայի*	Imperative: *հուսա՛/հուսացե՛ք* (The rest of the paradigm is filled with forms of the phrasal verb *հույս ունենալ*)
---	*ցանկամ*	*ցանկայի*	(The rest of the paradigm is filled with the verb *ցանկանալ*)

*վեր կենալ**, *վեր եմ կենում*, *վեր էի կենում*, *վեր կացա*, *վեր կենամ*, *վե՛ր կաց/վե՛ր կացեք*, *չեմ/չէի վեր կենա*, *վեր կացող*, *վեր կացել*, *վեր կացած*, *վեր կենալու*, *վեր կենալիք*, *մի՛ վեր կաց/կացեք*

* The verb *կենալ* is never used alone. It is a phrasal verb, appearing always as *վեր կենալ* *to get up*.


VERBS
Simple Verbs
խոսել, գոռալ
երգել, խաղալ
գրել, կարդալ
Derivative Verbs
խոսեցնել, գոռացնել
երգվել, խաղացվել
գրոտել, կարդացվել


DERIVATIVE VERBS
Regular-Derivative
մեծանալ
մոտենալ
-ան-, -են-
Causative
մեծացնել
մոտեցնել
հագցնել
-ացն-, -եցն-, -ցն-
Reduplicative
կտրատել
փոշոտել
թռչկոտել
-ատ-, -ոտ-, -կոտ-
Passive
կերտվել
կարվել
հարգվել
կարդացվել
-վ-


TRANSITIVE, INTRANSITIVE, PASSIVE VERBS
Transitive
Passive
Intransitive
հեռացրեց
կառուցեց
բուժեց
հրավիրեց
հեռացվեց
ավերվեց
գնվեց
գրավվեց
հեռացավ
գնաց
վազեց
քնեց
The transitive verb is an action verb that requires a direct object to complete its meaning.
In the active voice, the subject performs the action of the verb, while in passive voice, the subject receives the action.
The intransitive verb is a complete action by itself and does not require a direct object to receive the action.

THE INFINITIVE AND THE PARTICIPLES



Infinitive (free)*	Present (free)	Past (free)	Present (bound)**	Past (bound)	Future (free+bound)	Negative (bound)	Synchronic (free+boud)
սովորել գրել կարդալ խաղալ	սովորող գրող կարդացող խաղացող	սովորած գրած կարդացած խաղացած	սովորում գրում կարդում խաղում	սովորել գրել կարդացել խաղացել	սովորելու գրելու կարդալու խաղալու	սովորի գրի կարդա խաղա	սովորելիս գրելիս կարդալիս խաղալիս
-ել, -ալ	-ող, -ացող	-ած, -ացած	-ում	-ել, -ացել	-ելու, -ալու	-ի, -ա	-ելիս, -ալիս

* ***Free*** are the infinite forms that have independent use outside the conjugation paradigms.

** ***Bound*** are the infinite forms that have no independent use outside the conjugation paradigms.

DECLENSION OF NOUNS

	SINGULAR	PLURAL
-ի Declension		
Nominative, Accusative	քաղաք	քաղաքներ
Genitive, Dative	քաղաքի	քաղաքների
Ablative	քաղաքից	քաղաքներից
Instrumental	քաղաքով	քաղաքներով
Locative	քաղաքում	քաղաքներում

The majority of nouns, as well as nominalized adjectives, participles, numerals, proper names, adverbs, and postpositions follow this paradigm. Many nouns belonging to other declension paradigms tend to create parallel formations belonging to the -ի declension (see p. 301)

-ու Declension

a) Nominative, Accusative	այգի	այգիներ
Genitive, Dative	այգու	այգիների
Ablative	այգուց	այգիներից
Instrumental	այգով	այգիներով
Locative	այգում	այգիներում

The majority of nouns ending in -ի, some nouns as մարդ, Աստված, ամուսին, etc. and infini- tives follow this paradigm.

b) Nominative, Accusative	սիրել(ը)	NO PLURAL
Genitive, Dative	սիրելու(ն)	
Ablative	սիրելուց	
Instrumental	սիրելով	
Locative	-	

	SINGULAR	PLURAL
-ան Declension		
Nominative, Accusative	*որոշում*	*որոշումներ*
Genitive, Dative	*որոշման* (or *որոշումի*)	*որոշումների*
Ablative	*որոշումից*	*որոշումներից*
Instrumental	*որոշումով*	*որոշումներով*
Locative	--	*որոշումներում*
a) all nouns in *-ում*: *ծագում* (*ծագման*), *զգացում* (*զգացման*), *չարժում* (*չարժման*), etc.		
Nominative, Accusative, Genitive	*գարուն*	NO PLURAL
Dative, Ablative	*գարնան*	
Instrumental	*գարնանից*	
Locative	*գարնանով*	
	--	
b) the words: *գարուն* (*գարնան*), *ամառ* (*ամռան*), *աշուն* (*աշնան*), *ձմեռ* (*ձմռան*), etc.		
Nominative, Accusative	*մուկ*	*մկներ*
Genitive, Dative	*մկան*	*մկների*
Ablative	*մկնից*	*մկներից*
Instrumental	*մկնով*	*մկներով*
Locative	--	--
c) monosyllabic words: *դուռ* (*դռան*), *մուկ* (*մկան*), *գառ* (*գառան*), *թռռ* (*թռռան*), etc.		
Nominative, Accusative	*մանուկ**	*մանուկներ*
Genitive, Dative	*մանկան*	*մանուկների*
Ablative	*մանկանից*	*մանուկներից*
Instrumental	*մանկանով*	*մանուկներով*
Locative	--	--
* Ther proper noun ***Մանուկ*** follows the regular pattern: ***Մանուկի***(*ն*), ***Մանուկից***, etc.		

	SINGULAR	PLURAL
ու/ա Declension		
Nominative / Accusative	*բարություն*	NO PLURAL
Genitive / Dative	*բարության*	
Ablative	*բարությունից*	
Instrumental	*բարությամբ* or *բարությունով*	
Locative	--	

All abstract nouns ending in *-ություն*: *ուրախություն* (*ուրախության*), *տաքություն* (*տաքության*), *մեծություն* (*մեծության*), etc.

	SINGULAR	PLURAL
Nominative / Accusative	*անկյուն*	*անկյուններ*
Genitive / Dative	*անկյան* or *անկյունի*	*անկյունների(ն)*
Ablative	*անկյունից*	*անկյուններից*
Instrumental	*անկյունով*	*անկյուններով*
Locative	*անկյունում*	*անկյուններում*

Nouns ending in *-ուն*: *շուն* (*շան*), *արյուն* (*արյան*), *անկյուն* (*անկյան*), *տուն* (*տան*), etc.

	SINGULAR	PLURAL
-վա Declension		
Nominative / Accusative	*ժամ*	*ժամեր*
Genitive / Dative	*ժամվա* or *ժամի*	*ժամերի(ն)*
Ablative	*ժամվանից* or *ժամից*	*ժամերից*
Instrumental	*ժամով*	*ժամերով*
Locative	*ժամում*	*ժամերում*

Also: *օր* (*օրվա*), *ցերեկ* (*ցերեկվա*), *շաբաթ* (*շաբաթվա*), *տարի* (*տարվա*), *ժամանակ* (*ժամանակվա*), *գիշեր* (*գիշերվա*), *երեկ* (*երեկվա*), *ձմեռ* (*ձմեռվա*, also: *ձմռան*), etc.

	SINGULAR	PLURAL
-որ Declension		
Nominative	*հայր*	*հայրեր*
Accusative	*հոր*	*հայրերի(ն)*
Genitive	*հոր*	*հայրերի*
Dative	*հոր*	*հայրերի(ն)*
Ablative	*հորից*	*հայրերից*
Instrumental	*հորով*	*հայրերով*
Locative	--	--

Also: *մայր* (*մոր*), *եղբայր* (*եղբոր*), *կնքամայր* (*կնքամոր*), *կնքահայր* (*կնքահոր*), etc.

-ոջ Declension

Nominative	*քույր*	*քույրեր*
Accusative	*քրոջ*	*քույրերի(ն)*
Genitive	*քրոջ*	*քույրերի*
Dative	*քրոջ*	*քույրերի(ն)*
Ablative	*քրոջից*	*քույրերից*
Instrumental	*քրոջով*	*քույրերով*
Locative	--	--

Also: *կին* (*կնոջ*), *ընկեր* (*ընկերոջ*), *տիկին* (*տիկնոջ*), *տալ* (*տալոջ*), *աներ* (*աներոջ*), *սկեսուր* (*սկեսրոջ*), *տանտիկին* (*տանտիկնոջ*), *դասընկեր* (*դասընկերոջ*), *տեր* (*տիրոջ*), etc.

-ո Declension

Nominative Accusative	*սուգ*	NO PLURAL
Genitive Dative	*սգո* or *սուգի*	
Ablative	*սգից*	
Instrumental	*սգով*	
Locative	--	

Also: *լույս* (*լուսո* or *լույսի*), *պատիվ* (*պատվո* or *պատվի*), *հուր* (*հրո* or *հրի*), etc.

Declension of some irregular plural forms

Nominative	*տիկնայք* (or *տիկիններ*)	*մարդիկ*	*Գրիգորենք*
Accusative	*տիկնանց* (or *տիկինների(ն)*)	*մարդկանց*	*Գրիգորենց*
Genitive	*տիկնանց* (or *տիկինների*)	*մարդկանց*	*Գրիգորենց*
Dative	*տիկնանց* (or *տիկինների(ն)*)	*մարդկանց*	*Գրիգորենց*
Ablative	*տիկիններից*	*մարդկանցից*	*Գրիգորենցից*
Instrumental	*տիկիններով*	*մարդկանցով*	*Գրիգորենց հետ*
Locative	--	--	--

Also: *կին-կանայք*, *պարոն-պարոնայք* (or *պարոններ*)

Nominative	*ծնողք* (or *ծնողներ*)	*անձինք*	*որդիք* (or *որդիներ*)
Accusative	*ծնողների(ն)*	*անձանց*	*որդիների(ն)*
Genitive	*ծնողաց* (or *ծնողների*)	*անձանց*	*որդոց* (or *որդիների*)
Dative	*ծնողների(ն)*	*անձանց*	*որդիների(ն)*
Ablative	*ծնողներից*	*անձերից*	*որդիներից*
Instrumental	*ծնողներով*	*անձերով*	*որդիներով*
Locative	--	--	--

NOUNS WITH ARCHAIC GENITIVE FORMS

Nominative		Genitive	
ամիս	month	ամսվա	(also: ամսի)
այրի	widow	այրու	(also: այրիի)
անկողին	bed	անկողնու	(also: անկողնի)
անկյուն	corner	անկյան	(also: անկյունի)
անուն	noun	անվան	(also: անունի)
արյուն	blood	արյան	(also: արյունի)
բեռ	load, burden	բեռան	(also: բեռի)
գալուստ	arrival	գալստյան	(also: գալստի)
գառ	lamb	գառան	(also: գառի)
գիշեր	night	գիշերվա	(also: գիշերի)
դար	century	դարու	(also: դարի)
դուստր	daughter	դստեր	(also: դստրի)
եզ	ox	եզան	(also: եզի)
թոռ	grandchild	թոռան	(also: թոռի)
լեռ	mountain	լեռան	(also: լեռի)
լույս	light	լուսո	(also: լույսի)
խնդիր	problem	խնդրո	(also: խնդրի)
ծնունդ	birth	ծննդյան	(also: ծննդի)
ծոռ	great-grandchild	ծոռան	(also: ծոռի)
ծունկ	knee	ծնկան	(also: ծնկի)
կայսր	emperor	կայսեր	(also: կայսրի)
հանգիստ	rest	հանգստյան	(also:հանգստի)
հույս	hope	հուսո	(also: հույսի)
հուր	fire	հրո	(also: հրի)
ձյուն	snow	ձյան	(also: ձյունի)
մահ	death	մահվան	(also: մահու/մահի)
պատիվ	honor	պատվո	(also: պատվի)
սեր	love	սիրո	
սկեսուր	mother-in-law	սկեսրոջ	(also: սկեսուրի)
սյուն	pillar	սյան	(also: սյունի)
տալ	sister-in-law	տալոջ	(also: տալի)
փախուստ	flight, escape	փախստյան	(also: փախուստի)
օր	day	օրվա	(also: օրի)

FORMATION OF THE PLURAL



Monosyllabic Nouns –ԵՐ	Monosyllabic Nouns –ՆԵՐ	Polysyllabic Nouns –ՆԵՐ	Polysyllabic Nouns in –ն –ՆԵՐ
բառեր	*բեռներ*	*ճառագայթներ*	*գոյականներ*
բներ	*գառներ*	*եղևնիներ*	*սեղաններ*
գեռեր	*դ(ու)ռներ*	*ճամբարներ*	*պայմաններ*
լուրեր	*լեռներ*	*երեխաներ*	*թռչուններ*
ձայներ	*ծոռներ*	*աղջիկներ*	*պահարաններ*
ծառեր	*թոռներ*	*ուսանողներ*	*անուններ*
ջրեր	*ն(ու)ռներ*	*հայուհիներ*	*ամաններ*
մայրեր	*եզներ*	*ուսուցիչներ*	*դրադարաններ*
տառեր	*ձ(ու)կներ*	*դասատուներ*	*նորութիւններ*
օրեր	*հարսներ*	*օդաչուներ*	*կանոններ*
քարեր	*մատներ*	*ուշացումներ*	*քանոններ*

FORMATION OF THE PLURAL
COMPOUND NOUNS WITH A MONOSYLLABIC WORD AS LAST COMPONENT

LAST COMPONENT IS A NOUN WITH AN INDEPENDENT USE plural ending: **-եր**	LAST COMPONENT IS A VERBAL ROOT WITH NO INDEPENDENT USE plural ending: **-ներ**
ձեռագիր–ձեռագրեր	*մատենագիր–մատենագիրներ*
հանքահոր–հանքահորեր	*վիպագիր–վիպագիրներ*
արուտավայր–արուտավայրեր	*հանքափոր–հանքափորներ*
լրագիր–լրագրեր	*ժամացույց–ժամացույցներ*
քարայծ–քարայծեր	*մեծատուն–մեծատուններ* (*հարուստ*)
վերնատուն–վերնատներ	*կոշկակար–կոշկակարներ*
սուգաստար–սուգաստարեր	*գինակիր–գինակիրներ*

DECLENSION OF NOUNS

Inner change

ու//ա	ա//ո
չուն *այուն* *անկյուն*	*հայր* *մայր* *եղբայր*

External change

ի	ու	ան	ոջ	վա	ց
ծառ *հաստակ* *խնձոր*	*գինի* *մարդ* *Մեղրի*	*գառ* *աչուն* *գարուն*	*քույր* *ընկեր,* *կին, , տեր*	*օր* *չաբաթ* *տարի*	*Հակոբեենք* *Վարդանանք* *կարոյենք*

Other

ա	ո
աղ- *ջիկ*	*տուգ* *սեր* *հուր*

DECLENSION CASES

Nominative	Genitive	Dative	Accusative	Ablative	Instrumental	Locative
տուն(ը)	*տան*	*տան(ը)*	*տուն*	*տանից (տնից)*		--
հայր(ը)	*հոր*	*հոր(ը)*	*հայր հորը*	*հորից*	*տնով*	--
ուսուցիչ(ը)	*ուսուցչի*	*ուսուցչի(ն)*	*ուսուցիչ*	*ուսուցչից*	*հորով*	--
					ուսուցչով	--
քույր(ը)					*(ուսուցչուհով)*	--
աշակերտ(ը)	*քրոջ*	*քրոջ(ը)*	*քույր (քրոջը)*	*քրոջից*	*քրոջով*	--
ձի(ն)	*աշակերտի*	*աշակերտի(ն)*	*աշակերտ(ին)*	*աշակերտից*	*աշակերտով*	--
օր(ը)	*ձիու*	*ձիու(ն)*	*ձի(ն)*	*ձիուց*	*ձիով*	--
	օրվա	*օրվա(ն)*	*օր*	*օրից (օրվանից)*	*օրով(օրվանով)*	*օրում*
հարևանենք	*հարևանենց*	*հարևանենց*	*հարևանենց*	*հարևանենցից*	*հարևանենցով*	*հարևանենցում*
դուստր(ը)	*դստեր*	*դստեր(ը)*	*դստեր*	*դստերից*	*դստերով*	--
աղջիկ(ը)	*աղջկա*	*աղջկա(ն)*	*աղջկա(ն)*	*աղջկանից*	*աղջկանով*	--
սեր(ը)	*սիրո*	*սիրո (սիրուն)*	*սեր*	*սիրուց*	*սիրով*	--
բնություն(ը)	*բնության*	*բնության(ը)*	*բնության(ը)*	*բնությունից*	*բնությունով*	*բնությունում*

NOUNS

Number

Singular	Plural
քար *մարդ*	*քարեր* *մարդիկ*

Subclasses

Common	Proper	Inanimate	Animate
մարդ *տուն* *առյուծ*	*Արամ* *Հայաստան* *Արարատ*	*գրիչ* *բահ* *քանոն*	*մարդ* *ուսուցիչ* *բժիշկ*

Determination

Definite	Indefinite
հայրը *ծառը* *ծառան*	*հայր* *ծառ* *ծառա*

Declension

Inner change

ա	ո
բնութիւն *տուն*	*մայր* *հայր*

Outer change

ի	ու	ան	ող	վա	ց
ծառ	*մարդ* *գառնի*	*աշուն* *պառ*	*կին* *քույր*	*օր* *շաբաթ*	*Ամենեւնք* *Վարդանեւնք*

CASES

Nominative	Genitive	Dative	Accusative	Ablative	Instrumental	Locative
մարդ *անտառ*	*մարդու* *անտառի*	*մարդու(ն)* *անտառի(ն)*	*մարդու(ն)* *անտառ(ը)*	*մարդուց* *անտառից*	*մարդով* *անտառով*	-- *անտառում*

ONLY THE FIRST WORD IS CAPITALIZED

Geographic names in which the second or third word is not a proper noun	Names of works in literature, science, and art that are taken in quotation marks	Names of institutions, organizations, awards etc. that are taken in quotation marks	Names of international organizations, institutions, important events, state and government agencies, etc.
Սև ծով *Հյուսիսային սառուցյալ օվկիանոս* *Հրո երկիր* *Խաղաղ օվկիանոս* *Վայոց ձոր* *Սևանա լիճ*	*«Աղամից առաջ» պատմվածք* *«Դանթեական առասպել» պոեմ* *«Զարի վերջը» հեքիաթ* *«Ինչո՞ւ է աղմկում գետը» կինոնկար* *«Իններորդ ալիք» կտավ* *«Հայոց աշխարհ» լրագիր* *«Երգ առանց խոսքի» երաժշտություն* *«Գրական թերթ» լրագիր*	*«Աշխատանք» մարզական ընկերություն* *«Ավանգարդ» արտ. միավորում* *«Ավտոսիրող» կամավոր ընկերություն* *«Հրազդան» մարզադաշտ* *«Զանգակ-97» հրատարակչություն* *«Էրեբունի» բժշկական կենտրոն*	*Միավորված ազգերի կազմակերպություն* *Ֆուտբոլի համաշխարհային ֆեդերացիա* *Նոր տարի* *Մայրության և* *Գեղեցկության տոն* *Սահմանադրության օր* *Երկրորդ աշխարհամարտ* *Արցախյան ազատամարտ* *Ազգային ժողով* *Փարիզյան կոմունա*

COMPOUND PROPER NAMES

ALL CAPITALIZED

Country Names Consisting of 2 or 3 Words	Compound proper name in which each component is a proper name	Geographic name in which each component is a proper name
Ամերիկայի Միացյալ Նահանգներ	*Աչոռ երկաթ*	*Փոքր Մասիս*
Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորություն	*Տիգրան Մեծ*	*Նոր Արեշ*
Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն	*Սահակ Պարթև*	*Վերին Արտաշատ*
Հայաստանի Հանրապետություն	*Ցլիկ Ամրամ*	*Արևելյան Հայաստան*
Ռուսաստանի Դաշնություն	*Պարույր Սևակ*	*Միջին Ասիա*
Չինական Ժողովրդական Հանրապետություն	*Պետրոս Առաջին*	*Մեծ Պարնի*
Արաբական Միացյալ Էմիրություններ	*Ռիչարդ Առյուծասիրտ*	*Հյուսիսային Կովկաս*

DERIVATIONS

Nouns, Verbs, Adjectives, and Adverbs

PREFIXES

ան-	un-, -less	adj.	անտեղյակ unaware, անհույս hopeless
ապ(ա)-	un-, dis-	adj., verb	ապօրինի illegitimate, ապերախտ ungrateful, ապակողմնորոշել to disorient
արտ(ա)-	ex-, extra-	adj., verb, noun	արտասովոր extraordinary, արտածել to export, արտահայտել to express, արտասահման abroad, out-of-country
դժ-	un-	adj.	դժդուն pale
ենթ(ա)-	sub-	verb, noun	ենթարկել to submit, ենթակա subject
ընդ-	inter-, sub-	adj., verb	ընդհատել to interrupt, ընդծովյա sub marine
հակ(ա)-	counter-	adj., verb, noun	հակադիր opposite, հակազդել to counteract, հակահարված counter-attack
համ(ա)-	con-, homo-, uni-	adj., verb, noun	համերկրացի compatriot, համատեղել to combine, համանիշ homonym
նախ(ա)-	pre-, for-	verb, noun	նախատեսել to foresee, նախադրություն preposition, նախաբան preface
ներ(ա)-	in-, inner	adj., verb, noun	ներարկել to infuse, ներաշխարհ inner world
չ-	un-, non-	adj., noun	չկամ unkind, unwilling, չգիտություն ignorance
ստոր(ա)-	sub-, under-	adj.	ստորերկրյա subterranean, ստորագրյալ undersigned
վեր(ա)-	re-, super-	verb, noun	վերատուգել to revise, վերադառնալ to return, վերակացու supervisor
տ-	un-	adj.	տգետ ignorant, տհաճ unpleasant
տար(ա)-	un-, ex-	adj., verb, noun	տարաբախտ unfortunate, տարածել to extend, տարագրություն exile
փոխ(ա)-	trans-, re-	verb, noun	փոխադրել to transport, փոխվրեժ

SUFFIXES

-աբար	-ly	adverb	մայրաբար motherly, վեհաբար naturally
-(ա)գին	-y, -ly, etc.	adj., adv.	սրտագին heart-felt, ուժգին violently,
-ակ	-able, diminutive	adj., noun	ունակ able, նավակ little boat
-ական/եկան	-al, -(l)y,-ish	adj.	տեղական local, տարեկան yearly

-ապես	-ly, -wise	adverb	*վերջապես* finally, *այլապես* otherwise
-ակի	-ly	adverb, adj.	*ուղղակի* directly, *մասնակի* particular
-ացու	destined to	adj., noun	*մահացու* deadly, *հարսնացու* bride-to-be
-անոց	local	noun	*զորանոց* barracks, *հիվանդանոց* hospital
-անք	action	noun	*լոգանք* bathing, *աշխատանք* work
-արան	place	noun	*պահարան* locker, *սրճարան* coffee house
-ավոր/ևոր	filled with, -y	adj.	*մեղավոր* guilty, *ունևոր* wealthy
ային	-like	adj.	*մարդկային* human-like, *օդային* aerial
-ելի/ալի	-able	adj.	*պաշտելի* adorable, *ողբալի* lamentable
-եղեն	coll. material	adj., noun	*ոսկեղեն* jewelry, *խմորեղեն* cookies
-ենի	-able, trees/bushes	adj., noun	*վայրենի* wild, *վարդենի* rose bush, *խնձորենի* apple tree, *տանձենի* pear tree
-(ե)ցի/(ա)ցի	resident, originating from	noun	*դրսեցի* outsider, *գյուղացի* peasant, *գերմանացի* German
-ե	made from, -en	adj.	*փայտե* wooden, *մետաքսե* made from silk
-իկ	diminutive	adj.	*մանկիկ* infant, *սեղանիկ* little table
-իչ	instrument, agent,	noun, adj.	*գրիչ* pen, *երգիչ* singer, *գրավիչ* attractive
-իք	geared / subject to	adj., noun	*ասելիք* something to say, *խաղալիք* toy
-յան	originating from	adj.	*արևելյան* oriental, *Արամյան* originating from Aram
-յա	made from	adj.	*մետաղյա* made from metal
-ոտ	full of, -y	adj.	*յուղոտ* greasy (full of fat), *աղտոտ* dirty
-որդ	agent	noun	*որսորդ* hunter, *գնորդ* buyer
-որեն	-ly	adverb	*վստահորեն* surely, *լրջորեն* seriously
-(ա)պան	profession	noun	*այգեպան* gardner, *դռնապան* doorman
-աստան/-եստան	place,	noun	*այգեստան* orchard, *ծառաստան* forest, *Հունաստան* Greece
-վածք	result of action	noun	*կառուցվածք* construction, *գրվածք* writing
-ություն	abstract	noun	*ուրախություն* joy, *ընկերություն* friendship, *ընթերցանություն* reading, *ուսանողություն* students (collective)
-ուկ	diminutive	noun	*մանչուկ* little boy
-ուհի	female	noun	*երգչուհի* female singer, *բժշկուհի* female physician
-ում	abstract	noun	*բուժում* cure, *չարժում* movement, *նվաճում* conquest


ADJECTIVES
simple
կանաչ, բարի, չիտակ, կոչտ,
փոքր, սխալ, երկար, հպարտ
derived
փայտե, մարդկային, պաշտելի,
մայրական, մեղավոր, յուղոտ


ADJECTIVAL DEGREES
Positive
քաջ
փոքր
Comparative
ավելի քաջ
ավելի փոքր
Superlative
ամենաքաջ
փոքրագույն


NUMERALS
Cardinal
երեք (3)
քսան (20)
երեսունհինգ (35)
Ordinal
երրորդ (3rd)
քսաներորդ (20th)
երեսունհինգերորդ (35th)


CARDINAL NUMERALS
Absolute Numerals
միավորներ 1, 2, 3, 4, 5, 6,
տասնավորներ 10, 35, 99
հարյուրավորներ 100, 745
ավելի բարձր թվեր 1955
Distributive Numerals
մեկական,
մեկ-մեկ,
տասական,
հարյուրական
Fractional Numerals
մեկ երրորդ 1/3
տասը տասնյոթերորդ 10/17
հարյուր հազարերորդ 100/1000


CARDINAL NUMERALS
ACCORDING TO THEIR FORMATION
Simple
բոլոր միավորները (1,2,3,4,5,6,7,8,9)
տասը և քսան տասնավորները
հարյուրը, հազարը, միլիոնը, միլիարդը
Derived
երեսուն
քառասուն
հիսուն
վաթսուն
յոթանասուն
ութսուն
իննսուն
Compound
տասնմեկ
տասներկու
տասներեք
տասնչորս
տասնհինգ
տասնվեց
տասնյոթ
տասնութ
տասնինը
քսանմեկ
Complex
հարյուր երեսուն (130)
հազար իննսուներեք (1093)
երկու հազար տասը (2010)


COMPLEX NUMBERS
Written joined together
From 11 to 99: տասնմեկ (11), քսաներկու (22), քառասուներեք (43), յոթանասունչորս (74), ութսունյոթ (87), իննսունինը (99), etc.
Written separately
Over 100: հարյուր մեկ (101), երկու հազար հինգ (2005), հազար ինը հարյուր վաթսունմեկ (1961), հինգ հազար տասներկու (5012), etc.

THE SPELLING OF ORDINAL NUMERALS

Arabic numerals	Armenian Alphabet letters	Roman Numerals	Written in Armenian letters
1-*ին*	*ա*	I	*առաջին*
2-*րդ*	*բ*	II	*երկրորդ*
3-*րդ*	*գ*	III	*երրորդ*
4-*րդ*	*դ*	IV	*չորրորդ*
5-*րդ*	*ե*	V	*հինգերորդ*
6-*րդ*	*զ*	VI	*վեցերորդ*
7-*րդ*	*է*	VII	*յոթերորդ*
8-*րդ*	*ը*	VIII	*ութերորդ*
9-*րդ*	*թ*	IX	*իններորդ*
10-*րդ*	*ժ*	X	*տասներորդ*
11-*րդ*	*ժա*	XI	*տասնմեկերորդ*
20-*րդ*	*ի*	XX	*քսաներորդ*
30-*րդ*	*լ*	XXX	*երեսուներորդ*
40-*րդ*	*խ*	XL	*քառասուներորդ*
50-*րդ*	*ծ*	L	*հիսուներորդ*
60-*րդ*	*կ*	LX	*վաթսուներորդ*
100-*րդ*	*ճ*	C	*հարյուրերորդ*
400-*րդ*	*ն*	CD	*չորսհարյուրերորդ*
500-*րդ*	*շ*	D	*հինգհարյուրերորդ*
600-*րդ*	*ո*	DC	*վեցհարյուրերորդ*
1000-*րդ*	*ռ*	M	*հազարերորդ*


PRONOUNS
Personal
Demonstrative
Reflexive
Interrog-ative
Relative
Indefinite
Definite
Nega-tive
ես
ինքս
դու
ինքդ
նա
ինքը
մենք
ինքներս
դուք
ինքներդ
նրանք
ինքները
սա, դա, նա,
այս, այդ, այն,
սույն, նույն,
միևնույն,
մյուս, այսպես
այդպես, այնպես,
նույնպես,
այսպիսի,
այդպիսի,
այնպիսի,
նույնպիսի,
այսքան, այդքան,
այնքան, նույնքան,
այսչափ, այդչափ,
այնչափ, նույնչափ,
այստեղ, այդտեղ,
այնտեղ, նույնտեղ
իրար
միմյանց
մեկմեկու
մեկմեկի
ո՞վ, ի՞նչ
ինչպիսի՞
ինչքա՞ն
ինչչա՞փ
ինչպե՞ս
ինչո՞ւ
ո՞ր, ո՞րը
որքա՞ն
որչա՞փ
որպիսի՞
ո՞րերորդ
որտե՞ղ
ե՞րբ, ո՞ւր
քանի՞
քանի՞սը
քանի՞երորդ
ով, ինչ
ինչպիսի
ինչքան
ինչչափ,
ինչպես
ինչու
որ, որը
որքան
որչափ
որպիսի
որերորդ
որտեղ
երբ, ուր
քանի
քանիսը
քանիերորդ
ինչ-որ
ինչ-ինչ
ոմն
մեկը
մի
մի քանի
միքանիսը
ուրիշ
այլ
այսինչ
այնինչ
այնինչ
որոշ
որևէ
ովևէ
երբևէ
երբևիցե
որևիցե
մեկն ու
մեկը
ամեն(ը)
ամեն մի
ամեն մեկը
ամենքը
բոլոր(ը)
ուրաքանչյուր(ը)
ամեն ինչ(ը)
յուրաքանչյուր ոք
ամեն ոք
ողջ(ը)
ամբողջ(ը)
համայն
ամենայն
ոչ ոք
ոչինչ
ոչ մի
ոչ մեկը

DEMONSTRATIVE PRONOUNS

Pointing to an object	Pointing to a trait	Pointing to quantity	Pointing to modality and place
սա *դա* *նա*	*այս,* *այսպիսի,* *այդ,* *այդպիսի,* *այն,* *այնպիսի,* *նույն,* *նույնպիսի,* *միևնույն,* *մյուս,* *սույն*	*այսքան,* *այդքան,* *այնքան,* *նույնքան,* *այսչափ,* *այդչափ,* *այնչափ,* *նույնչափ*	*այսպես,* *այդպես* *այնպես,* *նույնպես,* *այստեղ,* *այդտեղ,* *այնտեղ,* *նույնտեղ*

INTERROGATIVE-RELATIVE PRONOUNS

Asking a question about an object	Asking a question about the quality of an object	Asking a question about the quantity of an object	Asking a question about the trait of an object
ո՞վ *ի՞նչ(ը)* *ո՞ր(ը)*	*ինչպիսի՞* *որպիսի՞*	*ինչքա՞ն* *որքա՞ն* *որչա՞փ* *ո՞րերորդ* *քանի՞երորդ* *քանի՞*	*ինչպե՞ս* *ինչո՞ւ* *ե՞րբ* *ո՞ւր* *որտե՞ղ*

PRONOMINAL ARTICLES

Possessive	Personal	Determinative	Demonstrative
-ս, -դ, -ը/-ն	*-ս, -դ*	*-ը/-ն*	*-ս*
Ներկայությունդ սիրտս ուրախությամբ է լցրել։ *մայրս =* *իմ մայրը* *գիրքդ =* *քո գիրքը* *մատիտն =* *իր մատիտ* *գլուխները =* *իրենց գլուխները*	*Հայրենիքին հավատարիմ զինվորս չեմ լքի դիրքերս։* *Քայլիդ անունը վաղուց ենք լսել։*	*Սարի գլխին նստած ամպը նման էր մարդու։* *խնձորը սեղանին էր։*	*Գիշերս արթուն եմ մնացել։* *Աշխարհս ոչ ոքի չի մնացել...* *Վերջերս ես եղա Եգիպտոսում։*
-ս, -դ, -ը/-ն indicates possession or belonging *"Your presence has filled my heart with joy."*	*-ս, -դ,* defines the noun as an apposition referring to the first or second person: *"I, the faithful soldier of our homeland, won't abandon my positions."*	*-ը/-ն* transforms an indefinite item to a definite one, indicating that it is known to the speaker. *"The apple was on the table."*	*-ս* imparts to the noun a demonstrative meaning: *գիշերս last night* *աշխարհս this world*

Local

ամեն տեղ, ամենուրեք, այլուր, բերնեբերան, դեմ առ դեմ (դեմառդեմ), դեմ ու դեմ (դեմուդեմ), դեմ հանդիման, դունեդուռ, գյուղեգյուղ, ետ, ընդառաջ, հեռու, մեջտեղ, պատն ի վեր, սարն ի վեր, վեր, վերուստ, տեղ-տեղ, տնից-տեղից, քարեքար

Temporal

այժմ, արդեն, այլևս, այսուհետ, այսօր, այնուհետեւ, ամսեամիս, առայժմ, առհավետ, ապա, դիշեր-ցերեկ, դեռ, դեռևս, երբեք, երեկ, ժամ առ ժամ, ժամանակ առ ժամանակ, ընդմիշտ, հետո, հիմա, միշտ, մշտապես, նախ, նախապես, նախօրոք, չուտ, չուտով, վաղ, վաղը, վաղուց, վաղօրոք, վերջերս, վերջին-վերջո, տարեցտարի, րոպե առ րոպե, ուշ, օրըստօրե, օրեցօր

Modal

արագ, արագ-արագ, արագորեն, արտաքուստ, բարեկամաբար, բարոյապես, գործնականորեն, գիտակցաբար, դանդաղ, դանդաղորեն, զույգ-զույգ, խոկույն, լրջորեն, կամաց, կամաց-կամաց, կենտ-կենտ, հազիվհազ, հապճեպ, հիմնովին, հոտնկայս, հետզհետե, հանկարծ, ձեռաց, մեջ ընդ մեջ, մերթ ընդ մերթ, միասին, միանգամայն, միաձայն, չարունակ, ներքուստ, ուշիուշով, քայլաբար, փոխեփոխ

Measure and Quantity

ամենևին, ամբողջովին, ավել, ավելի ևս, առավել, առավելապես, բազմիցս, բոլորովին, գերազանցապես, գրեթե, դարձյալ, եռակի, երիցս, էլ ավելի, ընդամենը, լիովին, կիսով չափ, կրկին, կրկնակի, հազիվ, հաճախ, համարյա, մասամբ, մանրակիորեն, մեկիկ-մեկիկ, մոտավորապես, նորից, չատ-չատ, չափազանց, սակավ, սակավ առ սակավ, փոքր առ փոքր, փոքրիշատե, քիչ-քիչ



ԻՆՉԵՐ Է ՊԱՏՄՈՒՄ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Հայոց լեզուն պատմում է, թե ինքը հնդեվրոպական լեզվաընտանիքի մեջ հունարենի ու ալբաներենի նման անկախ մի ճյուղ է կազմում: Հայերենը ցեղակից է այն լեզուներին, որոնցով գրված են հնդկական Վեդաները, հունական չքնաղ Իլիականը և ուրիշ շատ հանրածանոթ գործեր, որոնց կողքին չողում են նաև հայ դասական գործերը:

Հայոց լեզուն՝ հինգերորդ դարում ցույց տված իր կատարելությամբ, վկայում է այն բարձր քաղաքակրթության մասին, որին կարողացել է հասնել հայ ազգը:

Հայոց լեզուն պատմում է նաև հին կյանքից հետաքրքրական մանրամասնություններ: Ունի բառեր, որոնք պատկերում են հայ ժողովրդի հոգեբանությունը, նրա ազգային հին նիստն ու կացը, սովորությունները, կրոնը, նախապաշարումները և նրա ներկա մտածելակերպն ու ապրելակերպը:

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանն ունի չքնաղ բնություն, ջինջ ու կապուտակ երկինք, առողջարար և մաքուր օդ, պարզ ու վճիտ ջրեր:

Այս գեղեցիկ բնաշխարհում անհիշելի ժամանակներից սկսած ապրում ու ստեղծագործում է հայ ժողովուրդը: Նա դեռ հնագույն ժամանակներում ստեղծեց պետություն, գիր ու գրականություն, կառուցեց հոյակապ պալատներ, անառիկ բերդեր և հսկա ամրոցներ:

Գանվելով Արևելքի և Արևմուտքի խաչմերուկում՝ Հայաստանը անընդհատ ենթարկվել է հարձակումների ու ավերածությունների: Սակայն նույնիսկ հաճախակի կրկնվող ավերիչ պատերազմների, օտարերկրյա երկարատև տիրապետությունների պայմաններում հայ ժողովուրդը չի դադարել աշխատելուց: Նա անընդհատ վերակառուցել է թշնամու հրկիզած ու ավերած քաղաքներն ու գյուղերը՝ դրանք գարձնելով ավելի գեղեցիկ ու հոյաչեն: Կառուցել է նոր, մեկը մյուսից գեղեցիկ ու զարմանահրաշ պա-

լատներ ու տաճարներ՝ բորբոքելով Թշնամիների չար նախանձը։ Հայերը քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով դարերի ընթացքում տարբեր տեղերում կառուցել են տասից ավելի մայրաքաղաք։ Այդ է պատճառը, որ օտարերկրյա որոշ պատմաբաններ Հայաստանը կոչում են «թափառող մայրաքաղաքների երկիր»։ Հնագույն մայրաքաղաքներից մի քանիսի՝ Վաղարշապատի, Արմավիրի, Դվինի հետքերն ու ավերակները կարելի է տեսնել Հայաստանի տարածքում։

Ըստ Գ. Ավագյանի
Adaptation from G. Avakyan

ԵՐԵՎԱՆԸ

Աշխարհում քաղաքներ շատ կան։ Կան մեծ՝ փառաբանված քաղաքներ, կան փոքր աննշան քաղաքներ և կան քաղաքներ, որ նոր են ծնվում։ Այդ քաղաքներից յուրաքանչյուրն ունի իր դեմքը, ճարտարապետական իր ոճը, իր բարքերը, իր զարգացման հեռանկարները։

Հայաստանի մայրաքաղաք Երևանը հազարամյակների պատմություն ունի։ Աշխարհում շատ քիչ քաղաքներ կան, որ ունեն այնպիսի պատկառելի տարիք, ինչպես Երևանը։ Քաղաքը հիմնադրվել է մեր թվականությունից առաջ 782 թվականին իբրև քաղաք էրեբունի։ 2018 թվականին Երևանը կլինի 2800 տարեկան։ Ամեն մի նույնիսկ երիտասարդ քաղաքում կարելի է ցույց տալ հինն ու նորը, այսօրվանն ու վաղվանը։ Երևանում դա դժվար է, գրեթե անհնար։ Դարեր շարունակ պատերազմների բեմ դարձած այս հողի վրա ոչնչացվել են գրեթե բոլոր միջնադարյան քարե հուշարձանները... Մնացել են միայն այդ հին, շատ հին ուրարտական չրջանի ամրոցները։ 20-րդ դարի սկզբում Երևանը եղել է փոքր քաղաք՝ մեծ մասամբ կավե տներով և ծուռումուռ փողոցներով։ Իրականում այսօրվա Երևանը նոր քաղաք է։ Որքա՜ն սքանչելիքներ կան նոր Երևանում։ Անցնում ես նոր փողոցներով, պուրակներով ու հրապարակներով, այցելում ես օպերան, թանգարաններն ու համերգասրահները և զարմանում ես, թե այս ե՞րբ կառուցվեց, և ո՞վ կառուցեց։ Ու մի պահ գլուխ ես խոնարհում հայ ժողովրդի հանճարեղ զավակ Ալեքսանդր Թամանյանի առաջ, որ նախագծել է նոր Երևանը։ Խոնարհվում ես նաև այն մարդկանց առաջ, որոնք արդար քրտինք են թափել՝ քարը քարին դնելով ու մեզ հանձնելով այսօրվա Երևանը։

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ

Մինչև հինգերորդ դարը հայերը սեփական գիր չունեին և պետական գործերում հաճախ օգտվել են պարսկերեն, հունարեն և ասորերեն լեզուներից։ Քրիստոնեության մուտքը Հայաստան (301-ին) և Սուրբ Գիրքն ու սուրբ հայրերի գրածները ժողովրդին

մատչելի դարձնելու պահանջը հարկադրեց, որ հայոց լեզվի բոլոր հնչյունները արտահայտող մի գրություն ստեղծվի։ Այդ նշանավոր գործը հաջողությամբ իրականացրեց Մեսրոպ Մաշտոց վարդապետը, որը հայ ժողովրդին տվեց սեփական գիր՝ հայկական այբուբենը։ Հինգերորդ դարում լայն գործածություն ունեցող Արարատյան խոսվածքը մշակվելով դարձավ այդ չքնաղի գրական լեզուն։ Այդ լեզուն այսօր կոչվում է գրաբար կամ դասական հայերեն։ Գրաբարով է, որ թարգմանվեցին Սուրբ Գիրքն ու համաշխարհային այլ հռչակավոր գործեր։ Այդ լեզվով գրվեցին հայկական առաջին ինքնուրույն գրական աշխատությունները։ Հինգերորդ դարը հայերենի ոսկեդարն է։

Ըստ Լ. Շանթի
Adaptation from L. Shant

ՀԱՅԵՐԵՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ

Ոսկեդարի ամենից չքեղ գործերից մեկն է Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը։ Հայկական տառերի գյուտից առաջ Հայաստանի եկեղեցիներում աղոթքները կարդացվում էին օտար լեզուներով։ Հայ ժողովուրդը մոքով ու հոգով օտարին գերի էր։

Տառերի գյուտը, որ տեղի ունեցավ 405-ին, առաջացրեց համաժողովրդական ոգևորություն։ Ամենուրեք սկսեցին դպրոցներ բացվել՝ նոր սերունդը հայ այբուբենով ու հայոց լեզվով կրթելու և դաստիարակելու համար։ Ժողովրդի օրըստօրե մեծացող ծարավը հագեցնելու համար բազմաթիվ գրքեր թարգմանվեցին հայերեն, այդ թվում՝ Սուրբ Գիրքը աստրենենից։ Որոշ ժամանակ անց՝ 30-ական թվականներին, Մեսրոպ Մաշտոցի և կաթողիկոս Սահակ Պարթևի անմիջական ղեկավարությամբ նրանց տաղանդավոր աշակերտները Սուրբ Գիրքն ամբողջապես թարգմանեցին հունարեն մի ընտիր օրինակից։ Հաջորդ քայլը եղավ այդ երկու թարգմանությունների քննական համադրումը։ Իր լեզվական գեղեցկության, ինչպես նաև բնագրին հավատարիմ լինելու համար Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը օտար գիտնականները կոչեցին «Թարգմանությունների թագուհի»։

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԵՎ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովուրդը աշխարհի ամենահին քրիստոնյա ժողովուրդներից մեկն է։ Այն աշխարհում առաջինը եղավ, որ ընդունեց քրիստոնեությունը որպես երկրի պաշտոնական կրոն։ Այդ տեղի ունեցավ 301 թվականին, երբ գահակալում էր Տրդատ Թագավորը։ Տրդատը և Գրիգոր Լուսավորիչը միասին քրիստոնյա դարձրին Հայաստանը և հիմնեցին հայ քրիստոնյա առաջին՝ Էջմիածնի եկեղեցին Վաղարշապատում, որն

ամենահին քրիստոնյա եկեղեցին է աշխարհում: Այնտեղ է նստում մինչև այսօր Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Հայ եկեղեցին միշտ էլ եղել է հայ ժողովրդի պահպանման ամենազորեղ հաստատությունը: Աշխարհով մեկ ցրված հայերին այն տվել է հույս, հավատ և միասնություն:

Հայաստանը հարուստ է քրիստոնեական հին եկեղեցիներով: Ճուր չէ, որ այն կոչում են թանգարան բաց երկնքի տակ: Ճուր չէ նաև, որ աշխարհի ամեն կողմից զբոսաշրջիկները գալիս են՝ տեսնելու Ս. Էջմիածինը և մյուս հին եկեղեցիները: Նրանց մեջ հատուկ ճարտարապետական արժեք ունեն 7-րդ, 10-րդ և 11-րդ դարերի եկեղեցիները: Այդ եկեղեցիներից ամենանշանավորը Ս. Հռիփսիմեի տաճարն է: Եկեղեցիների չինությունները սովորաբար կառուցված են տեղական քարերով: Գրեթե բոլոր եկեղեցիներն ունեն նույն խաչաձև հատակագիծը, որը մի քիչ երկարավուն է, ինչպես ինքը՝ հայկական խաչը: Հայերը հպարտ են իրենց հին ճարտարապետությամբ:

ՀԱՅ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Երբ դեռ տպագրություն չկար, մարդիկ գրքերը ձեռքով էին արտագրում: Հայ ժողովուրդը մեկն էր ուսման և լույսի ծարավ այն ազգերից, որոնք բազմաթիվ գրքեր են ընդօրինակել:

Ընդօրինակողները առհասարակ վանականներ, քահանաներ, դպիրներ էին, որոնք աշխատում էին մեծ մասամբ վանքերի կամ եկեղեցիների համեստ խուցերի մեջ ամիսներով, երբեմն նույնիսկ տարիներով, մոմի լույսի տակ: Այդ աշխատանքը նրանք կատարում էին հայ իշխանների և մեծատուների պատվերով: Հաճախ էլ վանքերից դուրս գտնվող մտավորականներ էին հանձն առնում այդ աշխատանքը և սիրահոժար կերպով կատարում որևէ վանքի համար: Նրանք հաճախ ավարտում էին հսկա հատորներ, ինչպես օրինակ՝ Աստվածաշունչը: Ընդօրինակողները չատ գիտուն էին և ունեին գեղեցիկ ձեռագրեր:

Ձեռագրերի մեծագույն արժանիքը սքանչելի զարդանկարներն են, որոնց գեղեցկությամբ հիանում է ամբողջ աշխարհը: Մեզ հասած հայկական ամենահին ձեռագիրը 887-ին գրված մի Ավետարան է, որը ներկայումս գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Այսօր աշխարհի տարբեր մշակութային կենտրոններում պահվում են ավելի քան 25 հազար հայերեն ձեռագրեր:

Ըստ Ռ. Իշխանյանի
Adaptation from R. Ishkhanyan

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա կենսագրությունն է. նախ՝ կարևոր է ծննդյը՝ որտեղ ու երբ է ծնվել, ապա և՝ ամբողջ կյանքը՝ ինչ պայմաններում է այն ընթացել, ինչ դժվարություններ է այդ ժողովուրդը հաղթահարել, մշակույթի ինչ արժեքներ է ստեղծել, ինչ ավանդ է մուծել համաշխարհային մտքի ու մշակույթի գանձարանը և այլն: Կան հին ժողովուրդներ, որոնք մահացել են, վաղուց այլևս գոյություն չունեն. ուրեմն նրանց պատմությունը տևել է ծննդից մինչև մահ:

Հայ ժողովուրդը աշխարհի ամենահին ժողովուրդներից է: Նրա հնադարյան հարևանների մի մասն այժմ ապրում է, իր լեզվով խոսում, գրում, մշակութային նոր արժեքներ ստեղծում. դրանցից են վրացիները, օսերը, հույները, արաբները, պարսիկները և ուրիշներ: Իսկ հայերի հնագույն հարևան ժողովուրդների մի մասն էլ այլևս չկա: Նրանց լեզվով վաղուց է, որ ոչ ոք չի խոսում, նրանց մշակույթը չի զարգանում. դրանցից են, օրինակ, շումերները, աստւրաբաբելացիները (աքքադացիները), խեթերը և ուրիշներ:

Հին և հնագույն ժողովուրդների պատմությունը լավ հասկանալու համար կարևոր է ճիշտ պատկերացնել պատմության թվականությունները և ժամանակագրությունը: Այժմ, ըստ քրիստոնեական տարեցույցի, 2007 թվականն է: Սա նշանակում է, որ մեկ թվականից սկսած անցել է 2007 տարի: Մեկ թվականը համարվում է Քրիստոսի ծննդյան տարին: Այդ թվականից մինչև մեր ժամանակն ընկած տարիների հաշիվը կոչվում է մեր թվականություն կամ Քրիստոսի ծննդից հետո:

Իսկ նախքան մեր թվականը տարբեր դարերում, տարբեր տարիների կատարված դեպքերը համարվում են մեր թվականությունից առաջ կամ Քրիստոսից առաջ կատարված: Կրճատ՝ այդ գրվում է մ. թ. ա. կամ Ք. ա. :

Մի ժողովրդի պատմությունը գրվում է պատմական աղբյուրների օգնությամբ: Այդ աղբյուրներն են նախ՝ տվյալ ժողովրդի մասին պատմող գրավոր հուշարձանները՝ արձանագրություններ, հին մատյաններ, ապա՝ հնագիտական նյութերը, տվյալ ժողովրդի ժողովրդական ստեղծագործությունը, հնում գործածված դրամները և այլն:

Հայերի ծագում՝ նշանակում է հայոց լեզվի ծագում, և երբ որոշում ենք, թե երբ և որտեղ է ծնվել հայոց լեզուն, որոշում ենք, թե երբ և որտեղ են ծնվել այդ լեզվով խոսողներն ու մտածողները՝ հայերը: Հայոց լեզուն իր բառապաշարով մեզ վկայություններ է տալիս նաև իր անցած ուղու մասին:

Ըստ Ռ. Իշխանյանի
Adaptation from R. Ishkhanyan

ՄԻ ՔԻՉ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինչպես ամեն մարդ մի ընտանիքի անդամ է կամ որևէ ընտանիքից է ծագել, այնպես էլ ամեն մի լեզու որևէ լեզվաընտանիքի մորից է ծնվել: Այդպես ամեն լեզու ունի իր մայրը և քույրերը: Այդ մայրը լեզվաբանության մեջ կոչվում է նախալեզու:

Աշխարհում շատ լեզվաընտանիքներ կան: Հիշենք դրանցից մի քանիսը: Սեմական լեզվաընտանիք, որի մեջ մտնում են արաբերենը, աստրերենը (արամեերենը), եբրա-

յերենը, աքքադերենը (ասուրաբաբելերենը) և այլն։ Սեմական այս լեզուները ծագել են մայր սեմական լեզվից։ Ապա կա իբերակովկասյան ընտանիք, որի մեջ մտնում են վրացերենը, լազերենը, աբխազերենը, ավարերենը և այլն։ Թուրքական լեզվաընտանիք, որի մեջ մտնում են թուրքերենը, յակուտերենը, ղրղըզերենը, ուզբեկերենը, ղազախերենը, ույգուրերենը, ադրբեջաներենը և այլն։ Հնդեվրոպական ընտանիք, որի մեջ մտնում են հնդկերենը, պարսկերենը, հայերենը, հունարենը, ալբաներենը, լիտվերենը, լատիշերենը, սլավոնական լեզուները (ռուսերեն, չեխերեն, ուկրաիներեն և այլն), գերմանական լեզուները (գերմաներեն, հոլանդերեն, նորվեգերեն, անգլերեն և այլն), ռոմանական լեզուները (լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն, ռումիներեն, իսպաներեն և այլն)։ Այս լեզվաընտանիքներն էլ ունեցել են իրենց մայր լեզուն։ Նկատի պետք է ունենալ, որ այժմյան որոշ լեզուների համար տվյալ լեզվաընտանիքի մայրը տատ է գալիս։ Օրինակ՝ անգլերենի, արդի գերմաներենի, հոլանդերենի, նորվեգերենի և գերմանական մյուս լեզուների մայրը հնագույն ընդհանուր գերմանական լեզուն է, իսկ սրա մայրը ընդհանուր հնդեվրոպական լեզուն է։

Կան նաև ուրիշ շատ լեզվաընտանիքներ, որոնց մասին կարելի է կարդալ լեզվաբանական գրքերում։

Իսկ ինչպե՞ս են ծնվում լեզուները։ Ոմանք կարծում են, թե նոր լեզու առաջանում է երկու կամ մի քանի տարբեր լեզուների խառնվելուց։ Սա սխալ պատկերացում է։ Ճիշտ հակառակը, նոր լեզուներ ծագել ու ծագում են որևէ լեզվի տրոհվելուց, բաժան-բաժան լինելուց։ Այդ կերպ առաջանում են բարբառներ։ Երկու, երեք բարբառներ իրարից հեռանալով՝ դառնում են առանձին լեզուներ։

Կարևոր է հիշել, որ ամեն լեզու ժամանակի ընթացքում փոփոխվում է, զարգանում, նաև տրոհվում, այսինքն՝ մասերի բաժանվում։ Լեզուն հաճախ այնքան է փոփոխվում, որ նույն ժողովուրդը իր լեզուն, որ խոսել է 1000–1500 տարի առաջ, դժվարությամբ է հասկանում։ Օրինակ՝ 5-րդ դարում խոսված հայերենը այսօր հայերը դժվարությամբ են հասկանում և կոչում են գրաբար (գրքի լեզու)։

Ըստ Ռ. Իշխանյանի
Adaptation from R. Ishkhanyan

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ԲԱՌԵՐԸ

Հայոց լեզուն հայ ժողովրդի մշտական վկան է։ Այն վկայում է Հայկական Լեռնաշխարհում շատ վաղ ժամանակներից հայերի տարածված լինելու, ինչպես և նրանց հին ու նոր հարևանների մասին։

Երբ հայկական ցեղերը, լիովին անջատվելով հնդեվրոպական մայր ժողովրդից, ինքնուրույն կյանք էին վարում, նրանք հարաբերությունների մեջ մտան հարևան այլալեզու ցեղերի ու ժողովուրդների հետ, և լեզվական փոխազդեցություններ տեղի ունեցան։ Լեզվական այդ փոխազդեցությունների չերտերը պահպանվել են հայերենում։ Բայց, իհարկե, հայոց լեզվի առանցքը, հիմնական բառապաշարը և քերականությունը, մայր լեզվից ժառանգվածն է։ Դարերի ընթացքում հայոց լեզուն շատ փոփոխվեց, ձևափոխվեցին նաև մայր լեզվից ժառանգված բառերը, բայց որքան էլ փոփոխվեցին

դրանք, միևնույն է, այսօր էլ իմացվում է, որ հնդեվրոպական են, մայր լեզվից եկող: Այդ բառերը կոչվում են բնիկ հայկական: Հիշենք դրանցից մի քանիսը՝ հայր, մայր, եղբայր, քույր, որդի, դուստր, թոռ, աչք, ձեռք, ականջ, ոտք, լեզու, ջուր, լույս և այլն:

Այլ լեզուներից հայերենին անցած բառերը կոչվում են փոխառյալ բառեր կամ փոխառություններ:

Այսպիսով՝ հայոց լեզվի հնդեվրոպական կամ բնիկ բառերը ամենահինն են, ավելի քան 5000 տարեկան: Այդ բառերի թվում շատ են հատկապես բույսեր, կենդանիներ, գյուղատնտեսական աշխատանք ու կենցաղ նշանակող բառերը, որոնք, առանց բացառության, սերտորեն առնչվում են Հայկական Լեռնաշխարհի հետ: Օրինակ՝ հայերենում կան բույսերի և պտուղների բնիկ հայկական այսպիսի անուններ՝ ծառ, բույս, խոտ, գարի, ծաղիկ, բարդի, եղևնի, բողկ, դեղձ, ծիրան, ընկույզ, սունկ և այլն: Նույնպես՝ կենդանիների ու թռչունների անուններ՝ այծ, եզ, գառ, էշ, աքաղաղ, հավ, աղվես, արծիվ, արջ, բորենի, ոզնի, ծիծեռնակ, կռունկ, օձ և այլն: Բնիկ հայկական են նաև գյուղատնտեսություն ու կենցաղ նշանակող այնպիսի բառեր, ինչպես՝ մածուն, թան, չիր, գինի, արոր, արտ, գոմ և այլն:

Հայոց լեզվի ամենահին բառերի մի մասը, ինչպես ասվեց, փոխառություններ են հայերի հնագույն հարևանների լեզուներից: Այդ հարևանները վաղուց չկան, իսկ նրանց լեզուները հազարամյակներ է, ինչ չեն խոսվում, բայց այդ լեզուների մի շարք բառեր պահպանվել են հայերենի մեջ:

Ըստ Ռ. Իշխանյանի
Adaptation from R. Ishkhanyan

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանում: Այն հսկայական մի գրադարան է, որտեղ պահվում է հին ձեռագրերի մի հսկայական հավաքածո: Մոտ 17 հազար գրքից 14 հազարը գրված է հայերեն, մնացածը՝ օտար լեզուներով: Այդ ձեռագրերը ներկայացնում են 5–18-րդ դարերի հայ պատմիչների, փիլիսոփաների, բանաստեղծների, մաթեմատիկոսների և բժիշկների գործերը: Դրանց թվում են նաև հին աշխարհի և միջնադարի հույն, սուրբ, հրեա, արաբ և այլ ժողովուրդների հեղինակային ստեղծագործություններ, որոնք թարգմանված են հայերենի: Դրանցից շատերը կարևոր հուշարձաններ են, որ պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ, քանի որ նրանց բնագրերը կորել են:

Աշխարհի ամեն կողմից Հայաստան այցելող գրոսաշրջիկները հիացած են հետևում Մատենադարանից: Ահա թե ինչ է ասել ֆրանսիացի հասարակական գործիչ Լամմանուել Ռոբլեն 1967-ին. «Այս գանձարանը իր նմանը չունի ամբողջ աշխարհում: Արժե Հայաստան այցելել տեսնելու համար թեկուզ միայն այս թանգարան-գրադարանը, ուր պահպանվում են հրաշքով փրկված շատ ձեռագրեր: Նրանք պահպանվել են գրքի նկատմամբ հայերի ունեցած մեծ սիրու չնորհիվ և վկայում են մի փառահեղ անցյալի մասին: Հայերը մեծ սիրտ ունեն. մտածող, ճաշակի տեր, հումորի զգացումով և պայծառ երևակայությամբ օժտված ժողովուրդ են: Նրանցից յուրաքանչյուրի մեջ կա մի բանաստեղծ»:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Վաղարշապատ քաղաքը գտնվում է Երևանից ընդամենը 20 կմ հեռավորության վրա։

Վաղարշապատ հիմնվել է երկրորդ դարում և եղել է Հայաստանի մայրաքաղաքը։ 301-ին՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հաստատվելուց հետո, այստեղ կառուցվել է Էջմիածնի մայր տաճարը, որը հայկական առաջին եկեղեցին է և դարձել է հայ եկեղեցու կենտրոնը։ Էջմիածնի մայր տաճարը իր գոյության 1700 տարիների ընթացքում մի քանի անգամ ենթարկվել է նորոգման ու վերակառուցման։ Այժմ նա հինգ գմբեթից բաղկացած մի պատկառելի կառույց է։ Այստեղ է գտնվում եկեղեցու թանգարանը, որտեղ պահվում են եկեղեցական զանազան իրեր, կրոնական գրքեր, գեղարվեստական ու պատմական արժեքավոր իրեր։

Էջմիածնում է գտնվում նաև Ամենայն Հայոց կաթողիկոսության աթոռը։ Այստեղ 1771-ին հիմնվել է տպարան և ապա թղթի գործարան։ 1863-ին հիմնվել է բարձրագույն մի հոգևոր դպրոց՝ Գևորգյան ճեմարանը, որը գործում է մինչև օրս և ունի հոգևոր կրթօջախի պետականորեն վավերացված կարգավիճակ։

Ներկայումս Վաղարշապատ քաղաքը հանրապետության բարգավաճող մշակութային կենտրոններից մեկն է։

ԶՎԱՐԹՆՈՑ

Հայաստանում եկեղեցական շինությունների կառուցումը լայն թափ ստացավ քրիստոնեության ընդունման հետևանքով։

Մշակվեցին տաճարների բազմազան, մեկը մյուսից գեղեցիկ տիպարներ, սակայն այդ բոլորի պսակը հանդիսացավ 7-րդ դարում կառուցված Զվարթնոց տաճարը։ Իր կառուցողական մտահղացմամբ, ճարտարապետական ձևերի հարստությամբ ու ճոխությամբ այն մինչ այդ իր հավասարը չի ունեցել։ Ասում են, որ իսկական ճարտարապետական գործի ավերակն իսկ գեղեցիկ է։ Եվ իսկապես, մարդու սիրտը հպարտությամբ և երախտագիտությամբ է լցվում, երբ մտածում է այն հանճարեղ ճարտարապետի և քարտաշ վարպետների մասին, որոնք ստեղծել են Զվարթնոցը՝ յոթերորդ դարի հայ ճարտարապետության պսակը։

Հայ պատմիչներից չատերն են հիացումով պատմում Զվարթնոց տաճարի մասին։ Պատմությունը Ներսես Շինարար կաթողիկոսին է վերագրում տաճարի կառուցումը՝ մոռանալով հիշատակել բուն կառուցողներին՝ ճարտարապետին և մյուս վարպետներին։

Տաճարի Զվարթնոց անունը ծագել է զվարթուն բառից, որը նշանակել է հրեշտակ, հետևաբար «Զվարթնոց» նշանակել «Հրեշտականոց»։

Հայտնի է, որ տաճարի բացման արարողությանը ներկա է գտնվել Բյուզանդիայի կայսր Կոստանդին Գ-ը։ Նա այնքան է հավանել տաճարը, որ որոշել է հայ ճարտարապետին իր հետ տանել, որպեսզի Կոստանդնուպոլսում էլ նման մի տաճար կառուցվի։ Սակայն ճանապարհին ճարտարապետը մահացել է։

Տաճարը կործանվել է հավանորեն 10-րդ դարում երկրաշարժի պատճառով։ Դարերի ընթացքում նրա մնացորդները հետզհետե ծածկվել են հողի հաստ շերտով, և ոչ ոք չի իմացել նրա տեղը։ Այն գտնվեց միայն 20-րդ դարի սկզբում կատարված պեղումների շնորհիվ։ Տաճարի առաջին ուսումնասիրության և նախկին ձևերի վերակազմության համար մենք պարտական ենք հայ ճարտարապետության պատմության քաջատեղյակ, մեծանուն գիտնական Թորոս Թորոմանյանին։

ՀԱՅՆ ՈՒ ՀԱՅԸ

Կուզեի աչխարհում որևէ ուժ տեսնել, որ կարողանար բնաջնջել այս ցեղը։

Աչխատե՛ք կործանել այս ցեղը։ Ենթադրենք, որ դարձյալ 1915 է։ Աչխարհը պատերազմի մեջ է. կործանե՛ք Հայաստանը։ Տեսե՛ք, թե կարո՞ղ եք։ Հանե՛ք նրանց իրենց տներից ու ուղարկե՛ք դեպի անապատ։ Թույլ մի՛ տաք, որ նրանք հաց կամ ջուր ունենան։ Այրե՛ք նրանց տներն ու եկեղեցիները։ Տեսե՛ք, թե նրանք կրկին չե՞ն ապրելու։ Տեսե՛ք, թե նրանք կրկին չե՞ն ծիծաղելու։ Տեսե՛ք, թե այս ցեղը դարձյալ չի՞ ապրելու, երբ քսան տարի անց այդ ցեղից երկուսը իրար հանդիպեն գարեջրատան մեջ, չե՞ն ծիծաղելու և խոսելու իրենց մայրենի լեզվով։ Աչխատե՛ք, տեսե՛ք, թե պիտի կարողանա՞ք արգելել, որ նրանք ծաղրեն աչխարհի մեծ գաղափարները, տեսե՛ք, թե պիտի կարողանա՞ք արգելել, որ երկու հայեր խոսեն աչխարհի մասին, աչխատե՛ք ու փորձե՛ք բնաջնջել նրանց...

Translated from W. Saroyan's
The Armenian and the Armenian

ԲԱՅՐՈՆԸ ՀԱՅԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Դժվար է գտնել մի ժողովրդի պատմություն, որն ավելի խարանված լինի հանցագործություններով, քան հայերի պատմությունն է, որոնց առաքինությունները խաղաղասիրական են, իսկ արատները՝ բռնության հետևանք։

Ինչպիսին էլ որ լինի նրանց ճակատագիրը, իսկ այն տխուր է, ինչ էլ որ նրանց ապագայում սպասվի, այդ ազգը կմնա ամենաուշագրավներից մեկը, իսկ նրա լեզուն պետք է ավելի շատ ուսումնասիրել... Եթե Աստվածաշունչը ճիշտ է մեկնաբանված, ապա դրախտը գտնվել է հենց Հայաստանում։ Թեև այն երկար ժամանակ եղել է հզոր կայսրություն, նա հազվադեպ է անկախ եղել... Պարսիկ սատրապները և թուրք փաշաները հավասարապես նպաստել են այդ երկրի քայքայմանը, ուր Աստված ստեղծել է մարդուն իր կերպարանքով և նմանությամբ։

Translated from Lord Bayron's notes about the Armenians

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՃԵՐԸ

Հայաստանում կան մեծ ու փոքր լճեր, որոնք գեղեցկացնում են նրա բնությունը։

Հայաստանի ամենից մեծ լիճը Սևանա լիճն է։ Այն գտնվում է լեռների վրա և ծովի մակերևույթից ունի 6430 ոտք բարձրություն։ Նրա երկարությունը 50 մղոն է, լայնությունը՝ 20 մղոն, իսկ խորությունը՝ 360 ոտք։ Սևանա լճի ջուրը քաղցրահամ է, այսինքն՝ խմելի է։ Այն հարուստ է շատ համեղ ձկներով, որոնցից ամենահամեղը «իշխան» անունով սաղմոսաընտանիքի ձուկն է։

Սևանա լճի վրա երթևեկում են փոքրիկ շոգենավեր, առագաստանավեր և մակույկներ։

Սևանից բխում է Հրազդան գետը։

Սևանից ավելի փոքրիկ է Արփա լիճը, որը ծովից 6706 ոտք բարձր է։ Արփա լճի ջուրը ևս քաղցրահամ է։ Նրանից է սկիզբ առնում Ախուրյան գետը։

ՍԵՎԱՆԱ ԼԻՃԸ

Սևանա լիճը Հայաստանի բնության հրաշալիքներից մեկն է։ Այդ լիճը, որ հայտնի է նաև Գեղամա լիճ անունով, երեք կողմից շրջապատված է ժայռերով ու լեռներով, իսկ մեկ կողմը բաց է։

Լճի ջուրը քաղցրահամ է և վճիտ։ Օրը մի քանի անգամ լիճը փոխում է իր գույնը։ Այնտեղ ապրում է իշխանը՝ սաղմոնների ընտանիքի ամենահամեղ ձուկը։

Սևան քաղաքի մոտ կա ատոմակայան, որը լույս է մատակարարում Հայաստանի քաղաքներին ու ավաններին։

20-րդ դարում 70 տարվա արդյունաբերական չհագեցման հետևանքով Սևանի ջուրն սկսեց զգալիորեն պակասել, և լճի ջրի մակարդակն իջնելով՝ Սևանի կղզին դարձավ թերակղզի։ Այժմ, կապույտ ջրերի կենտրոնում, հեռվից երևում են մենավոր վանքն ու եկեղեցին՝ խաչաձև գմբեթով, որոնք կառուցվել են սրանից 12 դար առաջ։

21-րդ դարում, հուրախտություն բոլոր հայերի, Սևանն սկսեց կրկին մեծանալ։ Դա տեղի ունեցավ ամենից առաջ հայ ականավոր ճարտարագետ-երկրաբան, ակադեմիկոս Գևորգ Տեր-Ստեփանյանի ջանքերի շնորհիվ, որը հիմնավորել է Սևանա լճի մակարդակի պահպանման համար Սևան-Հրազդան կասկադի չինարարությունը դեռևս Ստալինյան տարիների դժվարագույն պայմաններում։ 2001-ին Հայաստանի Ազգային ժողովի մշակած «Սևանա լճի մասին» օրենքի կիրառման շնորհիվ լիճը չորս տարում բարձրացավ 150 սանտիմետրով։ Ծրագիր կա լճի մակարդակը առաջիկա 30 տարում բարձրացնել 6 մետրով՝ այն հասցնելով 1954 թվականի մակարդակին, այսինքն՝ ծովի մակերևույթից 1904 մետր բարձրության։

Գեղեցիկ է Սևանա լիճը գիշերով։ Ալիքները մեղմորեն խփվում են ժայռերին, և ջրի մակերեսին արտացոլվում են լուսինն ու հազարավոր աստղերը։

ARTICLES FROM NEWSPAPERS

ՄԱՆՈՒՇՅԱՆԸ ՍԵՆՏ ԷՏՅԵՆԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍՈՒՄ

Սենտ Էտյենի (Ֆրանսիա) քաղաքապետարանում բացվել է Դիմադրության չարժման օտարերկրացի մարտիկներին նվիրված ցուցահանդես, որտեղ գլխավոր տեղ է հատկացված Միսաք Մանուշյանի հակաֆաշիստական «Կարմիր պաստառ» խմբին: Խմբի միակ փրկված անդամ Ալբեն Շաքարյանը ծեր է և վատառողջության պատճառով չի մասնակցել ցուցահանդեսի բացմանը:

Ցուցահանդեսը կազմակերպվել է Լուարի հայ մշակույթի տան նախագահ Ժան Գրիգորյանի նախաձեռնությամբ: Իսկ կլերմոն Ֆերան քաղաքի թաղերախմբերից մեկը հանդես է եկել Մանուշյանի խմբի գնդակահարությանը նվիրված բեմադրությամբ:

Մահապատժից մի քանի ժամ առաջ կնոջը՝ Մելինեին գրած նամակում Մանուշյանը վստահություն է հայտնել, որ «Ֆրանսիայի ժողովուրդը և ազատության բոլոր մարտիկները կկարողանան հարգել խմբի հիշատակը»:

Պետրոս Քեչիչյան
AZG Armenian Daily #118, 23/06/2007

ԴՐՈՇՄԱԹՂԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Տրոքադերոյի ծովային թանգարանում, ուր հայտնությամբ չարունակվում է Հովհաննես Այվազովսկու ցուցահանդեսը, ներկայացվել են հայ-ֆրանսիական բարեկամության խորհրդանշող դրոշմանիշներ: 54 և 85 եվրո արժողությամբ դրոշմանիշերից առաջինի վրա՝ «Արմենի-Ֆրանս» եզրանիշով, պատկերված է XV դարի հայկական մանրանկարչության մի դրվագ, երկրորդի վրա («Ֆրանս-Արմենի»)՝ Ռենսի մայր տաճարից «Հրեշտակի ժպիտը» քանդակի պատկերը: Ողջունի խոսքով ելույթ է ունեցել Ֆրանսիայում Հայաստանի դեսպան Ի. Նալբանդյանը և չնորհավորել արարողության ներկա Շառլ Ազնավուրի ծննդյան տարեդարձը: Դեսպանը տեղեկացրել է, որ նույն օրը Երևանում ևս ներկայացվել են դրոշմանիշերը՝ հայերեն եզրանիշով (70 և 350 դրամ արժողությամբ): Ելույթ է ունեցել նաև Ֆրանսիական համապատասխան կազմակերպության ներկայացուցիչը, ապա՝ Շառլ Ազնավուրը, տեղեկացնում է «Յառաջ» օրաթերթը:

Մելանյա Բադալյան
AZG Armenian Daily #115, 20/06/2007

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Զարգացման հայկական գործակալությունում երեկ տեղի ունեցած Հունաստանի արտաքին գործերի նախարարի փոխանորդ՝ Իոաննիս Մագրիոտիսի մամուլի ասուլիսի ժամանակ ներկայացվեց Սևծովյան և միջբալկանյան բիզնես-կենտրոնի կողմից Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում իրագործվելիք ծրագիր: Այն կսկսվի 2003 թ.-ին և կտևի երեք տարի: Հունաստանի պետական բյուջեից հատկացվող վեց մլն եվրո սկզբնական գումարին հավանաբար կավելանա Հունաստանի առևտրային բանկի, այլ կառույցների մասնակցությունը:

Բոլոր երեք երկրներում ծրագիրը կունենա երեք ուղղություն: Առաջին՝ առողջապահություն և բժշկական ծառայություններ: Նախատեսվում է բժշկական օգնություն տրամադրել հատկապես այն մարդկանց, որոնք հեռավոր վայրերում են ապրում: Արտաքին գործերի նախարարի փոխանորդը նշեց, որ իրենք այդ փորձն ունեն: 1998 թ.-ից երկու բժշկական կենտրոններ են գործում Ալավերդիում և Երևանում:

Երկրորդ՝ կրթություն և մշակույթ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել կրթության և գիտության նախարարության, օտար լեզուների համալսարանի և տեղի հունական համայնքի հետ Հայաստանում հունական մշակույթի և լեզվի կենտրոն ստեղծելու մասին:

Եվ վերջապես երրորդ ուղղությունը բիզնեսին աջակցելն է: Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանում 30-60 փոքր, ընտանեկան ձեռնարկություններ: Այժմ ուսումնասիրություններ են կատարվում: Իոաննիս Մագրիոտիսը նշում է, որ թեև առաջին անգամ են նման ձեռնարկման գնում, բայց համոզված են հաջողության մեջ:

Որքա՞ն գումար պետք է տրամադրվի այդ երեք երկրներից յուրաքանչյուրին՝ հարցին Հունաստանի փոխարտգործնախարարը պատասխանեց, որ դա կախված է տվյալ երկրի հնարավորություններից և ցուցաբերվող հետաքրքրություններից: Պրն Մագրիոտիսի կարծիքով՝ Հայաստանի պարագայում կօգտագործվի այդ գումարից 1-1,5 մլն եվրո:

Մամուլի ասուլիսի ժամանակ Հունաստանի ներկայացուցիչը նշեց, որ իր երկիրը միջազգային չրջանակներում մշտապես աջակցում է Հայաստանին, ինչը բխում է դարերի խորքից եկող երկու ժողովուրդների ամուր բարեկամությունից: Տեղեկացվեց նաև, որ Հունաստանն այս տարի չուրջ 100 հազար եվրո օգնություն կցուցաբերի Հայաստանին՝ ցրտահարության վնասները փոքր-ինչ փոխհատուցելու համար:

AZG Armenian Daily #075, 19/04/2003

1915-Ի ՋՈՀԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ամերիկահայ փաստաբաններ Վարդգես Եղիայանի, Մարկ Կիրակոսի և Բրայն Քաբաթեքի՝ «Նյու Յորք Լայֆ» ապահովագրական ընկերության դեմ բացված դատով 20 մլն դոլարի հատուցում տրվեց 1915-ի զոհերի ժառանգներին: Այժմ նրանք, ինչպես հաղորդել ենք, բանակցություններ են վարում Ֆրանսիական «Աքսա» ընկերության հետ, որը համաձայնել է 17,5 մլն դոլար հատուցել զոհերի չառավիղներին, որից 3 մլն հատկացվելու է Ֆրանսիայի հայկական կազմակերպություններին: «Աքսայի» ավանդատուները հրապարակված ցանկում իրենց անունները ճշտելու համար կարող են դիմել՝ www.armenianinsurencesettlement.com *կայքէջ, մինչև այս տարվա հոկտեմբեր ամիսը: Փարիզի «Յառաջը» տեղեկացնում է Ֆրանսիայում նմանաբնույթ ցանկի հրապարակման դժվարությունների մասին՝ կապված կրոնական, ցեղային պատկանելության հանգամանքներով: Հայոց ցեղասպանության զոհերի պարագայում այդ դժվարություններն արդեն հաղթահարված են:*

Մայիսի սկզբներին ամերիկահայ փաստաբանները Փարիզից այցելելու էին Բեռլին՝ հանդիպելու գերմանական «Դոյչե բանկի» պատասխանատուների հետ, որոնք, սակայն, դժվարանում են այս հարցում: «Յառաջը» նշում է, որ այս երևույթների պատճառներից են այս երկրի գրեթե մեկ դարվա լռությունը, 1915-ի դեպքերին Գերմանիայի մեղսակցությունը, նաև Թուրքիայի գործադրած ճնշումները: Ըստ որում, ինչպես նկատում է թերթը, «Նյու Յորք Լայֆի» պարագայում այդ ճնշումը այնքան էլ զգալի չի եղել, որքան «Աքսայի» նկատմամբ, իսկ գերմանական դրամատուն դեմ բացված դատի առիթով թուրքական դեսպանատունը դիմել է դատարան՝ ցեղասպանության իրողությունը չընդունելու նամակ-պահանջով:

Նման պահանջով դատ է բացվել նաև «Դրեզդներ» բանկի դեմ, որը համարվում է հայ ավանդատուների գումարներ յուրացնող: Հայերը այս բանկի գանձարկղերին ի պահ էին տվել նաև տարբեր արժեքներ, չրջանառու է նաև լուրը՝ 30 տոննա ձուլածո ոսկու մասին: Գումարներից զատ Բեռլին-Բաղդադ երկաթուղուն առնչվող այլ խնդիրներ ևս առկա են, որ վերաբերում են «Դոյչե բանկին» պատկանող այս երկաթուղու չինարարության վրա աշխատող հարյուր հազարավոր հայերի վճարումներին, տեղում հաշվեհարդարի ենթարկելուց կամ Դեր Զորի անապատները քշելուց առաջ: Հիշեցնենք, որ «Դոյչե բանկը» Բեռլին-Բաղդադ երկաթուղու չինարարության գլխավոր ներդնողն ու կապալառուն էր:

«Դոյչե բանկի» խուսափողականությունը փաստաբաններին ստիպում է հանդիպում փնտրել Գերմանիայի ֆինանսների նախարարության պաշտոնյաների հետ:

«Յառաջը» տեղեկացնում է, որ դրամատնային հաշիվների հետապնդման համար ժամանակի սահմանափակում չկա, սակայն դրամատնային արկղերում պահված ունեցվածքի վերջին պայմանաժամը մինչև 2016 թվականն է:

Ամերիկահայ փաստաբանները ասել են, որ «Դոյչե բանկի» հետ հիշյալ հարցով իրենց նախաձեռնած գործը վերջինը չէ, և որ իրենք չարունակելու են հետապնդել Հայ դատի մինչ այսօր չբարձրացրած հարցը առնվազն 20 տարբեր կազմակերպությունների դեմ:

AZG Armenian Daily #118, 23/06/2007

ՆՈՐ ՕԴՈՒԼԻ. ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԱՆՈՒՄ Է «ԶՎԱՐԹՆՈՑԻ» ՕԴԱՅԻՆ ՆԱՎԱՏՈՐՄԻՂԻՆ

Հունիսի 3-ին, վաղ առավոտյան Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում վայրէջք կատարեց գերմանական «Լուֆթհանզա» ավիաընկերության «Աերոբուս-319» օդանավը՝ սկիզբ դնելով Մյունխեն-Երևան-Մյունխեն չաբաթը երեք անգամ իրականացվող նոր չվերթին:

Այսպիսով, «Լուֆթհանզան» դարձավ Հայաստանում գործող չորրորդ եվրոպական ավիաընկերությունը՝ ավստրիական, բրիտանական և չեխական ընկերությունների հետ:

«Ըստ մեր հետազոտությունների՝ Հայաստանն այնքան էլ հարուստ երկիր չէ, նույնիսկ կարելի է ասել աղքատ երկիր է, – ասում է «Լուֆթհանզա» ընկերության Հայաստանի և Ուկրաինայի ներկայացուցիչ Անտոնիո Կուոկոն: –Սակայն Հայաստանի տնտեսությունը արագ զարգանում է, և դեկտեմբերին Բեռլինում Գերմանիայի ու Հայաստանի նախագահները որոշեցին խորացնել հարաբերությունները երկու երկրների միջև, իսկ այս առումով ավիաընկերությունները լավագույն տարբերակներից են»:

Հունիսի 3-ից մինչև հոկտեմբերի 24-ը ներառյալ ընկերությունը Երևանից մեկնող ուղևորների համար սահմանել է տոմսի հատուկ գներ: Գերմանիայի ցանկացած քաղաքի տոմսն արժե 299 դոլար (հետադարձ՝ դրամարած հարկը: Համեմատության կարգով «Ավստրիական ավիաուղիներում» 410 դոլար է), որևէ եվրոպական երկրինը՝ 349 դոլար, Հյուսիսային Ամերիկայինը կամ Աֆրիկայինը՝ 599 դոլար:

«Լուֆթհանզայի» մուտքը համընկավ այս չաբաթ «Բրիտիշ էյրվեյզի» հայտարարարության, որ հունիսի 18-ից ընկերությունը կրկնապատկում է Լոնդոն-Երևան թռիչքները՝ հասցնելով չաբաթական վեցի: Հայաստանն աղքատ երկիր է, թե ոչ՝ եվրոպական ավիաընկերությունները մրցության մեջ են մտել նրա օդային շուկայի համար:

«Մեր փորձագետները փետրվարին ուսումնասիրություններ են անցկացրել՝ գնահատելու հայկական շուկան և նրա զարգացումները, որպեսզի պարզեն, թե ինչպես կարող ենք բարձրորակ ծառայություններ մատուցել Հայաստանից Եվրոպա մեկնող ուղևորներին: Այդ ուսումնասիրությունները դրական արդյունք տվեցին», – ասում է Կուոկոն:

«Լուֆթհանզա» ընկերության Երևան-Մյունխեն և հակառակ ուղղությամբ տոմսերն սկսել են վաճառել ապրիլից:

Հաջորդ ուղղությունը կբացվի հունիսի 5-ին՝ Մյունխեն-Թբիլիսի չվերթով (չաբաթը երեք թռիչք):

«Այս չվերթներով մենք նպատակ չունենք փորձեր կատարելու: Մենք վստահ ենք, որ Հայաստանի և Վրաստանի հետ հաստատվող կապերը դրական արդյունք կունենան, և համոզված ենք Հայաստանի և Վրաստանի զարգացման մեջ: Ունենալով Մոսկվայի և Կիևի դրական փորձը՝ համոզված ենք, որ այս երկրներում նույնպես մեր չվերթների քանակն ապագայում կավելանա», – ասաց գրասենյակի տնօրեն Օտտը:

Սուրեն Դեհերյան
Armenia Now.com, June 2005

ՄՈՍԿՎԱՆ, ԼՈՆԴՈՆԸ ԵՎ ՍԵՈՒԼԸ ԱՄԵՆԱԹԱՆԿ ՔԱՂԱՔՆԵՐՆ ԵՆ

«Մերսեր» հետազոտական ընկերության տվյալները վկայակոչելով՝ Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Մոսկվան հյուրերի համար մնում է աշխարհի ամենաթանկ քաղաքը:

Երկրորդ տեղում Լոնդոնն է, երրորդում՝ Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլը: Չորրորդ և հինգերորդ տեղերը գբաղեցնում են Տոկիոն և Հոնկոնգը: Իսկ ամենաէժան քաղաքն է Պարագվայի մայրաքաղաք Ասունսիոնը:

Հետազոտության հեղինակներն աշխարհի 143 քաղաքներում համեմատել են 200-ից ավելի ապրանքների ու ապասարկումների գները (կացարանի վարձակալում, տրանսպորտ, սնունդ, հագուստ, կենցաղի առարկաներ, զվարճանքներ և այլն)՝ որպես չափանմուշ վերցնելով ԱՄՆ-ի ամենաթանկ քաղաք Նյու Յորքը:

Վերջինիս համեմատությամբ Մոսկվան 34,4 տոկոսով ավելի թանկ քաղաք է: Ընդամին այս ցուցանիշը 11 տոկոսով բարձր է անցյալ տարվա համապատասխան ցուցանիշից: Լոնդոնը Նյու Յորքից թանկ է 26,3 տոկոսով: Անցյալ տարվա համեմատությամբ թանկացումը կազմել է 16 տոկոս:

Ամենաթանկ քաղաքների տասնյակում տեղեր են գբաղեցնում նաև Կոպենհագենը, Ժնևը, Ցյուրիխը, Օսլոն, Օսական և այլն: Ամենաէժան եվրոպական քաղաքը Սոֆիան է: Պետերբուրգը 12-րդ տեղում է, իսկ Փարիզը՝ 13-րդ:

AZG Armenian Daily #114, 19/06/2007

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐՊԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ Է, ՈՐ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՌՆՎՈՒՄ ԵՆ ԿԱՆԱԴԱՅԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ

Կանադայի Ազգային էթնիկ մամուլի խորհրդի կլոր սեղանի ժամանակ կանադայի վարչապետ Սթիվեն Հարպերը հաստատել է, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը երկրի պետական քաղաքականություն է, այլ ոչ թե «որոշ ընտրված մարդկանց դիրքորոշում», ինչպես ոմանք փորձում են ներկայացնել: Կանադայի Հայ դատի հանձնախմբի փոխանցմամբ, Սթիվեն Հարպերը ընդգծել է այլ պետությունների ներկայացուցիչների՝ կանադայի ներքին գործերին խառնվելու անընդունելիությունը: «Որպես կառավարության ղեկավար՝ չեմ կարող թելադրել մամուլին՝ ինչ գրել թերթերում. նաև այլ պետությունները չեն կարող մեզ թելադրել՝ ինչ գրել», – հայտարարել է կանադայի վարչապետը:

Հիշեցնենք, որ ապրիլի 24-ին Սթիվեն Հարպերը ելույթ է ունեցել Հայոց ցեղասպանության տարելիցի կապակցությամբ, ինչի համար «խիստ քննադատության» էր ենթարկվել Թուրքիայի ԱԳՆ-ի կողմից: Իսկ ապրիլի 24-ից մեկ շաբաթ առաջ Թուրքիան «զգուշացնում էր» Սթիվեն Հարպերին ելույթ չունենալ այնպիսի հայտարարություններով, որում 1915 թվականի իրադարձությունները ցեղասպանություն են կոչվում:

Աղավնի Հարությունյան
AZG Armenian Daily #115, 20/06/2007

ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԶԻՆՎՈՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՓԱԽՍՏԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ Է ԽՆԴՐՈՒՄ

Ադրբեջանցի զինվոր Սամիր Մամեդովը Հայաստանի իշխանություններին խնդրել է իրեն փախստականի կարգավիճակ տալ: «Արմինֆո» գործակալության տեղեկացմամբ՝ այս մասին տեղեկացրել է Հայաստանի պետական հանձնաժողովի աշխատանքային խմբի ղեկավար Արմեն Գաբրիելյանը: Սամիր Մամեդովը Ռոբերտ Քոչարյանին է դիմել մայիսի 3-ին՝ խնդրելով իրեն փախստականի կարգավիճակ տալ:

Մամեդովը հայկական սահմանն անցել էր անցյալ տարվա դեկտեմբեր 24-ին և այլևս չի ցանկանում վերադառնալ Ադրբեջան՝ ակնհայտորեն վախենալով ռազմական դատարանի առաջ հայտնվելուց և հայրենիքի դավաճանության հոդվածով դատապարտվելուց, ինչպիսի ճակատագրի են «արժանացել» Հայաստանում հայտնված մյուս ադրբեջանցի զինվորները:

AZG Armenian Daily #111, 14/06/2007

ՍԻՄՈՆՍԸ ԳՈՀ Է ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՑ

Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ռոբերտ Սիմոնսը, գոհունակություն հայտնելով Հյուսիսատլանտյան գործընկերության գործողությունների ծրագրի փուլերը հաջողությամբ իրականացնելու առնչությամբ, ընդգծել է, որ գործընկերությունը չի մրցակցում այլ անվտանգության համակարգերի հետ՝ լինի դա Ռուսաստանը կամ Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ հանդիպմանը պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանն անհանգստություն է հայտնել Ադրբեջանի՝ Եվրոպայում սովորական զինված ուժերի պայմանագրից դուրս գալու վերջերս արած հայտարարության կապակցությամբ: Ռոբերտ Սիմոնսը հայտնել է, որ ՆԱՏՕ-ն մոտ ժամանակներս հատուկ քննարկումներ է կազմակերպելու Ռուսաստանի և Ադրբեջանի կողմից պայմանագրի հանդեպ մորատորիում հայտարարելու վերաբերյալ:

Ռոբերտ Սիմոնսը կարևորել է Հայաստանի մասնակցությունը միջազգային խաղաղարար առաքելություններում, բարձր գնահատելով գործընկերությունը մասնավորապես Կոսովոյում: Կողմերն անդրադարձել են Աֆղանստանում գործող ՆԱՏՕ-ի ISAF-*ի (Միջազգային անվտանգության աջակցության ուժեր) կազմում Հայաստանից բժիշկներ ներառելու հեռանկարին: Պաշտպանության նախարար Միքայել Հարությունյանն իր հերթին տեղեկացրել է, որ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանը մոտ օրերս կունենա զինված ուժերի հարցերով գլխավոր ներկայացուցիչ, ինչը կնպաստի երկրի զինված ուժերում մարդու իրավունքների ինստիտուտի ստեղծմանը:*

Աղավնի Հարությունյան
AZG Armenian Daily #118, 23/06/2007

«ԱՐՅՈՒՆՈՏ ՁԵՌՔԵՐԸ ՀԱՍԱՆ ԴԻՆՔԻՆ»

Հայտարարել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը

Երեկ Ստամբուլում սպանվել է «Ակօս» շաբաթաթերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքը: Սպանությունը կատարվել է ցերեկով այն պահին, երբ Դինքը դուրս է եկել խմբագրության շենքից: Ենթադրվում է, որ մարդասպանը եղել է երիտասարդ, մոտ 18–19 տարեկան: Սպանությունը կատարել է ատրճանակի կրակոցներով: Սպանության վայրում ոստիկանությունը հայտնաբերել է չորս պարկուճ: Ստամբուլի ոստիկանությունը մարդասպանին հայտնաբերելու համար ձեռնարկել է արտակարգ միջոցառումներ: Ուշ երեկոյան ձերբակալվել են երկու կասկածելիներ:

Այս վայրագ սպանությունը բուռն զայրույթ է առաջ բերել պոլսահայ համայնքում, ինչպես նաև թուրք մտավորականների շրջանում, որոնք, տեղեկանալով ողբերգական միջադեպի մասին, սպանությունը դատապարտելու համար չտապել են «Ակօսի» խմբագրություն: Սպանությունից հետո այնտեղ է չտապել նաև Ստամբուլի նահանգապետ Մուամմեր Գյուլերը: Այդ ընթացքում Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը հանդես է եկել սպանությունը դատապարտող հայտարարությամբ:

Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Դինքի սպանության մասին իմացել է նախարարների խորհրդի նիստի ժամանակ և ընդհատելով նիստը՝ անհրաժեշտ հրահանգներ է տվել սպանության բացահայտման ուղղությամբ: Վարչապետը կարգադրել է ներքին գործերի և արդարադատության նախարարներին անել հնարավորը սպանությունը բացահայտելու համար: Երկու նախարարներն իսկույն ուղևորվել են Ստամբուլ: Էրդողանը խորը վշտով նշել է, որ արյունոտ ձեռքերն այս անգամ հասել են Դինքին: «Այս հարձակումն, ի դեմս Հրանտ Դինքի, կատարվել է մեր բոլորի դեմ, ուղղված է մեր միասնության և կայունության դեմ»:

Դինքի սպանությունը սառը ցնցուղի ազդեցություն ունեցավ նաև թուրքական մամուլի ներկայացուցիչների վրա: Նրանք, այդ թվում հանրային հեռուստառադիոընկերությունը, "Reuters"-ը ինտերնետային էջերում իսկույն արձագանքել են միջադեպին: Նրանց են միացել նաև CNN-ը, BBC-ն և այլ միջազգային լրատվական միջոցներ:

«Ազգի» հետ զրույցում «Մարմարա» թերթի գլխավոր խմբագիր Ռոբեր Հատտեճյանը նշեց, որ իրենք խորապես ցնցված են սպանությունից: «Ինձ բարոյալքված, հուսախաբ եմ զգում: Այս երկրում հանրային կարծիքը պատրաստ էր խիզախ մտքեր լսելու»: Ըստ Ռոբեր Հատտեճյանի՝ Հրանտ Դինքի սպանությունը հարված էր հայ համայնքին, Թուրքիային, խոսքի ազատությանը:

Հրանտ Դինքը ծնվել է 1954 թվականին Մալաթիայում և Ստամբուլի համալսարանի շրջանավարտ է: 1961 թ. ընտանիքը տեղափոխվել է Ստամբուլ: 1996 թ. ապրիլից Դինքն «Ակօսի» գլխավոր խմբագիրն էր: Դինքին թուրքական արդարադատությունը հետապնդել է համարձակ հայացքների համար: Նա 2005 թ. թուրքերի ինքնությունը վիրավորելու համար դատապարտվել էր 6 ամսվա ազատազրկման: Սակայն դա չխանգարեց նրան, որ չարունակի բարձրաձայն խոսել Հայոց ցեղասպանության մասին: Վերջին շրջանում հաճախակի էին թուրք ազգայնամոլների սպառնալիքները նրա նկատմամբ:

Ըստ Հակոբ Ջաքրյանի

Adaptation from AZG Armenian Daily #010, 20/01/2007

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Մայիսի 17-ին Ռուսաստանի մայրաքաղաքի Քրիստոս Ամենափրկիչ տաճարում Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ Բ-ի և Արտեկրի Ռուս ուղղափառ եկեղեցու առաջնորդ և Նյու Յորքի միտրոպոլիտ Լավրի միջև կնքվեց ու սրբագործվեց մի համաձայնագիր (կանոնական միաբանման կամ հաղորդության [communion] *ակտ), որը ուշագրավ երևույթ է նաև մեզ՝ հայերիս համար: Փաստորեն այդ ակտով հաջողությամբ պսակվեցին 1991 թ.-ից՝ Խորհրդային Միության փլուզումից ի վեր Ռուս ուղղափառ եկեղեցու երկու հատվածների միջև սկսված և վերջին երեք տարիներին պաշտոնական բնույթ ստացած բանակցությունները: Ռուս եկեղեցու պառակտումն սկսվել էր 1917 թ. բոլշևիկյան հեղափոխությամբ՝ ցարի ու նրա գերդաստանի անդամների գնդակահարությանը հետևած իրադարձություններով, Ռուսաստանում պաշտոնական աթեիզմի հաստատումով: Ռուս եկեղեցու Նյու Յորքի թեմը և հետագայում արտերկրի այլ թեմեր իրենց անհնազանդությունն էին հայտնել Ռուսաստանի պատրիարքությանը, իսկ 1927 թ.-ին, երբ Ռուսիո Սերգիյ պատրիարքը եկեղեցին կատարյալ ոչնչացումից փրկելու մտահոգությամբ պաշտոնապես իր հավատարմությունն էր հայտնել կոմունիստական կառավարությանը, կապերն ամբողջովին խզվել էին երկու հատվածների միջև, և անջատյալ հատվածն իրեն հայտարարել էր Ռուս ուղղափառ հավատքի միակ պաշտպանը:*

Ստորագրված համաձայնագիրը արտերկրի Ռուս եկեղեցուն վերապահում է ներքին, նյութական, վարչական և այլ իրավասություններ՝ ինքնավարության տեսքով: Սակայն, մյուս կողմից, եկեղեցու մեկությունն է ապահովում Ռուսաստանի պատրիարքի մականի ներքո, վերջինիս վերապահելով արտերկրի եկեղեցու հովվապետի ընտրությունը հաստատելու (կետ 4), արտերկրի թեմերի լուծարման և կազմավորման որոշումներին համաձայնելու (կետ 6), թեմական առաջնորդների (հայրապետների) ընտրությունը վավերացնելու (կետ 7), եկեղեցական արարողությունների ընթացքում առաջինի՝ Ռուսիո պատրիարքի անունը հիշելու (կետ 9), մյուռոնը Ռուսիո պատրիարքից ստանալու (կետ 13) և այլ կարևորագույն իրավասություններ:

Համաձայնագրի գոյացման և կայացման գործում վճռական էր Ռուսաստանի նախագահի դերակատարումը, որը նախագահեց համաձայնագրի ստորագրման արարողությունը և ստորագրելուց առաջ խաչակնքվեց և սրբապատկերը համբուրեց: Նա ամենևին չթաքցրեց, ընդհակառակն՝ ամեն ձևով ընդգծեց պետության և անձամբ իր դերը եկեղեցու վերամիավորման գործում: Եվ այդ դերն է, որ պետք է ներկայումս օրինակ և նախաշավիղ դառնա հայ եկեղեցու վերամիավորման համար:

Սա այն առիթը չէ խորանալու հայ եկեղեցու պառակտման պատճառների մեջ, վերստին բացելու հին վերքեր, հակառակ որ դրանք դեռ արյունահոսում են: Բայց իսկական առիթն է ընդգծելու մեր պետական իշխանություններից և անձամբ հանրապետության նախագահից ակնկալվող դրական ու գործնական միջամտության անհրաժեշտությունը: Եթե բազմամիլիոն ռուս ժողովրդի միասնության համար եկեղեցու միությունը կարևոր է, ապա հայ ժողովրդի համար՝ առավել ևս:

Ըստ Հակոբ Ավետիքյանի
Adaptation from AZG Armenian Daily #112, 15/06/1991

ԼՈՒՐԵՐ ԴԵՍԻՑ ՈՒ ԴԵՆԻՑ

ԵՐԵՎԱՆ: 2007 թ. հունիսի 15-ին Մայր Աթոռ Էջմիածնում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն ընդունել է կրթության, գիտության, ազգային փոքրամասնությունների և կրոնի գծով ՀՀ նախագահի խորհրդականին կից ստեղծված մարմնի անդամներին՝ նախագահի խորհրդական Սերգո Երիցյանի գլխավորությամբ: Հանդիպմանը ներկա են եղել Հայաստանի ռուսական, քրդական, հրեական, ասորական, ուկրաինական, բելառուսական, լեհական, վրացական և հունական համայնքների ներկայացուցիչներ:

Շնորհակալություն հայտնելով վեհափառ հայրապետին՝ կրթության, գիտության, ազգային փոքրամասնությունների և կրոնի գծով նախագահի խորհրդական Սերգո Երիցյանը նշել է, որ վեհափառը ոչ միայն տարբերություն չի դրել, այլև զորացրել է ժողովուրդների բարեկամության ոգին: Ամենայն հայոց կաթողիկոսն էլ իր հերթին հորդորել է ազգային փոքրամասնություններին պահպանել ազգային դիմագիծը և իրրև հավատարիմ քաղաքացիներ անել կարելին ի բարօրություն Հայաստանի:

ՓԱՐԻԶ: «Ինձ համար մեծ պատիվ էր ստանալ ձեր չնորհավորանքը Ֆրանսիայի նախագահ ընտրվելու կապակցությամբ», - ասում է Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինին հղած նամակում ի պատասխան նրա չնորհավորական ուղերձի Ֆրանսիայի նախագահի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ: «Ես կանեմ հնարավոր ամեն ինչ հայ և ֆրանսիացի ժողովուրդների միջև դարավոր բարեկամության ամրապնդման համար»: Ֆրանսիայի նախագահն ընդգծել է, որ Ֆրանսիայի վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ անփոփոխ կմնա: «Ես զգացված եմ Հայոց ցեղասպանության հարցում Ֆրանսիայի նախագահի դիրքորոշման առիթով նրա հասցեին ասված ձեր խոսքերից և համոզված եմ, որ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը այդ երկրի բարոյական պարտականությունն է: Հավաստիացնում եմ ձեզ, որ առաջիկայում ևս նույնքան վճռական կգործեմ այդ ուղղությամբ»:

ԿԱՀԻՐԵ: Այսօրվա դրությամբ արաբական աշխարհի բնակչությունը կազմում է 331 միլիոն, հաղորդել է Եգիպտոսի Մենա լրատվական գործակալությունը՝ վկայակոչելով արաբական պետությունների լիգայի տնտեսական կոմիտեի զեկուցագիրը: Ընդամին բնակչության աճի տեմպերը տարեկան 3 տոկոսից ավելի են (1,7 տոկոս): Կանխատեսումների համաձայն՝ 2000 թվականին արաբական երկրների ընդհանուր բնակչությունը կհասնի 400 միլիոնի:

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ: Խորհրդային սահմանապահները Խաբարովսկի չորս դպրոցականների բռնել են սահմանն անցնելիս: Նրանցից ամենամեծը 12 տարեկան է: Սահմանախախտները հանդերձավորված են եղել ինչպես հարկն է՝ քարտեզներով, կողմնացույցերով, աննդամթերքներով: Նրանց նպատակն է եղել հասնել չինական Շաուլին մենաստանը՝ ուշու սովորելու համար:

ՍԻԴՆԻ: Վերջերս Ռեմբրանդտի «Բեհեղեբուղը Դավիթ թագավորի նամակը կար-

դալիա» կտավը անսպասելիորեն գրավեց ավստրալիացի բժիշկների ուշադրությունը։ «Այն, ինչը արվեստասերների համար դասական Ռեմբրանդտ է, բժիշկների համար դասական քաղցկեղ է», – ասել է նրանցից մեկը։ Եզրակացության առիթը Բեհեղեբուղի ձախ կրծքին քաղցկեղի պարզ երևացող ախտանշաններն են։ Որ բժիշկները ճիշտ են նկատել՝ փաստ է։ Ռեմբրանդտի բնորդուհին եղել է նրա կինը՝ Հենդրիկե Սոֆելսը, որը քաղցկեղից մահացել է կտավի ստեղծումից ինը տարի անց՝ 36 տարեկան հասակում։

ԲԵԼԳՐԱԴ։ *Հարավսլավիայի արքունիքի աքսորված թագաժառանգը առաջին անգամ պետք է այցելի իր հայրենիքը, որովհետև չատ մտահոգ է այնտեղ ծավալված իրադարձություններով։ Իշխան Ալեքսանդրը Բելգրադ կժամանի հոկտեմբերի 5–ին և կփորձի խաղաղության բանակցություններ վարել հակամարտ կողմերի հետ։ Հիշենք, որ Հարավսլավիայի արքունիքը աքսորվել էր դեռևս 1941–ին։*

ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ։ *Այն հարցին, թե անցյալի քաղաքական գործիչներից ով է առավել համակրելի ռուս գյուղացիների համար, մեծամասնությունը տվել է Մալենկովի ազգանունը՝ պատճառաբանելով, որ 50–ական թվականների կեսերին նա զգալիորեն թուլացրեց հարկերը և ընդարձակեց տնամերձ հողամասերի թույլատրելի սահմանները։ Երկրորդ տեղում հայտնվել է ... Լեոնիդ Բրեժնևը։ Նշվել է նրա վաստակը հասարակության կայունության գործում։*

Գործող քաղաքական գործիչներից մրցակից չի ունեցել ոչ անհայտ Ժիրինովսկին։ Սա էլ բարձր պատվի է արժանացել վճռականության և իր նպատակին հասնելու կամքի համար։

ՄՈՍԿՎԱ։ *Շարունակվում է Լենինի հուշարձանների պղծումը։ Ինչպես հայտնեցին Ռուսաստանի ներքին գործերի նախարարության մամլո կենտրոնից, օգոստոսի 26–ին Լենինգրադում վասիլևյան կղզու գործկոմի չենքի մոտակա արձանին կանաչ ներկ են լցրել, Կոստով քաղաքում և Նիժնի Նովգորոդի մարզի Պրավդինսկ ավանում Լենինին ներկել են սպիտակ գույնով, իսկ Սարատովի մարզի Եկատերինովկա ավանում՝ դեղին գույնով։*

ՆԻԳԵՐԻԱ։ *Նիգերիայի պրեզիդենտ գեներալ Իբրահիմ Բաբանգիդան արևմտյան պետություններից պահանջում է հատուցել այն վնասը, որ Աֆրիկային պատճառել է ստրկավաճառությունը։ Նա հայտարարել է, որ ավելի քան 30 մլն աֆրիկացիների տարհանումով է մեծապես պայմանավորված Աֆրիկայի հետամնացությունը, մինչդեռ «նախկինում Եվրոպան և Աֆրիկան գրեթե հավասար մակարդակ են ունեցել»։*

ՊՐԵՏՈՐԻԱ։ *1991 թ.–ի գրական լավագույն ստեղծագործության համար Նոբելյան մրցանակը չնորհվել է Հարավային Աֆրիկայի բնակչուհի, սպիտակամորթ գրող Նադին Գորդիմերին։*

ARMENIAN FABLES

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ (1140-1213)

ԱՍՏՂԵՐԸ

Մի անգամ աստղերը ժողով արեցին։ Նրանցից ծերագուլյնն ասաց.

—Մենք չատ ենք. ինչո՞ւ լուսնի և արեգակի փոխարեն գիշեր ու ցերեկ չենք լուսավորում։

Մեկ ուրիշը պատասխանեց.

—Որովհետև միավորված չենք։

Եվ որոշեցին միավորվելով՝ նախ հաղթել արեգակին։ Բայց հանկարծ ծագեց լուսինը, և նրանք խամրեցին։

—Սրանից որ այսպես խամրեցինք, — ասացին նրանք, — հապա ի՞նչ կլինեինք, եթե արեգակը ծագեր։

Եվ գղջալով խոստովանեցին իրենց պարտությունը։

Խրատում է առակս, թե թուլերը, ինչքան էլ թվով չատ լինեն, չեն կարողանա հաղթել հզորին։

ԱՊԱՇԽԱՐՈՂ ԳԱՅԼԸ

Գայլը ծերանալով գնում է ոչխարի հոտի մոտ ու ասում.

—Այժմ ապաշխարող եմ և չատ եմ ձեզ վչտացրել, ուստի ուզում եմ գալ և ձեր տան մաքրողը դառնալ, որպեսզի թողության արժանանամ և ձեր մանուկներին ուրիչ գայլերից ևս պահպանեմ։

Եվ ուրախանալով ոչխարները չներին ասում են.

—Այլևս մի նեղեք նրան։

Գայլը մնում է այդտեղ, համբերում, մինչև մեծանում են գառները, ապա սկսում է հոշոտել և ուտել նրանց։ Ի վերջո չատերը, նկատելով այդ, սատկեցնում են նրան։

Առակս այսպիսի խրատ է տալիս. չուտ չհավատալ չարագործին։

ՆՌՆԵՆԻՆ ԵՎ ԹՁԵՆԻՆ

Նռնենին և թզենին կամեցան սիրով կապվել միմյանց ու երդվեցին քաղցրությամբ, բայց նռնենու թթվության պատճառով ձանձրացավ թզենին, և նրանց դաչինքը խախտվեց։

Առակիս իմաստն այն է, որ սիրողները նախ պետք է փորձեն միմյանց բարքերը, թե բոլոր կողմերով նմա՞ն են իրար, իսկ եթե ոչ՝ հեչտությամբ կխախտվի սերը։

ՉԿՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԸ

Չկներին մեղադրեց նրանց թագավորը.

– Ինչո՞ւ եք ուտում ձեզնից մանր ձկներին։

Համարձակությունն ստանալով՝ ձկները պատասխանում են.

– Որովհետև քեզնից սովորեցինք։ Շատերը եկան քեզ երկրպագելու, և կլանելով՝ քեզ կերակուր դարձրիր։

Ըստ այդմ՝ իրենք էս հանդուգն եղան։

Առակս հանդիմանում է, որ ոչ թե խոսքով, այլ գործով պետք է խրատել։

ՄԱՐԴԸ ԵՎ ԳԱԼԻԱՆՈՍԸ

Մի անգամ Գալիանոսը դասախոսություն է կարդում մարմնի առողջության մասին՝ ասելով։

– Եթե մարդ զգույշ լինի ուտելու և խմելու մեջ, մեր բժշկության կարիքը չի զգա։

Այս լսելով՝ մի մարդ ո՛չ ուտում է, ո՛չ խմում։ Դրանից նա ծանր հիվանդանում է և թշնամանում Գալիանոսին։ Իմանալով այդ՝ Գալիանոսն ասաց.

– Ո՛վ անմիտ մարդ, չգիտե՞ս դու, որ մենք բնության արարիչը չենք, այլ օգնականը։ Ինչո՞ւ չհասկացար խոսքիս իմաստը, որ ճիշտ վարվեիր։

Այս օրինակից սովորում ենք, որ ուշադրությամբ պետք է լսել իմաստունների ու բժիշկների խոսքը և խուսափել ծայրահեղություններից՝ և՛ առավելից, և՛ նվազից, որովհետև երկու դեպքում էլ չարիք կա։

ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ (1170-1235)

ԱՌՅՈՒԾԸ ԵՎ ԱՂՎԵՍԸ

Մի առյուծ կորյուն ծնեց, և հավաքվեցին կենդանիները՝ կորյունին տեսնելու և ուրախանալու։

Աղվեսն եկավ և հանդեսի ժամանակ բազմության մեջ առյուծին նախատեց բարձրաձայն ու անարգեց, թե ա՞յդ է քո գորությունը, որ ծնում ես միայն մեկ կորյուն և ոչ բազմաթիվ։

Առյուծը հանդարտաբար պատասխանեց և ասաց.

– Այո, ես ծնում եմ մի կորյուն, բայց առյուծ եմ ծնում և ոչ քեզ նման աղվես։

ԻՇԽԱՆԸ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ

Մի իշխան կար խիստ չար ու անիրավ։ Եվ նույն քաղաքում ապրում էր մի այրի կին, և իշխանը, հարկ պահանջելով, նեղում էր նրան, և այրի կինն աղոթում էր, որ իշխանն ունենա խաղաղ ու երկար կյանք։

Գնացին, ասացին իշխանին՝ քո չարության համար աղոթում է այրին։ Եվ իշխանը եկավ ու ասաց.

– Ես քեզ բարիք չեմ արել, ո՛վ կին, դու ինձ համար ինչո՞ւ ես աղոթում։

Այրի կինն ասաց.

– Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի, և նա մեռավ։ Դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ չար։ Եվ այժմ վախենում եմ, որ մեռնես, և քո որդին քեզնից ավելի չար լինի։

ԿՏԱԿ ԳԱՆՁԻ ՄԱՍԻՆ

Մի իմաստուն և աղքատ մարդ ուներ ծուլ որդիներ։ Մահվան ժամին նա կանչեց որդիներին և ասաց.

– Ո՛վ զավակներ, իմ նախնիները շատ գանձ են թաղել մեր այգում, և ես ցույց չեմ տա նրա տեղը։ Այդ գանձը կգտնի նա, ով շատ աշխատի և խոր փորի։

Եվ հոր մահից հետո որդիներն սկսեցին աշխատել մեծ եռանդով և խորն էին վարում, որովհետև յուրաքանչյուրն աշխատում էր, որ ինքը գտնի գանձը։

Եվ այգին սկսեց աճել և զորանալ և առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով։

ԵՂԵԳՆԸ ԵՎ ԾԱՌԵՐԸ

Մի թագավոր գբոսանքի ելավ՝ չրջելու լեռներում և հովիտներում։ Եվ տեսավ, որ մեծամեծ ծառեր կային կոտրտված ու փչրված, և միայն մեկ եղեգ կար՝ կանգուն, անարատ։ Եվ թագավորն ասաց.

– Ո՛վ եղեգն, ասա՛ ինձ, թե ինչպես հաստատուն ես մնացել, երբ մեծամեծ ծառեր փչրվել են։

Եվ եղեգն ասաց.

– Ո՛վ թագավոր, երբ սաստիկ հողմ բարձրացավ, ծառերը հպարտությամբ հակառակ կանգնեցին հողմի դեմ, և հողմը նրանց փչրեց, իսկ ես խոնարհվեցի հողմի կամքով և ահա կանգուն եմ։

ԻՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՎՈՐԸ

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա երկու ոտքով կաղ էր։ Եվ զինվորներից մեկն ասաց.

– Ո՛վ ողորմելի, ո՞ւր ես գնում։ Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող։

Եվ նա ասաց.

– Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելո՛ւ։

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՋՐԱՂԱՑԸ

Եկեղեցին պարծեցավ յուր արբուքյամբ և ասց.

– Ես եմ տաճարն Աստծու, և դեպի ինձ են գալիս քահանաները և ժողովուրդը՝ աղոթք մատուցելու Աստծուն և պատարագ, և հաշտվում է Աստված աշխարհի հետ, և մեղքերին թողություն է լինում։

Այն ժամանակ ջրաղացն ասաց եկեղեցուն.

– Ինչ որ դու ասում ես, արդար է և ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի մոռանա, որ գիշեր-ցերեկ աշխատում եմ և աղում այն, ինչ ուտում են քահանաները և ժողովուրդը և ապա քեզ են գալիս աղոթելու և երկրպագելու Աստծուն։

ԻՇԱՏԵՐԸ ԵՎ ԳԱՅԼԸ

Մի մարդ կորցրել էր էշը։ Նա մորմոքալով այս ու այն կողմ էր չրջում, փնտրում ու չէր գտնում։ Հանդիպում է նա մի գայլի։

– Ո՛վ եղբայր, – հարցնում է մարդը, – կորցրել եմ իմ իշուկը, չե՞ս գտել։

– Եղբա՛յր, քո էշը ես եմ գտել, – պատասխանում է գայլը։

– Բե՛ր, որ քո գտնելու վարձը տամ։

– Ո՛վ մարդ, – ասում է գայլը, – քո էշը տիղմի մեջ էր խրվել։ Ես երեք օր չարչարվեցի, հազիվ կարողացա հանել։ Գիտեի, որ աղքատ մարդ ես, ինձ վարձահատույց լինել չէիր կարող, և վարձի տեղը էշդ կերա։

ՀԱԳՈՒՍՏԻ ՊԱՏԻՎ

Մի թագավոր իր զորքով ճանապարհ էր գնում։ Նա երկու սուրբ հայրերի տեսավ գարչելի հագուստով։ Թագավորը իջավ նժույգից և խոնարհվելով համբուրեց նրանց։ Զորավարները սկսեցին տրտնջալ, թե այս թագավորը իր մեծամեծներին պատիվ չի տալիս, չնչին մարդկանց մեծարում է։

Թագավորն իմանալով հրամայեց չորս սնդուկ սարքել. երկուսը՝ արտաքուստ գեղեցիկ ու քանդակազարդ՝ լի աղբով ու ավազով, իսկ մյուս երկուսը՝ արտաքուստ տհաճ, կպրոտ, մեջը լի ոսկով ու մարգարտով։ Եվ կանչելով բամբասող իշխաններին՝ թագավորն ասաց.

– Գնահատեցե՛ք և ընտրեցե՛ք չորս կնքած աստղերից որն ուզում եք։ Նրանք ընտրեցին գեղեցիկները և բանալով տեսան, որ լցված են աղբով ու ավազով, զըղջացին։

Թագավորն ասաց.

– Այդպես եք նայում երեսին և պայծառ հագուստին այն մարդու, որ ներքուստ լի է աղտեղությամբ։ Իսկ այս սուրբ հայրերը, որոնց հանդիպեցի, արտաքուստ էին աղտոտ, իսկ ներքուստ՝ լի հոգու չնորհով։

ԱՂՔԱՏՆ ՈՒ ԱՐԾԻՎԸ

Ոմն աղքատ մարդ մի կտոր միս էր խորովում անմարդաբնակ վայրում։ Եվ ահա մի արծիվ հանկարծակի սլացավ վերևից, հափշտակեց միսն ու բարձրացնելով՝ տարավ։ Աղքատը, գետնին երեսի վրա ընկած, լաց եղավ՝ ասելով.

– Ջվայլե՛ս։

Արծիվը տարավ միսն իր բույնը, դրեց ձագերի առջև ու ինքը գնաց։ Մի կայծ, որ կպած էր մնացել մսին, այրեց արծվի բույնն ու ձագերին։

ՇԻՆԱԿԱՆԻ ՈՐԴԻՆ՝ ԹԱԳԱՎՈՐ

Մի երկրի թագավոր վախճանվել էր։ Եվ երբ իշխաններն ու նախարարները իրենցից մեկին թագավոր ընտրելու համար միաբանության չէին գալիս, մի շինականի որդու կարգեցին թագավոր։

Իսկ նրա հայրը, գալով պալատ և տեսնելով իր որդուն թագավորական հանդերձների մեջ, հարցնում է նրան.

– Որդյա՛կ, ճանաչո՞ւմ ես ինձ։

– Ինչպե՞ս կարող եմ ճանաչել, – պատասխանում է որդին, – երբ ի՛նձ չեմ ճանաչում։

ՔԱԶԵՆ ԵՎ ԸՆՏԱՆԻ ՀԱՎԸ

Պարսավում էր բազեն հավին ու ասում.

– Ինչո՞ւ այդպես անչնորհակալ ես քո տիրոջ նկատմամբ, ինչո՞ւ ես զգուշանում նրանից։ Ջե՞ս տեսնում ինձ, վայրենի լինելով հանդերձ, հենց որ տերս սուլում և կամ ձեռքի շարժումով կանչում է, անմիջապես մոտենում եմ նրան։ Իսկ դու թեև ծնվել ու սնվել ես նրա տան մեջ, բայց խուսափում ես նրանից։

– Շամփուրն եմ հիշում, որովհետև մեզանից չատերին խորովեցին, իսկ բազեներից՝ ոչ մեկին։ Որքան որ ես հավ եմ տեսել շամփուրի վրա, ո՛վ թռչունների արքա, եթե դու դեթ մի բազե տեսնեիր, կարծում եմ, որ անդարձ կհեռանայիր մարդուց, և եթե հազար անգամ համոզեին ու բազում պարգևներ խոստանային, դարձյալ չէիր համաձայնի ենթարկվել նրա կանչին։

ԹԱԳԱՎՈՐԻ ՆԱԽԱՆՁՈՏ ԻՇԽԱՆՆԵՐԸ

Թագավորի պալատում ծառայող երկու իշխան առելով ատում էին իրար։ Մի անգամ, կամենալով փորձել նրանց, թագավորն ասաց.

– Խնդրեցե՛ք ինձանից, ինչ որ ուզում եք։ Բայց իմացե՛ք, մեկի խնդրածի դիմաց մյուսին կրկնակին պիտի տամ։

– Թագավո՛ր, – հարցնում է մեծ իշխանը, – ինչ որ խնդրեմ, իմ պաշտոնակից իշխանին երկո՞ւսը կտաս։

– Այո՛, ինչ որ խնդրես, կանեմ, – ասում է թագավորը։

Մեծ իշխանը մտածում է. «Եթե ես մի քաղաք ուզեմ, կտա։ Բայց իմ ընկերոջը երկուսը կհասնի, սիրտս կպայթի»։

– Թագավո՛ր, – դիմում է նա, – քեզանից խնդրում եմ, որ իմ մեկ աչքը հանես։

Թագավորը հրամայեց հանել մեծ իշխանի աչքերից մեկը։

Պարզ է, որ նախանձոտն իր անձին ավելի թշնամի է, քան ուրիշների։

ԿԱՄԱԿՈՐ ԿԻՆԸ

Մի մարդ իր կնոջ հետ անցնում էր հնձած արտի մոտով։

– Տեսնո՞ւմ ես, որքան գեղեցիկ ու լավ է հնձած արտը, – ասում է նա կնոջը։

– Ոչ թե հնձած է, այլ խուզած է, – հակաճառում է կինը ամուսնուն։

Քանի ամուսինն ասում է՝ հնձած է, կինը թե՝ չէ, խուզած է։ Բարկանալով՝ ամուսինը կնոջը նետում է ջուրը։

Եվ քանի որ կինն այլևս չէր կարող խոսել, ուստի հանում է ձեռքը ջրից դուրս ու, երկու մատները մկրատի պես չարժելով, մինչև մեռնելը պնդում, թե արտը խուզած է։

ՓՂԻ ՈՐԴԻՆ՝ ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԱԿԵՐՏ

Փիղն իր որդուն հանձնեց Պլատոնին՝ իմաստասիրություն ուսանելու։ Եվ ուսուցիչը հանձնարարեց աշակերտին չոքել լսարանում, իսկ նա չկարողացավ։ Պատվիրեց նաև, որ գլուխը խոնարհի գետնին, այդ էլ չկարողացավ։ Պլատոնը այն ժամանակ ետ վերադարձրեց նրան հորը և ասաց.

– Արժանի է, որ քո որդին թագավորի պալատում լինի՝ միշտ ոտքի կանգնած՝ և ոչ իմ լսարանում, քանի որ ո՛չ նստել կարող է և ո՛չ գլուխ խոնարհել։

ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՄԱՐԴԸ

Մի մարդ տուն էր չինում։ Փորում էր տան հիմքը, չարում աղյուսով, իսկ աղյուսի վրա չարում էր քար։

– Ի՞նչ ես անում, եղբայր, – ասում է մեկը, – պետք է ներքևում քարը չարել, վերևում՝ աղյուսը։

– Պատրաստվում եմ ամուսնանալու, – ծիծաղելով պատասխանում է տանտերը, – կինս որ գա, միևնույն է, չուռ է տալու տունը, պատերը կուղղվեն։

ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ԾԵՐՈՒՆԻՆ

Բաբելոնի թագավորը մեծ զորաբանակով քաղաք մտնելիս տեսավ մի ծերունու, որ արմավենի էր տնկում։

– Ո՛վ ծերունի, – ասում է թագավորը, – ինչո՞ւ ես տնկում։ Ջէ՞ որ դա

քառասուն տարի հետո պիտի պտուղ տա, իսկ դու այսօր-վաղը գնալու ես։

– Թագավո՛ր, – պատասխանեց Ծերունին, – մի մարդ տնկել էր արմավենի, ես վայելեցի պտուղը, ես էլ տնկում եմ, որ մեկ ուրիշը վայելի։

– Տվե՛ք նրան հազար ղրամ, – հրամայում է Թագավորն իր ենթականերին, – որովհետև բարի և լավախոհ մարդ է։

Վերցնելով ղրամը՝ Ծերունին գոհ եղավ ճակատագրից։

– Ինչո՞ւ գոհ եղար, – հարցնում է Թագավորը։

– Որովհետև, – պատասխանում է Ծերունին, – ամեն ծառ տնկող քառասուն տարին լրանալուց հետո է վայելում, իսկ ես այսօր վայելեցի։

ՕԳՈՍՏՈՍ ԿԱՅՍՐՆ ՈՒ ՕՏԱՐԱԿԱՆԸ

Մի օր Օգոստոս կայսրն իմացավ, որ Հռոմ է ժամանել մի օտարական, որը ամեն ինչով չատ նման է իրեն։ Կայսրը կանչեց նրան իր մոտ ու տեսնելով՝ չատ ուրախացավ։ Ներանք մի քիչ զրուցեցին, այնուհետև կայսրը հարցրեց.

– Հորս ժամանակներում արդյոք մայրդ եկե՞լ է Հռոմ։

– Մայրս՝ ոչ, – պատասխանեց օտարականը, – բայց հայրս չատ անգամ է Հռոմ եկել։

ԺԼԱՏ ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՆՐԱ ԱՐՁԱՆԸ

Մի չատ ժլատ ու հարուստ մարդ մարմար քարից պատրաստել է տալիս իր արձանը։ Ցույց տալով քանդակը բարեկամներից մեկին՝ նա հարցնում է.

– Ինչպե՞ս է քանդակված, նմա՞ն է արդյոք ինձ։

– Ե՛վ հոգով, և՛ մարմնով չատ նման է քեզ, – պատասխանում է բարեկամը։

ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԸ

Մեծահարուստ մի մարդ, որ չատ էր ճանճրանում, կանչեց նչանավոր բժիշկների և դարման խնդրեց իր անբուժելի ախտին։ Գիտնականները միաձայն հայտարարեցին, թե բախտավոր մի մարդու չապիկը միայն կարող էր իրեն բուժել։ Հիվանդը սպասավորներ ուղարկեց ամեն կողմ, որ փնտրեն, գտնեն և բերեն այդ հրաչագործ չապիկը. բայց բոլորն էլ ձեռնունայն և հուսահատ վերադարձան։ Մեկ բախտավոր գյուղացի էին միայն գտել, այն էլ չապիկ չուներ։

ՎԱՏԻՑ ԷԼ ՎԱՏԸ

Մի թագավոր իր թագավորութիյան կեսը տալիս է վեզիրին։ Մի օր էլ թաքուն նայում է, տեսնում, որ վեզիրն իր գանձարանից մի ոսկի գողացավ։ Մտածում է. «Թագավորութիյունս սրա հետ հալալ կես եմ արել, էս մարդուն ի՞նչն է սիրում, որ իմ գանձարանից մի ոսկի է գողանում»։

Վեզիրին կանչում է իր մոտ, ասում.

— Վեզի՛ր, քեզ տասնհինգ օր ժամանակ եմ տալիս, մա՛ն արի, գտի՛ր, եկ ինձ ասա՛, թե ի՞նչն է աչխարհքում վատից էլ վատը։ Որ չասացիր, քեզ կախ եմ տալու։

Վեզիրը գնում է տասն օրվա մեջ ամբողջ երկիրը պտտում, սրան-նրան հարցուփորձ անում, ոչ մեկն էլ չի կարենում պատասխան տա։

Տասն օրից հետո գալիս է թագավորի մոտ, ասում.

— Թագավո՛րն ապրած կենա, չատ եմ ման եկել, հարցուփորձ արել, իմացող չկա։

Թագավորը, թե՝

— Ջեմ իմանում, հինգ օր է մնացել՝ յա՛ գտի, յա՛ կախ եմ տալու։

Վեզիրը նորից է դես-դեն ընկնում, խելոք մարդկանց հարցուփորձ անում, հնար չի լինում, չեն գտնում պատասխանը։

Էսպես հույսը կտրած վերադառնում է։ Մի հանդի միջով անց կենալիս տեսնում է՝ մի չոբան, ոչխարն առաջն արած, արածեցնում է։ Կողքովն անցնում է, բարև չի տալիս։ Որ մի քիչ գնում է, չոբանը ձեն է տալիս. — Ա՛յ ճամբորդ, ես ծեր մարդ եմ, կողքովս անց կացար, ինչի՞ բարև չտվիր։

Վեզիրն ասում է. — Հենց իմ դարդն ու ցավս քեզ բարև տա՛լն էր ...

— Դարդ ու ցավդ ի՞նչ է, — ասում է չոբանը, — պատմի տեղնամ, բալքի կարենամ օգնեմ։

— Ինքա՛ն իմաստուն, խելոք մարդկանց մոտ եմ գնացել, չեն կարեցել մի բան անեն, դու ի՞նչ պիտի անես, — ասում է վեզիրը։

— Ի՞նչ կա որ, ասա՛, գուցե կարենամ մի բանով օգնել, — ասում է չոբանը։

Վեզիրը պատմում է. — Ես էսինչ թագավորի վեզիրն եմ։ Թագավորը իր երկրի կեսը ինձ էր տվել, մի օր էլ նրա գանձարանից մո ոսկի գողացա։ Հիմի տասնհինգ օր ժամանակ է տվել, ասել է՝ գնա պտտիր, ման արի, հարցուփորձ արա, ինձ պատասխան բեր, թե ինչն է աչխարհքում վատից էլ վատը։ Էս տասնհինգն օրն անց է կենում, ամեն տեղ ման եմ եկել, հարցուփորձ արել, չեմ կարողանում էդ հարցի պատասխանը գտնեմ։

Չոբանն ասում է.

— Վեզի՛ր, ահա՛, ճաղերի տակ տավարի աղբ կա, հավաքիր կեր, իմ ամբողջ

ոչխարն էլ տամ քեզ՝ իմ փոխարեն քչի՛ր, էդ հարցի պատասխանն էլ ասեմ։*

Վեզիրն աչք է ածում չորս կողմը, տեսնում է մարդ չկա, ճաղի տակից աղբը հավաքում է, ուտում։ Չոբանի ոչխարը հավաքում, քչում է, հետո էլ հարցնում.

— Դե՛ ասա, ի՞նչն է աչխարհքումս վատից էլ վատը։

— Ագահությունն ու աչքածակությունը, — պատասխանում չոբանը։

Վեզիրը գնում է թագավորի մոտ, ասում.

— Թագավորն ապրած կենա, գտել եմ հարցիդ պատասխանը։ Աչխարհքիս վատից էլ վատը ագահությունն ու աչքածակությունն է։

— Էդ ո՞վ է քեզ էդ բանն ասել, — հարցնում է թագավորը։

— Էսինչ սարի չոբանը, — պատասխանում է վեզիրը։

Թագավորը մարդ է ուղարկում, էդ չոբանին բերում են պալատ, թագավորության կեսը տալիս է նրան։ Վեզիրին էլ էդ պաշտոնից հանում ու հեռացնում պալատից։

ՇՈՒՅԼ ՄԱՐԴ ՈՒ ԿԻՆԸ

Մարդ ու կին են լինում, երկուսն էլ չատ ծուլ։ Նա սրան է ասում՝ կովը ջուրը տար, սա՝ նրան։ Համաձայնության չեն գալիս։ Վերջը պայման են դնում. — Ով առաջինը խոսի, նա կովը տանի ջուրը։

Կինը գնում է հարևանի տուն։ Մարդը մնում է տանը մենակ։

Մեկ էլ մի անծանոթ մարդ է մտնում տուն, բարև տալիս։ Սա ձեն չի հանում։

Ասում է. — Հիվա՞նդ ես։

Չի խոսում։

— Աչքերդ չե՞ն տեսնում։

Չի խոսում։

Ինչ անում - չի անում՝ ձեն չի հանում։

Էս որ տեսնում է էդ անծանոթ մարդը, հավաքում է տան եղած-չեղածը, լցնում պարկը, չալակում-դուրս գնում։

Մի քիչ հետո կինը տուն է մտնում, տեսնում է՝ ոչինչ չկա տանը, ամեն ինչ սրբած-տարած։

Զարմացած ասում է. — Ա՛յ տղա, էս մեր տան եղած-չեղածը ո՞վ է տարել։ Մարդն էն կողմից վեր է թռչում ուրախացած, ասում. — Դու առաջի՛նը խոսեցիր, կովը դո՛ւ պետք է տանես ջուրը։

---

* In the Ararat-valley, and particularly in the Lori region dialects, the combination '*այ*' contracts into an '*է*' in initial position and '*է*' in medial position of words. Thus, words like *այս, այդ, այն* appear as *էս, էդ, էն* and *մայր, հայր, ծայր* as *մեր, հեր, ծեր*։

ԿԱՑԻՆ ԱԽՊԵՐԸ

Մի մարդ գնաց հեռու երկիր՝ աշխատանք անելու, ընկավ մի գյուղ։ Տեսավ՝ այս գյուղի մարդիկ ձեռով են փայտ կոտրատում։

— Ախպե՛ր, ասավ, ինչո՞ւ եք ձեռով փայտ անում, մի՞թե կացին չունեք։

— Կացինն ի՞նչ բան է, — հարցրին գյուղացիք։

Մարդը իր կացինը գոտկից հանեց, փայտը ջարդեց, մանրեց, դարսեց մյուս կողմը։ Գյուղացիք այս որ տեսան, վազեցին գյուղամեջ, ձայն տվին իրար։

— Տո՛, եկե՛ք, տեսե՛ք, կացին ախպերը ինչ արավ։

Գյուղացիք հավաքվեցին կացնի տիրոջ գլխին, խնդրեցին, աղաչեցին, շատ ապրանք տվին ու կացինը ձեռից առան։

Կացինը առան, որ հերթով կոտրեն իրենց փայտը։

Առաջին օրը տանուտերը տարավ։ Կացինը վրա բերավ թե չէ՝ ոտը կտրեց։ Գոռալով ընկավ գյուղամեջ։

—Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է, ոտս կտրեց։

Գյուղացիք եկան, հավաքվեցին, փայտերն առան, սկսեցին կացնին ծեծել։ Մեծեցին, տեսան՝ ոչինչ չեղավ։ Փայտերը կիտեցին վրան, կրակ տվեցին։

Բոցը բարձրացավ, չորս կողմը բռնեց։ Երբ կրակն իջավ, եկան բաց արին, տեսան՝ կացինը կարմրել է։ Գոռացին։

— Վա՛յ, տղե՛ք, կացին ախպերը բարկացել է, տեսե՛ք՝ ոնց է կարմրել։ Որտեղ որ է, մեր գլխին մի փորձանք կբերի։ Ի՞նչ անենք։

Մտածեցին, մտածեցին ու վճռեցին՝ տանեն բանտը գցեն։

Տարան-գցեցին տանուտերի մարագը։

Մարագը լիքը դարման էր։ Գցեցին թե չէ՝ կրակն առավ, բոցը երկինք բարձրացավ։

Գյուղացիք սարսափած վազեցին տիրոջ եռևից թե՝ «Ե՛կ, աստծու սիրուն, կացին ախպորը բան հասկացրու»։

Ըստ Հովհաննես Թումանյանի «Կացին ախպերը» *հեքիաթի*
(Adaptation from Hovhannes Toumanian, 1869-1923)

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում է – չի լինում, մի թագավոր է լինում։ Էս թագավորը իր երկրումը հայտնում է.

«Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան»։

Գալիս է մի հովիվ, ասում է.

*— Թագավո՛րն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից

մեկնում էր, երկնքում աստղերը խառնում։

— Կպատահի՛, — պատասխանում է թագավորը։ — Իմ պապն էլ մի չիբուխ ուներ, մի ծերը մեկնում, արեգակիցը վառում։

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում։

Գալիս է մի դերձակ։ Ասում է.

— Ներողությո՛ւն, թագավո՛ր, ես վաղ պիտի գայի, ուշացա։ Երեկ չատ անձրև եկավ, կայծակները պայթեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու։

— Հա՛, լավ ես արել, — ասում է թագավորը, — բայց լավ չէիր կարկատել. էս առավոտ մի քիչ անձրև թափվեց։

Սա էլ է դուրս գնում։

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի՝ կոտը մեջքին։

— Դո՛ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ, — հարցնում է թագավորը։

— Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ։

— Մի կոտ ոսկի՞, — զարմանում է թագավորը։ — Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի պարտական չեմ։

— Ջէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում, — խոսքը փոխում է թագավորը։

— Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր։

Ըստ Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» *հեքիաթի*
(Adaptation from Hovhannes Toumanian, 1869-1923)

ԲԱՐԵԿԵՆԴԱՆԸ

Ժամանակին մի մարդ ու կնիկ են լինում։

Էս մարդ ու կնիկը իրար չէին հավանում։

Մարդը կնկան էր ասում հիմար, կնիկը մարդուն, միշտ իրար հետ կռվում էին։ Մի օր էլ մարդը մի քանի փութ եղ ու բրինձ է առնում, տալիս է մչակի չալակը, տանում տուն։

Կնիկը բարկանում է.

— Ա՛յ, որ ասում եմ հիմար ես, չես հավատում.

Էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել-բերել. հորդ քելե՞խն ես տալիս, թե՞ տղիդ հարսանիքն ես անում։

— Ի՞նչ քելեխ, ի՞նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՛նչ ես խոսում, տար պահի, բարեկենդանի համար։

Կնիկը հանգստանում է, տանում է պահում։

Անց է կենում մի առժամանակ, էս կնիկը սպասում է, սպասում է, բարեկենդանը չի գալիս։ Մի օր էլ չեմքում նստած է լինում, տեսնում է մի մարդ արագ-արագ փողոցով անց է կենում։ Ջեռը դնում է ճակատին ու ձեն տալի.

— Ա՛խպեր, ա՛խպեր, հալա մի կանգնիր։

Տղեն կանգնում է։

— Ա՛խպեր, բարեկենդանը դու հո չե՞ս։

Անցվորականը նկատում է, որ էս կնկա ծալը պակաս է, ասում է.

— Հա, ես եմ բարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ ես ասում։

— Ին եմ ասում, որ մենք քո ծառան հո չե՞նք, որ քո եղն ու բրինձը պահենք։ Դե արի տար։

Էս մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը չալակում ու գնում։ Մարդը գալիս է տուն, կնիկն ասում է.

— Հա՛, էն բարեկենդանն եկավ ու իր բաները տարավ։

— Ի՞նչ բարեկենդան ... ի՞նչ բաներ ...

— Ա՛յ էն եղն ու բրինձը ...

— Վա՛յ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես — հիմար ես էլի ... Ո՞ր կողմը գնաց։

— Ա՛յ էն կողմը։

Էս մարդը ձի է նստում, ընկնում բարեկենդանի ետևից։ Գալիս է հասնում իրեն։

— Բարի օր, էս ճամփովը մարդ չի՞ անցել։

— Անցել է։

— Ի՞նչ ուներ չալակին։

— Եղ ու բրինձ։

— Ինչքա՞ն ժամանակ կլինի։

— Բավականին ժամանակ կլինի։

— Որ ձին քշեմ՝ կհասնե՞մ։

— Ջես հասնի, դու՝ ձիով, նա՝ ոտով։ Մինչև քու ձին չորս ոտը կփոխի, նա երկու ոտով չուտ-չուտ կգնա։

— Բա ինչպե՞ս անեմ։

— Ինչպե՞ս պետք է անես. ուզում ես, ձիդ թող ինձ մոտ, դու էլ նրա պես ոտով վազի, գուցե հասնես։

— Հա՛, էդ լավ ես ասում։

Վեր է գալիս, ձին թողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում։

Սա հեռանում է թե չէ, բարեկենդանը բեռը բարձում է ձիուն, ճամփեն ծռում, քշում։

Էս մարդը ոտով գնում է, տեսնում է չհասավ, ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չկա։ Գալիս է տուն։ Նորից սկսում են կռվել, մարդը՝ եղ ու բրինձի համար, կնիկը ձիու։

Ըստ Հովհաննես Թումանյանի «Բարեկենդանը» հեքիաթի
(Adaptation from Hovhannes Toumanian, 1869-1923)

ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում:

Էդ աքլորը քուջուջ անելիս մի ոսկի է գտնում:

Կտուրն է բարձրանում ու կանչում.

— Ծուղրուղո՛ւ, փող եմ գտե՛լ …

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրին հրամայում է՝ գնան, խլեն-բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում-բերում:

Աքլորը կանչում է.

— Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձանով ապրե՛ց …

Թագավորը ոսկին ետ է տալիս իր նազիր-վեզիրին, ասում է.

— Ե՛տ տարեք, իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի էդ անպիտանը …

Նազիր-վեզիրը ոսկին տանում են, ետ տալիս աքլորին:

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

— Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձանից վախե՛ց …

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

— Գնացե՛ք, — ասում է, — բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրե՛ք, եփե՛ք, բերեք ուտեմ, պրծնեմ դրանից:

Նազիր-վեզիրը գնում են, աքլորին բռնում, որ տանեն:

Տանելիս կանչում է.

— Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձ հյո՛ւր է կանչել …

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, կանչում է.

— Ծուղրուղո՛ւ, թագավորն ինձ տաք-տաք բաղնիք է ղրկե՛լ …

Եփում են, բերում, թագավորի առաջն են դնում, կանչում է.

— Թագավորի հետ սեղան եմ նստե՛լ, ծուղրուղո՛ւ …

Թագավորը չտապով վերցնում է կուլ տալիս: Կոկորդով գնալիս կանչում է.

— Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՛ւ …

Թագավորը հրամայում է նազիր-վեզիրին՝ թուրները հանած պատրաստ կենան, որ մին ձեն հանի — զարկեն:

Աքլորը որ թագավորի փորն է հասնում, կանչում է:

— Լուս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՛ւ …

— Զարկեցե՛ք … — հրամայում է թագավորը:

Նազիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում:

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտուրի վրա կանգնում է ու կանչում.

— Ծուղրուղո՛ւ …

Ըստ Հովհաննես Թումանյանի «Անհաղթ աքլորը» *հեքիաթի*
(Adaptation from Hovhannes Toumanian, 1869-1923)

ԱՄԵՆԱՊԻՏԱՆԻ ԲԱՆԸ

Ժամանակով Արևելքի մի հրաշագեղ աշխարհում արդարամիտ ու խելացի մի թագավոր է եղել։ Նա ունեցել է երեք որդի։ Մի օր կանչել է որդիներին և ասել։

— Սիրելի՛ որդիներ, տեսնո՞ւմ եք, որ ձեր հայրը ծերացել է ու էլ չի կարող երկիրը կառավարել։ Ես վաղուց իմացած կլինեի իմ գահից, եթե կատարված տեսնեի այն միտքը, որ երկար տարիներ պաշարել է հոգիս, և ձեզանից ով որ կարողանա իմաստուն կերպով լուծել իմ այդ միտքը, նա կտանա իմ թագը, նա կկառավարի իմ ժողովրդին։

— Ապրա՛ծ կենա մեր սիրելի հայրը։ Սուրբ է մեզ համար նրա վեհ կամքը։ Այդ ի՛նչ մեծ միտք է, որ չի կարողացել լուծել նրա իմաստուն հոգին։

— Ահա տեսնում եք այդ ահագին ու մեծածավալ չտեմարանը, որ վաղուց չինել եմ։ Իմ փափագն էր այդ լցնել այնպիսի մի բանով, որ ամենապիտանին լիներ աշխարհիս երեսին, և որով կարողանայի բախտավոր դարձնել իմ ժողովրդին։ Այդ չտեմարանը դեռ մնում է դատարկ, և հիմա, ով ձեզանից կարողանա այն ծայրեծայր լցնել աշխարհի այդ ամենապիտանի բանով, թող նա արժանի լինի գահին։ Ուրե՛ք գանձերիցս ինչքան որ կուզեք և առանձին-առանձին ուղի ընկեք քաղաքեքաղաք, աշխարհեաշխարհ. գտե՛ք այդ բանը և լցրեք իմ չտեմարանը։

Որդիները համբուրեցին հոր ձեռքը և ճանապարհ ընկան։

Ամբողջ երեք անգամ քառասուն օր նրանք չրջեցին աշխարհեաշխարհ, տեսան ուրիշ մարդիկ, բարքեր ու ժամանակին եկան կանգնեցին հոր առջև։

— Բարով եք եկել, անգի՛ն որդիներս։ Գտե՞լ եք արդյոք և բերե՞լ, ինչ որ ամենապիտանի բանն է աշխարհում։

— Այո՛, գտել ենք, սիրելի՛ հայր, — պատասխանեցին որդիները։ Եվ հայրը վերցրեց որդիներին ու գնացին չտեմարանի դուռը։ Թագավորը բացեց դուռը և կանչեց մեծ որդուն։

— Ինչո՞վ կլցնես այս ահագին չտեմարանը, սիրելի՛ որդյակ։ Ի՞նչ բանով, որը աշխարհում ամենապիտանին լինի։

— Հացով կլցնեմ այս ահագին չտեմարանը, թանկագի՛ն հայր։ Ի՞նչն է աշխարհում ամենապիտանի բանը, քան հացը։ Ո՞վ կարող է առանց հացի ապրել։

Այն ժամանակ հայրը կանչեց միջնեկ որդուն և ուղղեց նույն հարցը։ Եվ միջնեկ որդին հանեց գրպանից մի բուռ հող, պարզեց դեպի հայրը, ասաց։

— Հողով կլցնեմ այս չտեմարանը, թանկագի՛ն հայր։ Առանց հողի հաց չկա։ Առանց հողի ո՞վ կարող է ապրել։

Ապա հայրը դիմեց կրտսեր որդուն միևնույն հարցով։

— Լույսով կլցնեմ այս ահագին չտեմարանը, իմաստո՛ւն հայր, լույսո՛վ միայն։ Շատ թափառեցի, շատ աշխարհներ տեսա, բայց լույսից անհրաժեշտ ոչինչ չգտա։ Լույսն է ամենապիտանի բանը, և միայն գիտության լույսով կարելի է կառավարել աշխարհը։

— Ապրե՛ս, — գոչեց ուրախացած հայրը, — քե՛զ է արժանի իմ գահը, քանի որ լույսով ու գիտությամբ պիտի լցնես թագավորությունդ։

Ըստ Դերենիկ Դեմիրճյանի «Ավելորդը»
(Adaptation from Demirjian, 1877-1956)

ARMENIAN HUMOR

ՍՐԱՄԽՏ ՆԵՐԿԱՐԱՐԸ

Մի մարդ մի կտոր տվեց ներկարարին ներկելու։

—Ի՞նչ գույնի ներկեմ, — հարցրեց ներկարարը։

—Այնպես ներկիր, — ասաց պատվիրատուն, — որ լինի ո՛չ կարմիր, ո՛չ դեղին, ո՛չ կանաչ, ո՛չ կապույտ, ո՛չ սև։

—Լա՛վ, — ասաց ներկարարը։

—Ե՞րբ գամ կտորը տանելու, — հարցրեց կտորի տերը։

—Արի այնպիսի օր, որ լինի ո՛չ երկուշաբթի, ո՛չ երեքշաբթի, ո՛չ չորեքշաբթի, ո՛չ հինգշաբթի, ո՛չ ուրբաթ, ո՛չ շաբաթ և ո՛չ էլ կիրակի, — պատասխանեց ներկարարը։

ՊԱՏՄԵԼ Է ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԸ

Ամեն առավոտ աղբ տանող մեքենան գալիս է մեր բակ, ու վարորդը զանգը հնչեցնելով բղավում է.

—Ջիբի՛լ, գիբիլը դուրս բերե՛ք...

կինս տնեցիներին ասում է.

—Ես Համո Սահյանի կինն եմ, ինձ վայել չէ աղբի դույլը ձեռքիս բակ դուրս գալ։

—Ես էլ Համո Սահյանի մայրն եմ, ինձ վայել չէ, որ հարևանները աղբը ձեռքիս տեսնեն։

Տղաս ասում է.

—Իսկ ես Համո Սահյանի տղան եմ, ինչո՞ւ պետք է աղբը ես թափեմ։

Ճարահատյալ վերցնում եմ աղբով լի դույլն ու ասում.

—Ես Համո Սահյանն եմ, ինձ վայել է, որ տան աղբը ես թափեմ։

Կլարա Թերզյան, «Ռադիոժպիտներ» *ժողովածուից*

Հայրը նստած թերթ է կարդում։ Որդին դաս է պատրաստում և կողքից անընդհատ հարցեր տալիս.

—Հայրի՛կ, ի՞նչ բան է վակուումը։

—Ջգիտեմ, — ասում է հայրը կտրուկ։

—Իսկ ի՞նչ է նշանակում կայքէջ։

—Ես որտեղի՞ց իմանամ։

—Իսկ մղոնը քանի՞ մետր է։

—Այդ մեկը չգիտեմ։

—Հայրիկ, միգուցե ես իմ հարցերով խանգարո՞ւմ եմ քեզ։

—Բոլորովին էլ ո՛չ։ Հարցնելով է, որ մարդ բան է սովորում։

Վարդանիկ — Ընկե՛ր Մարգո, Ջեզ պարտական եմ այն ամենի համար, ինչ ես գիտեմ։

Ուսուցչուհի —Ի՛նչ կարիք կա չնորհակալություն հայտնել այդքան չնչին բանի համար։

Ուսուցչուհի —Վարդանիկ, մի՞թե իմ հարցը այդքան դժվար է։

Վարդանիկ —Օ՛, ինչ եք ասում, ընկեր Մարգո։ Հարցը բոլորովին էլ դժվար չէ։ Պատասխանն է, որ դժվար է։

Ընկեր Մարգոն գալիս է դասարան ու ասում.

—Այսօր երգի դաս է, բայց նոր երգ չենք սովորելու։ Ջեզանից յուրաքանչյուրը երգելու է մի երգ, որը լավ գիտի։

Աշակերտներից չատերը ձեռք են բարձրացնում ու երգում։ Երբ հերթը հասնում է Վարդանիկին, նա հրաժարվում է։

—Ինչո՞ւ չես ուզում երգել, — հարցնում է ընկեր Մարգոն։

—Որովհետև միայն մի երգ գիտեմ, այն էլ՝ չատ վատ խոսքերով։

—Իսկ դու երգի՛ր, բայց վատ խոսքերի փոխարեն ասա «տրա-լա-լա»։

Վարդանիկն սկսում է երգել.

«Ընկեր Մարգո, տրա-լա-լա-լա, քեզ ասում եմ, տրա-լա-լա-լա ...»

Ջկնորս –Արդեն երեք ժամ է, որ ինձ եք նայում։ Ինչո՞ւ ինքներդ չեք փորձում ձուկ որսալ։

Դիտող –Համբերությունն չունեմ։

–Ի՞նչ ես անում։
–Նամակ եմ գրում։
–Ո՞ւմ ես գրում։
–Ինձ։
–Ի՞նչ ես գրում քեզ։
–Ջգիտեմ, որ նամակն ստանամ, կիմանամ։

–Հայրի՛կ, ես որտեղի՞ց եմ եկել։
–Քեզ արագիլն է բերել։
–Իսկ քույրիկի՞ս։
–Շուկայում ենք գնել։
–Հապա մայրիկը որտեղի՞ց է։
–Նրան գնացել են, ծովից են բերել։
–Իսկ դո՞ւ, որտեղի՞ց ես եկել։
–Ինձ անտառում են գտել։
–Մի՞թե մեր ընտանիքում մի նորմալ ծնված մարդ չկա։

–Մայրի՛կ, դու որտե՞ղ էիր, երբ ես ծնվեցի։
–Հիվանդանոցում։
–Իսկ հայրի՞կս։
–Աչխատանքի տեղը։
–Ուրեմն ոչ մեկդ տանը չէի՞ք, երբ ես ծնվեցի։

Դպրոցում, քննությունից հետո։
–Ինչպե՞ս անցավ ձեր քննությունը։

—Շատ վատ։ 90 տոկոսը կտրվեց։
—Ուրեմն այդքան մե՞ծ է ձեր դասարանը։

—Սահակ, չունդ լա՞վ չուն է։
—Հա, Գևո ջան, լավ չուն է, ո՛չ հաչում է, ո՛չ կծում։

—Ո՞նց ես, Գևո ջան, ի՞նչ կա-չկա։
—Ինչ տեսնում ես՝ կա, ինչ չես տեսնում՝ չկա։

—Ահա՛ երկու խնձոր, մեկը քեզ, մյուսը՝ քույրիկիդ, — ասաց մայրիկը Լուսիկին։
Քիչ անց Լուսիկը ներս մտավ ու ասաց.
—Մի խնձորը կերա։
—Մյուսը տուր քրոջդ։
—Սա իմն է, մի քիչ առաջ ես նրա խնձորն եմ կերել։

Աչոտը ուզում է աչխատանքի ընդունվել։ Բայց ինքը կակազում է։ Հարցնում են.
—Մի՞շտ եք կակազում։
—Ո-ո-ո-չ-չ-չ։ Մի-մի-մի-այն խո-խո-խո-սե-սե-սե-լիս։

Բժշկի ընդունարանում։ Աչոտը նոր դուրս է գալիս բժշկի մոտից։
—Ի՞նչ ասաց բժիշկը, հարցնում է իրեն սպասող ընկերը։
—Սրտի անբավարարություն, դեղնախտ, արյան ճնշում, չաքարախտ և ուրիշ շատ բաներ ...
—Դե ուրա՛խ եղիր, ուրեմն շատ առողջ ես։ Մարդ պետք է երկաթյա առողջություն ունենա, որ այդ բոլոր հիվանդություններին դիմանա։

Բժշկի ընդունարանում։ Մայրն աչխատում է հանգստացնել իր երեխային, որ լաց է լինում ու հրաժարվում մտնել բժշկի մոտ։

—Մի՛ վախենա, բալի՛կս, բժիշկը քեզ ոչի՛նչ չի անելու։

—Եթե ոչինչ չի անելու, հապա ինչո՞ւ ենք եկել բժշկին, — հարցնում է երեխան։

Վարդանը հյուր է գնում ընկերոջ՝ Արմենի մոտ։ Տեսնում է Արմենին՝ չան հետ դեմ-դիմաց նստած, մեջտեղում՝ չախմատի տախտակը։

—Էդ ի՞նչ եք անում, — հարցնում է Վարդանը։

—Շախմատ ենք խաղում։

—Ի՛նչ խելոք չուն է, — հիանում է Արմենը։

—Ինքան էլ խելոք չի։ Միշտ մեկ գրոյով տարվում է։

Արմենը հյուր է գնում ընկերոջ՝ Սուրենի մոտ։ Տեսնում է, որ Արմենը ակվարիումից իր միակ ճուկը հանել է ու ափի մեջ է պահում։

—Էդ ի՞նչ ես անում, — հարցնում է Արմենը։

—Ձկանս վարժեցնում եմ ջրից դուրս չնչել։

—Դու գի՛ժ ես, խեղճ ճուկը կսատկի, — ասում է Արմենը ու գնում։

Հաջորդ օրը Արմենը կրկին գալիս է ու նույն բանն է տեսնում։

—Տեսնո՞ւմ ես, — ասում է Սուրենը։ — Ճուկս արդեն վարժվում է։ Այսօր 5 րոպե ակվարիումից դուրս մնալով՝ առանց ջրի դիմացավ։

Երբ մի քանի օր հետո Արմենը կրկին այցելում է ընկերոջը, ճուկն այլևս չի երևում։ Հարցնում է.

—Ճուկդ որտե՞ղ է։

—Տասը րոպե օդ չնչեց, դիմացավ, բայց երբ ջուրը գցեցի, խեղդվեց։

EXCERPTS
FROM ARMENIAN PROSE

Աղթամար կղզին, որ հայտնի է իր վաղնջական հիշատակներով, տարածվում է Վանա լճի հարավարևելյան մասում՝ հազար ութ հարյուր մետր բարձրությոյն վրա։

Հինավուրց կղզին՝ վիթխարի կետ ձկան տեսքով, ձգվում է հարավից հյուսիս՝ կանաչազարդ պոչն ու հսկա գլուխը դեպի վեր կարկառած։

Լճի հյուսիսարևմտյան մասում բարձրանում է Սիփանը՝ գլուխը մխրճած երկնքի լազուրի մեջ, իսկ նրանից քիչ հեռու երևում են կղզին չրջանակող լեռները՝ Գրգուռն ու Նեմրութը, Անդոկն ու Ծովասարը։

Հայ մարդը զարեր ի վեր սիրել, գուրգուրել է լուրթ կապույտի միջից դուրս պրծած այդ կանաչ հանգրվանը, զարդարել բազիններով ու տաճարներով և բիրտ ոտքերից անկոխ հողի այդ պատառիկը դարձրել դրախտանմման մի անկյուն։

Առավոտվա չնկչնկան զեփյուռը ծուլորեն խաղում է պաղպաջուն ալիքների հետ, և նավակը հազիվ նկատելի սահում է ծովի հայելանման մակերևույթի վրա։ Հեռվում սկսել էին ուրիշ նավակներ էլ երևալ։ Ծովը կենդանանում էր։ Ինչ-որ տեղից լսվում էին մելամաղձոտ երգի թախծալի հնչյունները։

Լճի մոտ՝ բարձրադիր քարակոփ ժայռի վրա, կանգնած էր մի մարդ՝ լայնեզր գլխարկով ու եվրոպական հագուստով, և ակնդետ նայում էր լեռնաշխարհի գեղեց-կուհյուններին։ Եվրոպայի ու Ասիայի չատ երկրներ չրջագայած այդ մարդն այժմ սրտի թրթիռով էր նայում կղզու գեղցկուհյուններին։ Շուրթերը ինչ-որ երգ էին մրմնջում, իսկ աչ ձեռքը, փոքր-ինչ առաջ մեկնած, հազիվ նկատելի ցնցվում էր։ Թվում էր՝ անտեսանելի վրձնահարվածներ էր տալիս, որ հոգու մեջ առհավետ դրոշմի գեղատեսիլ բնուհյան երանգները։

Անծանոթը Փանոս Թերլեմեզյանն էր։

Հանկարծ ինչ-որ բան հիշելով՝ հապշտապ ցած իջավ և քայլերն ուղղեց դեպի Աղթամար կղզու հայտնի քարայրը։

Նա սեպաձև արահետով անցավ այծյամի ճարպկուհյամբ, և նրա ուղեկիցը՝ Գասպարը, չէր կարողանում հասնել հետևից։ Երբ նրանք մտան քարայր, չփոթված կանգ առան. նրանց թվաց՝ մտել են մի հոյակապ տաճար՝ հաստ, ողորկ սյուներով և առաստաղից գլխիվայր կախված աշտանակներով։ Շուտով նրանց աչքերն ընտելացան աղոտ լուսին, և նրանք պարզ տեսան բնուհյան անձեռակերտ հրաշալիքները։ Առաստաղից կախված էին ողկույզի ձև ունեցող գույնզգույն հանքաքարեր, հսկա կերոններ հիշեցնող կրային քարացումներ։

Ըստ Զարզանդ Դարյանի «Արծիվ Վասպուրականի» *վեպի*
(Adaptation from Zarzand Daryan, 1912-1984)

Կամաւորյանը հանկարծակիի եկածի նման մի վայրկեան մնաց անխօս, ապա նորից սկսեց նայել իր չուրջը՝ տեսնելու համար այն, ինչ որ գիւղացին «գիւղ» էր անվանում։ Տեղը, ուր կանգ էր առել կառքը, գիւղամիջով անցնող խճուղին էր։ Գետինը ծածկված էր աղբակույտերով և ամբարի փչուրներով։ Այդ ընդարձակ աղբյուսի վրա փողոցների փոխարէն ընկած էին ինչ-որ ծուռումուռ անցքեր, որոնց երկու կողմերում անկարգ ու չեղ ցրված էին հողածածկ բարձրութիւններ։ Դրանք գիւղացիների կավաչէն հիւղակներն էին՝ նեղ փեղկեր ունեցող պատուհաններով ու փոքրիկ դռներով, որոնք լուսան ստանում էին երդիկներից։ Տեսարանը ապշեցուցիչ տպավորութիւն էր թողնում։

Կամաւորյանը լուռ լսում էր տիրացուին։ Ուրիշ անգամ գուցե նա ուշադրութիւն չդարձներ, արհամարհեր տիրացուին, բայց այս անգամ նրա բացատրութիւնները լուրջ մտահոգութեան տեղիք տվին։ Գիւղն այնքան էր քաղցած ու ողորմելի, որ մի կառապան չէր կարողանում կեր գտնել իր ձիերի համար, իսկ դա գիւղացիների անհոգութիւնից ու անչնորհքութիւնից է միայն, և անհնարին է նրանց մեղ ապրել ու գործել։ Վերջին հետևութիւնը փոխանակ նրան տխրեցնելու, մի թաքուն հաճոյք պատճառեց. չէ՞ որ խոչընդոտներն այնքան զորեղ են ու անհաղթահարելի, որ ինքն ստիպված էր դրժել յուր ուխտը՝ իր կամքից անկախ։ Գիւղը թողնել-հեռանալու նման մի միտք անցավ Կամաւորյանի գլխով, բայց դա մի ցոլք էր միայն, որ աստղի նման փայլփլեց ու անցավ վայրկենապես։ Նրա հոգու աչքերը մնացին սևեռած այն լուսավոր կետին, որի վրա գրված էր հայ գիւղացու բարօրութեան համար աշխատելու, տքնելու յուր վճիռը։

Շուտով այտեղ հասավ և տանուտերը՝ միջահասակ, ամրակուռ, խոշոր դիմագծերով, խելացի աչքերով բարեհամբույր մի մարդ։ Տան աղյուսե պատին հենելով ձեռքի փոցխը՝ անշտապ մոտեցավ հյուրին, քաղցրաժպիտ ողջունեց, հարցրեց նրա առողջութիւնից, ուղևորութեան հանգամանքներից և հայտնեց յուր չնորհակալութիւնը, որ նա չնորհ էր արել յուր տանը հյուրընկալվելու։ Կամաւորյանը հայտնեց իր ով լինելը, ասաց, որ ճանապարհորդելու նպատակով է այժմ գտնվում Ջիբուխլուում։

Ըստ Մուրացանի «Առաքյալը» վիպակի
(Adaptation from Muratsan, 1854-1908)

Մի օր՝ աշնանը, Պետրոսը կառքով բժիշկ էր տանում հիվանդ կնոջ համար։ Մոտ քառասուն տարեկան տղամարդ էր նա՝ ալեխառն մազերով, գալջի պես դունատ դեմքով, խոհուն, տխուր աչքերով։

Աշնանային թխպոտ օրերից մեկն էր. ամպամած երկնքից անընդհատ մաղում էր անձրևը՝ միալար, սրտամաշ, տաղտկալի։ Օդը հագեցած էր մինչև ոսկորները թափանցող անախորժ խոնավութեամբ։

Փողոցի լճացած կեղտոտ ցեխաջուրը դեսուդեն չպրտելով՝ կառքը գնաց-կանգ առավ մի խարխուլ տան ընդարձակ բակի առաջ։

Բժիշկը Պետրոսի հետ իջավ կառքից և, աչխատելով անցնելու համար հարմար տեղ գտնել, մտավ բակը, որտեղ կավային ցեխի մեջ երևում էին ձիերի սմբակների բազմաթիվ հետքեր՝ անձրևի ջրով լի։

Պետրոսը բժշկին ծուռտիկ-մուռտիկ սանդուղքներով առաջնորդեց ներքնահարկը։ Բժիշկը մտավ սենյակի նմանութիւն ունեցող կիսախավար մի նկուղ՝ խոնավ պատերով և գերանածածկ առաստաղով։ Նկուղի գաղջ և հեղձուցիչ օդը միանգամից խփեց նրա դեմքին։

Դռան դիմաց, մի անկյունում, դրված էր հիվանդի մահճակալը՝ մաքուր անկողնով։ Հիվանդը, ոսկրացած ձեռքը կիսով չափ վերմակի տակից հանած, օրորում էր մանկան օրորոցը, որ դրված էր պատի տակ՝ իր կողքին։ Թիթեղյա վառարանում ճրթճրթում էին տաչեղները՝ լուսավորելով մուխ հատակը։

Մի կերպ կռթնելով իր կմախքացած բազուկներին՝ հիվանդը նստեց. նա չնչում էր ծանր ու հատու, երկար տարածութիւն վազած մարդու նման։

Բժիշկն սկսեց քննել նրա կուրծքը, թիկունքը։ Երբ նա վերջացրեց իր զննումները, մի կողմ կանչեց Պետրոսին և ասաց.

—Արյան պակասութիւն, թոքերի թուլութիւն, մաղձի անչափ կուտակում, նյարդերի գրգռվածութիւն։ Պետք է երկարատև բուժում, լավ սնունդ և հանգիստ։

Բժիշկը դեղատոմս գրեց, մի քանի խորհուրդներ էլ տվեց և, երբ ուզում էր հրաժեշտ տալ, ձեռքի մեջ զգաց Պետրոսի ձեռքի չոչափումը։

—Չարկավոր չէ, — ասաց նա՝ ձեռքը հետ քաշելով։

«Քի՞չ համարեց, թե՞ խղճաց», — դառնութիւմբ մտածեց Պետրոսը և գլխահակ, ներքին հուզմունքը թաքցնելով՝ բժշկի հետ ուղղվեց դուրս։

Ըստ Նար-Դոսի «Բարերար և որդեգիր» *վիպակի*
(Adaptation from Nar-Dos, 1867-1933)

Այդ օրից երկու եղբոր հարաբերութիւնները ավելի լարվեցին։ Մարութխանյանը՝ այդ ամբարիշտ ու ամբարտավան ապեկուլյանտը, անընդհատ գրգռում էր Միքայելին՝ ոչ այնքան դատ բանալու եղբոր դեմ, որքան կոնտր-կտակի միջոցով Սմբատին ջղագրգիռ վիճակի մեջ պահելու։ Անձրևատրդի նման երկարավուն իրան ունեցող այդ անգոհ մարդուն նյարդայնացնում էր Սմբատի սառնասրտութիւնը, և նա զօր ու գիշեր խորհում էր՝ ինչ միջոցներ գտնի հակառակորդին հաղթելու համար։ Մի՞թե Սմբատը՝ հոր կողմից ամբաստանյալ, Ալիմյանների ընտանեկան օրենքները ոտնահարած, ընտանիքից օտարացած այդ երիտասարդը, պիտի անպատիժ վայելի ահագին հարստութիւնը, անողջախոհ մի երիտասարդ, որը երբևէ չի տքնել, չի մտածել և հանկարծ տիրացել է միլիոնների։ Ո՛չ, դա անարդարութիւն է, և ինքը երբեք թոյլ չի տա նրան հանգիստ վայելել հայրական փողերը։ Նա երբևիցե չէր կասկածում, որ Սմբատն աւտում էր իրեն՝ մտքում համարելով խարդախ, այլասերված մարդ։ Եվ այս հանգամանքն ավելի էր բորբոքում նրա թշնամական զգացումը՝ անբարյացակամորեն տրամադրելով նրա դեմ։ Սակայն նա չէր կորցնում իր սառնասրտութիւնը և արտաքուստ Սմբատի հետ վարվում էր անխաբ բարեկամութիւմբ ու ակնածանքով։ Սմբատը անդաստիարակ պատանյակի նման չէր թաքցնում իր արհամարհանքն ու անբարյացակամ վերաբերմունքը։ Իսկապես, Մարութխանյանն ինքը հուշ չուներ կոնտր-կտակի գործութիւն վրա։ Դա մի միջոց էր՝ Սմբատին վախեցնելու և դրդելու, որ գեթ մասամբ գոհացնի իր քրոջը՝ տալով նրան ժառանգութիւնից մի որևէ մաս։ Մյուս կողմից՝ կտակը հնարել էր՝ Միքայելին իր ձեռքերի մեջ առնելու, և արդեն առել էր։ Այժմ

Նրանք իբրև դաշնակիցներ կապված են մեկընդմիշտ խարդախ ձեռնարկութեան բոլոր հետեւանքներով, և Մարութխանյանն զգում էր, որ Միքայելը առանց իրեն չի կարող ոչ մի քայլ անել։ Իսկ այս հանգամանքը ձեռնտու էր նրան մի այլ նպատակի համար, որին հասնելն ավելի դյուրին էր համարում, քան Ալիմյանի ժառանգութիւնից որևիցե բան ստանալը։

Ըստ Շիրվանզադեի «Քառն» վեպի
(Adaptation from Shirvanzade, 1858-1935)։

Մեզանից հարյուրավոր տարիներ առաջ չատ ու չատ հեռու՝ ծովերի ու օվկիանոսների մյուս ափին, կար մի աշխարհ։ Այնտեղ ծաղիկներ կային՝ էքնաղ, թիթեռների պես գվարթ ու թրթռուն, աղբյուրներ կային՝ ականակիտ, կարկաչուն։ Բայց այնտեղ մարդիկ չար էին, անգութ ու նախանձ։

Մի որը ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մէջ։ Նա միայնակ էր, ինչպես մի թռչուն՝ ամայի ժայռերի ծերպերի մէջ։ Եվ նա մեծացավ բոլորի աչքի առջև՝ անտես ու անհայտ։ Ու երբ պատանի դարձավ, թողեց այդ քարսիրտ աշխարհը և ճամփա ընկավ՝ մի ուրիշ, լավ ու հյուրընկալ աշխարհ գտնելու։ Մի ծովափի ավազների վրա՝ ցամաքին, չողչողուն մի ձուկ տեսավ՝ հոգեվարքի մէջ թալիկ-թալիկ գալիս։ Պատանին, ձուկը գրկած, քնքշութեամբ տարավ-բաց թողեց ծովի մէջ։

Ձուկը, երբ ուշքի եկավ, ասաց մարդու լեզվով.

— Բարի՛ տղա, ինչ որ սիրտդ կուզի, ասա՛, ես կկատարեմ քո ցանկութիւնը։

Պատանին փոքր-ինչ մտածելուց հետո ասաց.

— Տո՛ւր ինձ մարդու կրծքի տակ քարը իսկական սիրտ դարձնելու մի հնար։

— Դու սեր ես ուզում, քաջասի՛րտ տղա, չա՛տ լավ. կտրի՛ր ծովափի եղեգներից մեկը, սրի՛նգ չինիր և գնա՛ մարդկանց մէջ, երգի՛ր։ Եվ երբ տեսնես, որ նրանց աչքերը արցունքով լցվեցին, իմացի՛ր, որ քարը սիրտ դարձավ։

Այսպես խրատեց ձուկը և առևվեց ծովի փրփրադեզ ալիքների մէջ։

Այնպես քաղցր, այնպես հոգեզրավ դուրս հորդեցին հնչյունները սրնգի փողից, այնպես քնքուշ ու հոգեզմայլ. ուղղակի սրտի խորքից դուրս ցայտեցին դյութական հնչյունները, որ փչրվեցին անգթութեամբ բռնված սրտերը։ Մարդիկ դուրս թռան տներից, չրջապատեցին պատանուն և առաջին անգամ նկատեցին, որ աղքատ է ու միայնակ. գրկեցին ու համբուրեցին նրան և առաջին անգամ իրենց կյանքում վշտահար հեկեկացին...

Այդ օրվանից աշխարհ եկավ երգը, ու երգի միջոցով հուզվեցին քար սրտերը, և այդ օրվանից սերը վշտի հետ անբաժան՝ բույն դրեց մարդկանց կրծքում, նրանց սրտի մէջ։

Ըստ Ավետիք Իսահակյանի «Սիրո երգը» պատումի
(Adaptation from Avetik Issahakian, 1875-1957)

Ամբողջ քաղաքը անասովոր մարդու վրա թողնում էր երկաթուղու կայարանի տպավորություն, ուր ամեն ոք չտապում է, վազում, հրում ու հրվում՝ վախենալով գնացքը փախցնել։ Աչ ու ձախ սրընթաց անցնում են տնային ու վարձու կառքերը՝ տանելով գործի մարդկանց։ Նորաձև խանութները՝ հսկա ցուցափեղկերով, լիքն են հաճախորդներով. մտնում են, դուրս գալիս, գնում, վաճառում, խաբում ու խաբվում ու միշտ չտապում։

Ամեն ինչ փոխվում է տենդագին թափով, իսկ ամենից առաջ՝ մարդկանց արտաքինը։ Մի երկհարկանի չենքի առջև Սմբատը տեսավ խումբ-խումբ մարդկանց, որ խորհրդավոր հայացքներ փոխանակելով՝ վախում էին։ Նա մեխանիկորեն գլուխը բարձրացրեց և չենքի ճակատին կարդաց՝ «Բորսա»։ Մի քանիսը, Սմբատին ճանաչելով, պատկառանքով հետ քաշվեցին՝ նրան ճանապարհ տալու, մյուսները խոնարհ գլուխ տվեցին։

Սմբատն անցնում էր՝ ամեն կողմից ընդունելով սիրալիր ողջույններ և ժպիտներ։

Նա զգաց մի տեսակ արհամարհանք և նույնիսկ նողկանք դեպի այդ մարդիկ, որ պատրաստ էին միմյանց հոչոտել, միմյանց կուլ տալ՝ հօգուտ իրենց շահի։

Նա մի տեսակ ամոթ զգաց իր մտավոր և բարոյական աչխարհի առջև։ Այդ պահին նա կանգնած էր երկու մարդու միջև. մեկն այժմյան Սմբատն էր, մյուսը՝ երկու ամիս առաջվա Սմբատը, մեկը՝ միլիոնների ժառանգորդը, մյուսը՝ այն աղքատ երիտասարդը, որ իր ընտանիքը պահում էր մանավոր դասերով, հորից անիծված, գերդաստանից արտաքսված... Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիչտ...

Սմբատն զգաց, որ իր մտքերը գնում են հեռու։ Նա հանկարծ ցնցվեց ու կանգ առավ. հիշեց անցյալ օրը եղբոր՝ Միքայելի հետ ունեցած անախորժ խոսակցությունը։ «Այո՛, եթե կտակն օրինական է, խնդիրը կլուծվի ինքնըստինքյան, առանց իմ կամքի», — մտածում էր նա սանդուղքներով բարձրանալիս։

— Սմբա՛տ, — լսեց նա մի ծանոթ ձայն և հետ նայեց։

Գրիգոր Հարեթյանն էր, որ հևիհև ու քրտնամրած մոտենում էր։ Նա միլիոնատիրոջ ավագ որդուն խնդրում էր չնորհ բերել Քյազիմ-բեգի տանը կազմակերպվող խնջույքին։

Սմբատը ցանկանում էր մերժել, բայց հետաքրքրությունը գերազանցեց. արժե մի անգամ ներկա լինել Միքայելի ընկերական շրջանում և տեսնել՝ ինչպես է նա անցկացնում իր կյանքը։

Ըստ Շիրվանզադեի «Քառս» վեպի
(Adaptation from Shirvanzade, 1858-1935)

Երբ Փարիզում էի, մի քանի ընկերներից հրավեր ստացա՝ Նոր տարին միասին դիմավորելու չքեղ ռեստորաններից մեկում։

Ռեստորանի ընդարձակ դահլիճը փոքր առ փոքր լցվեց հասարակությամբ, բոլոր սեղաններն զբաղվեցին։ Պչրասեր կանայք պճնված էին ամենավերջին մոդայով։ Նրանց ականջօղերի և մանյակների, ապարանջանների և մատանիների ագատներն ու ադամանդները բյուրավոր աստղերի պես փայլփլում էին երփներանգ ու ակնախտիտ լույսով։ Դահլիճը լուսավորված էր ինը-տասը հսկայատիպ ջահերով, որոնք աստղերի նման չողշողում էին վերևից։

Որոտընդոստ երաժշտությունը թնդաց, և տեղ-տեղ սկսեցին պարել զույգերը։ Յուրաքանչյուր սեղանից ճառագայթում էին հնչուն ծիծաղ, քրքիջ, զվարթ ձայներ։

Ակնդետ նայում էի չուրջս՝ մոտիկն ու հեռուն. բոլորի աչքերի մեջ պայծառ ժպիտ կար և գոհունակություն։ Կարծես այս մարդիկ երբևիցե վիշտ չէին տեսել, որևէ տխուր ժամ չէին ունեցել և հիմա հավաքվել էին այստեղ՝ նույն հավատքով ընդունելու նոր եկող տարին։

Ժամանակը քանի մոտենում էր գիշերվա ժամը 12-ին, այնքան ընդհանուր զվարթությունը լցվում էր, ուռճանում, որ պիտի ազմկեր չամպայնի չչերի պայթյուններով և պիտի հորդեր չչերից հոսող վրփրուն գինու հետ։

Փողոցից՝ ռեստորանի հսկա լուսամուտներից ներս էին նայում ցնցոտիներ հագած մարդիկ, սովալլուկ մանուկներ։ Մի քանի երեխաներ նույնիսկ հանդգնորեն ներս էին խցկվել և կծկվել դռան մոտ։

Սպասավորները գայրույթով անընդհատ դուրս էին քշում նրանց։

— Չարհուրելի բան է աչխարհը, — ասաց ընկերներից մեկը։— Քանի աղքատ կա չուրջդ, երջանիկ չես կարող լինել, — հարեց մյուսը։

Ամենքը սպասում էին խորհրդավոր վայրկյանին՝ ժամը 12-ին, երբ մի ցավագին, աղիողորմ ճիչ լսվեց. դռան մոտ էր։ Սպասավորներից մեկը բռունցքով հարվածել էր մի խարտյաշ երեխայի երեսին։ Երեխայի քթից հոսում էր արյունը. ողորմելին զարհուրանքից ճչում էր։ Կանայք հանկարծակի ձայնից սարսռացին և ծածկեցին իրենց մարմարյա ուսերն ու հոլանի բազուկները։ Շատերը նյարդայնացած էին. չգիտես ով՝ ում դեմ։ Ռեստորանի կառավարչի հրամանով երաժշտությունը թնդաց, և որոտընդոստ ձայների մեջ խեղդվեց երեխայի լացի ձայնը։

Ըստ Ավետիք Իսահակյանի «Նոր տարվա դիմավորումը Փարիզում» *պատմվածքի*
(Adaptation from Avetik Issahakian, 1875-1957)

Եվ ահա ժամանակը չի ուշացնում իր օգնությունը, որպեսզի հասկանանք, թե կոմիտասի գործը ամենից ավելի հիշեցնում է Մեսրոպ Մաշտոցի գործունեությունը։

Ընթերցելով ժողովածուի նյութերը՝ խելամիտ ընթերցողը չի կարող չզգալ, չհասկանալ ու չըմբռնել, որ կոմիտասը մի հերթական դեմք չէր հայ մշակույթի պատմության մեջ։ Նրա ոսկեզօծ մատյանում երբեք չի գրաղեցնի միայն մի դրվագ։ Նա միմիայն երգահան չէր, թեկուզ դարագլխային՝ մի ամբողջ դպրոցի հիմնադիր։ Միաժամանակ նա մեծ գիտնական էր, մեկն այն երջանիկ հայտնագործողներից, որոնց հավաքական անունը Կոլումբոս էր։ Նաև հայ երգի լավագույն կատարողը՝ նույնպես սկզբնավորողը։ Իսկ խմբավա՞րը, ուսուցի՞չը, բանասե՞րը...

Այս ամենը քաջ հայտնի է եթե ոչ բոլորին, ապա շատերին։

Այսպիսին էր մեկ էլ Մաշտոցը։ Լինելով մեր առաջին լեզվաբանը՝ ցայսօր նա մնում է խոչորագույնը. անցած-գնացած տասնհինգ դարերի ընթացքում մի այնպիսի դյուրաշարժ ու մշտափոփոխ լեզու, ինչպիսին է հայերենը, չկարողացավ խոտորվել նրա կարգադրած հնչյունական համակարգից. «ֆ»-ն այն բացառությունն է, որ հաստատում է օրենքը։

Նա բառացիորեն մեր առաջին քերականն է և առաջին դասագիրքը, մեր դպրոցների առաջին տնօրենն ու առաջին ուսուցչապետը։ Առաջին թարգմանն էր և առաջին մեկնիչը։ Այս հայտնի է համարյա բոլորին։

Բայց Մաշտոցի դիմաքանդակը ավարտուն չէր այնքան ժամանակ, քանի չէր գիտակցված, որ մեր մեծագույն քաղաքագետն էր նա։ Մեր տիգրաններից ու երվանդներից, արշակներից ու վաղարշակներից ոչ ոք երբևէ այնպես չզգաց ժամանակի զարկերակը, ինչպես այդ դպիրը, որ իր էությամբ ու մանավանդ կոչմամբ հեռու էր քաղաքականությունից։

Այժմ գտնված է Մաշտոցի այս ամենաբնորոշ ու ամենաէական դիմագիծն էլ, և նրա դիմաքանդակը ավարտված է։

Առաջին պահին, անշուշտ, արտառոց կթվա, եթե զուգահեռը շարունակվի՝ Կոմիտասը նաև կոչվի քաղաքագետ։

Ըստ Պարույր Սևակի «Դիմանկարի ամբողջացման համար» *հոդվածի*
(Adaptation from Paruyr Sevak, 1924-1971)

Պետրոս Մախսյանի բնակարանը՝ միհարկանի, ճաքճքված պատերով, փտած դռներով, նեղ լուսամուտներով, գտնվում էր Ե. քաղաքի մի հետ ընկած, փոշեծածկ փողոցի վրա։ Հնօրյա այդ կառույցը՝ ասես Նոյի ժամանակներից մնացած, գրեթե խարխլել էր, բայց սնահավատ տանտերը՝ Մախսյանը, որն իր առևտրավաշխառուական գործունեության աննախընթաց հաջողությունները կապում էր այդ բնակարանի, նրա մեջ եղած «ոսկի աքաղաղի» հետ, թույլ չէր տալիս վերանորոգչական որևէ գործ։ Նույնիսկ ընդարձակ բակում աճած խաղողի որթերին կարծես աղամորդու ձեռք երբևիցե չէր կպել, նրանք մեծացել էին իրենց վայրենի համարձակության մեջ։

Մախսյանն այն հարուստներից էր, որոնց պարսկերեն հորջորջումով կոչում են «նովքիսա», այսինքն՝ նոր քսակի տեր, որ նշանակում է աղքատությունից բարձրացած և դրամի տեր դարձած նորընծա հարուստ։ Այս հարուստները էապես զանազանվում են ժառանգական դրամատերերից իրենց ընդհանուր վարքագծով և ամենից առաջ՝ նրանով, որ նրանք, իբրև «չտեսներ», մարդու ամեն մի արժանիք, ամեն կատարելություն դրամի մեջ են տեսնում։ Դրանք երևակայում են, թե խելք, շնորհք, գիտություն, ազնվություն, վարկ, պատիվ, մի խոսքով՝ ամեն բան ունեն, որովհետև փող ունեն։ Իսկ նրանց, որ զուրկ են այդ ««շնորհից», արհամարհում են, դիտում որպես անշնորհք, անպիտան արարածներ, որոնք պետք է իրենց կամակատարը լինեն միայն, ոչ ավելին։ Բայց դրամի կուտակման անհագ տենչին լիովին բավարարություն տալու համար միայն «ոսկի աքաղաղը», այսինքն՝ բախտը բավական չէր։ Մախսյանը իր գործունեության այգածագին իսկ գլխի ընկավ, որ միջոցների միջև չպետք է խտրություն դնել, չպետք է երկնչել, ընկրկել, հրաժարվել զարտուղի միջոցներից, խաբեբայությունից ու շողոքորթելուց, մտացածին պլանները պետք է դարձնել իրական ու առօրեական, հաղթահարել բոլոր խութերն ու խոչընդոտները, բոլոր միջոցները ի սպաս դնել հօգուտ իր հարստացման բաղձանքին։ Ամեն միջոց նրա համար սուրբ էր, եթե հասցնում էր նպատակին։

Եվ այդ բոլորը նա անում էր ոչ թե չարամտությունից դրդված, այլ բոլորովին բնական էր համարում, և այս պատճառով նրա խիղճը միշտ հանգիստ էր։

Ըստ Բաֆֆու «Ոսկի աքաղաղ» վեպի
(Adaptation from Raffi, 1835-1888)

Շեքսպիրն իր «Համլետով» տիեզերքը դրեց մարդու մեջ՝ Համլետի չուրթերով ազդարարելով. «Ինքս ինձ համար մի ամբողջ տիեզերք եմ»։

Համլետը՝ այս անհուսա երազողը, որի բնածին ազնվությունը այլասերվում է ու դառնում կասկած, և կասկածը՝ մաղձ, դերագույն հակադրությունն է Մակբեթի, որի մեջ տիրապետության ծարավը, մարդկային ծառայամոլության անհագուրդ ճգտումը այլասերվում է և տանում դեպի դատողության մթագնում ու դեպի ոճրապարտ հանցանք։

Եթե Համլետը լիներ սոսկ մի իդեալիստ, կփրկվեր և երջանիկ կապրեր իր երազներով։ Սակայն իդեալիստ լինելուց բացի նա ընդունակ է տեսնել աչխարհը իր ներքին աչքերով, այնպես, ինչպես նա կա։

Մեղուզայի գլխի նման անընդհատ նրա աչքերին նայող իրականության դաժան պատկերը սառեցնում է նրա արյունը, չեզոքացնում նրա գործելու ցանկությունը, դարձնում նրան մի ստվեր՝ կենդանի մարդկանց աչխարհում։ Ոչ հաղթահարել կարող է նրան, ոչ էլ մոռանալ։ Նա տեսնում է մարդկային հասարակությունը՝ իր անողորմ մանրամասնությամբ, ու մարդուն՝ առանց դիմակի։

Այս սարսռեցուցիչ հայտնությունից հետո նրա բնածին թախիծը տեղի է տալիս մի անբուժելի զզվանքի դեպի աչխարհն ու մարդը։ Եվ եթե չի իրագործում իրեն պարտադրված անդրչիրիմյան հրամանը՝ լուծել վրեժը իր սպանված հոր, կամքի թուլությունից չէ, ինչպես կարծում է Գյոթեն, այլ ծայրահեղ արհամարհանքից դեպի աչխարհն ու աչխարհայինը։ «Ինչի՞ համար մի բան ձեռնարկեմ և ի՞նչ օգուտ դրանից», — մտածում է նա։

Ի՞նչ է այդ «լուսությունը», որ զմռսում է դանիացու չուրթերը անէության չեմքին։ Այդ «լուսությունը», ըստ իս, աչխարհը բարեփոխելու, սրբագրելու անհնարինության հանդեպ ողբերգուի ընդվզումն է, ծառացումը անուղղելիի դեմ, որ արտահայտվում է ծայրագույն զզվանքով, անբուժելի նողկանքով մահացող Համլետի չուրթերին։

Այդ ամենախոս «լուսությունը» աչխարհը ցնցող մի աղաղակ է դեպի նորը, դեպի գալիքը սլացող մի կանչ, մի հույս, գուցե և մի դավանանք։

Ըստ Վահրամ Փափազյանի «Համլետը, ինչպես տեսա» գրքի
(Adaptation from Vahram Papazian, 1888-1968)

Անպարփակ վիշտը հոգու մեջ՝ նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցավակից եղավ անօգնական աղամորդուն։ Առավ նրան իր սրտի մեջ, մտավ նրա սիրտը, խոսք ասաց, խոսք լսեց և իմացավ, որ ամենուր, աշխարհի բոլոր ծայրերում էլ վիշտը մեկ է, սերը՝ մեկ։ Եվ նա հյուսեց բոլորի համար իր երգը, սիրո, տառապանքի, ազատության հոգեզմայլ երգը։ Եվ վսեմախոհ երգիչը՝ անբաժան ցուպը ձեռքին, թափառեց աշխարհեաշխարհ, եղավ այլևայլ երկրներում ու մի օր՝ կյանքի իրիկնամուտին, իմաստուն փորձով ու աշխարհըմբռնմամբ, հոգնաբեկ ու ճամփաների փոշին արևառ ճակատին, վերադարձավ հայրենի տուն։ Ու երգի մրմունջով ելավ Արագածի լուսահորդ լանջն ի վեր, ընկողմանեց թուլրիթուլր ծաղիկների մեջ։ Վերը՝ երկնի լազուրում, ճախրում-ճխում էին ծիածանաթև հավքերի երամները, միմյանց ձայն տալիս, ձայն առնում քաղցրահնչյուն, հոգեթրթիռ դայլայլով։ Ներքևում նա տեսավ ավերակների մոխիրներից վեր բարձրացող քաղաքներ, չեներ՝ կուսրներին ծխի կապույտ ծվենները։ Լսեց հայաբառ, բնաչխարհիկ երգը հերկվորի, կարոտավառ նայեց Արարատյան դաշտին, Մեծ ու Փոքր Մասիսներին, նայեց վչտով ու լղճանքով լի, և թրթռուն սրտի ջերմ արցունքներով ցողվեցին ծաղկաթերթերը։ Հուզաթաթավ հոգին խաղաղվեց, ականջին երկնային հնչյունները գգվեցին, ու ծաղիկների բուրմունքով արբած՝ հանդարտ նիրհեց։

Հեքիաթային երազը դեռ նոր էր սկիզբ առել, երբ հանկարծ լսեց մի ահասարսուռ ձայն։ Մեր արծվի պես բաց արեց աչքերն ու իր դեմ տեսավ անագորույն, դժխեմ մահը։ Առանց դուլգն իսկ երկյուղի, անթաքույց արհամարհանքով և անհողդողդ նայեց մահվան աչքերին ու անվրդով հարցրեց.

— Ի՞նչ է ուզածդ։

Մահվան դեմքին թրթռաց ահմռկեցուցիչ ժպիտը.

— Միամիտ է քո հարցմունքը և ոչ վայել իմաստունին. ի՞նչ պետք է ուզի մահը մահկանացուից։

Բարձրացավ մի հոնքը իմաստուն երգչի, թրի պես կեռվեց ճակատի վրա։

— Դու հոգիս ես ուզում, բայց ես այն բաժանել եմ բոլորին, և քեզ տալու ոչինչ չի մնացել, — ասաց երգիչը և նիրհեց բազմասփյուռ ծաղիկների մեջ՝ Արագածի զմրուխտ լանջին։

Ըստ Սուրեն Այվազյանի «Ճակատագիրը հայոց» վեպի
(Adaptation from Suren Ayvazyan, 1915-1981)

Երեք օր անընդհատ հոգեհանգիստ էր կատարվում։ Ամենքն աշխատում էին իրենց հարգանքը մատուցել։ Այլևս ոչ ոք չէր բամբասում գծուծ միլիոնատիրոջը, ոչ ոք չէր ասում, թե Մարկոս աղան եղել է խաբեբա, անհագ կողոպտիչ, բռնակալ ընտանեկան հարկի տակ։ Մահն ամենքին հաշտեցրել էր նրա հետ, և, ինքնըստինքյան հասկանալի է, ամեն ոք աշխատում էր իր վշտակցությունը, սրտի մրմունդն արտահայտել ժառանգներին։ Շառերը փսփսուքով միմյանց ականջին չչնջում էին, թե որդիներից դժգոհ ծերունին դեռ երկար կապրեր, եթե սրտում չունենար Սմբատի ցավը։ Ծ, մաչեց խեղճ մարդու հոգին և մարմինը անողջախոհ որդու անհեթեթ, ալիմյանների տան համար վարկաբեկիչ արարքը։ Մեղադրանքն արտահայտում էին կցկ-

տուր չչնջյունով։ Ցուրաքանչյուրը վախենում էր՝ միգուցե լուրը հասնի միլիոնների ժառանգորդին՝ Սմբատին, որը դաստիարակվել էր մոսկովյան միջավայրում, բնավորությամբ ազնիվ էր, անընչասեր։ Բանն այն է, որ ողջ քաղաքը գիտեր, որ հօգս էին ցնդել Միքայելի երազանքները, որ Ալիմյանների տան գործերի ղեկը Սմբատի ձեռքն էր անցնում։

Կտակը բաց արին հանգուցյալի մահվան երրորդ օրը։ Դա նախ՝ հանգուցյալի զգացմունքների սրտաբուխ զեղումն էր, ապա՝ գործնական-պաշտոնական անհույզ մի վավերաթուղթ՝ նրա թողած միլիոնների հետագա բախտի վերաբերյալ։ Մերունին ասել էր, ծխական քահանա Տեր-Սիմոնը՝ արձանագրել։ Հանգուցյալը ամենից առաջ պատվիրում էր Սմբատին Միքայելի սխալ վարքագիծը փոխել, նրան ուղիղ ճանապարհի բերել՝ կտրելով այն այլասերված կենցաղից, ցոփ ու չվայտ կյանքից, որի մեջ օրըստօրե փտում է նրա երիտասարդ մարմինը։ Հետո պատվիրում էր արթուն հսկողություն ունենալ Արշակի վրա, սիրել ու հարգել մորը, ապրել նրա հետ մի հարկի տակ, անբաժան։ Այնուհետև խնդրանքի ու աղերսանքի խոսքերով պահանջում էր ուղղել իր «սխալը»։

Գալով գործնականին՝ հանգուցյալը բացի մի քանի աննշան նվերներից՝ իր չքավոր ազգականներին ու բարեգործական նպատակով, բոլոր իր շարժական ու անշարժ կայքերը և բանկային թղթերն ու ստանալիքները հանձնում էր Սմբատի տնօրինությանը։

Ըստ Շիրվանզադեի «Քunu» վեպի
(Adaptation from Shirvanzade, 1858-1935)

Ուշ երեկո էր արդեն, երբ Պապը, վերջապես, գնաց իր ննջարանը՝ հանգստանալու։ Դա հոր առանձնարանն էր՝ որսի հազվագյուտ մորթիներով ու պես-պես զենքերով զարդարված մի սրահ, որն այժմ դարձել էր ննջարան, ուր վառվում էին երկու յոթնաստեղ արծաթե աշտանակներ, որոնք լուսավորում էին բազմատեսակ մորթիներն ու զենքերը, փայտե նրբակերտ մի մահճակալ՝ իր մետաքսյա անկողնով, և դռները՝ կերպասյա վարագույրներով։ Նա սկսեց անհանգիստ հետ ու առաջ քայլել սրահի երկարությամբ՝ նախչազարդ հատակը ծածկող գորգի վրայով ու չէր կարողանում հանգստանալ. քնելու ցանկությունն անգամ փախել էր նրանից։ Արդյոք հոգնածությո՞ւնն էր պատճառը, թե՞ մի այլ բան։ «Ինչո՞ւ երկիրը հասավ այս դրության, ո՞վ է մեղավոր, մի՞թե միայն պարսիկները», — մտորում էր նա։ Դեմքը մոմերի թրթռացող լույսերի ներքո երևում էր մռայլ, հոգնած ու ջղաձիգ։

Իսկապես հիմա՝ այս երեկո, ավելի քան երբևէ, նրա աչ կիսադեմը ցնցվում էր անընդհատ, և նա դարձյալ չէր կարողանում ասել՝ հոգնածությունի՞ց է դա, թե՞ օրվա տպավորություններից։ Մտքերի հախուռն հորձանքը երբեք չէր թուլանում, այլ ընդհակառակը, քանի գնում, դառնում էր համառ ու տիրական։ Նա փորձ արեց թոթափել իրենից այդ հուշերը՝ վաղվա անելիքների մասին մտածելու, չկարողացավ. այդ մտքերը, որ պաշարել էին նրա ողջ էությունը, անհանգստության հետ ցավ էին պատճառում

նրան։

Պապը գգուշորեն, որ չարթնացնի զինվորներին, անցավ միջանցքով և մոտեցավ Երեմիայի սենյակի դռանը։ Առաջին բանը, որ նկատեց, լույսի մի բարակ ցոլք էր, որ երևում էր դռան ճեղքից։ Երեմիան խորասուզված գրում էր և չնկատեց Պապի ներս գալը։ Պապը նստեց նրա դիմաց՝ թիկնելով եռոտանու վրա և, թիկնոցի փեշերն ուղղելով, դիմեց Երեմիային.

— Ինչո՞վ պիտի վերջանան այս աղետները, խոսի՛ր, Երե՛միա, ես քո խորհրդի կարիքն եմ զգում։

Երեմիան զգաց, որ արքան խիստ հուզված է, որ նրան պետք է հանգստացուցիչ խոսքեր ասել, ուստի և հանգիստ տոնով ասաց.

— Սիրելի՛դ իմ Պապ, մեզ մնում է նոր աղետների առաջն առնել, և դա կանի օրեցօր ավելացող մեր զորքը, որ լցված է վրեժխնդրությամբ, մեր զորավարները, որ, ինչպես տեսար, ոչինչ չեն խնայում հայրենիքի և քեզ համար։

Ըստ Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպի
(Adaptation from Stepan Zoryan, 1989-1967)

Մի քանի օրվա ընթացքում ծանոթացա քաղաքի հասարակությանը, որ իմ վաղվա հանդիսատեսն էր լինելու։ Եվ ես հասկացա, որ ամեն գնով պետք է նվաճել նրանց, որոնք հասարակական կարծիքի առաջին ջուրթակն են լինելու։ Նկարիչներ էին դրանք, քննադատներ, բանաստեղծներ՝ հինը դեռևս չմոռացած և նորին չընտելացած մարդիկ, պառավներ՝ նավթալինի բուրմունքով, որոնք անընդհատ 70-ական թվականների կորիֆեյների անուններով էին երդվում, բայց նրանց կողքին կային ոսկեհեր դերմանուհիներ՝ զուսպ ու ատոր լրջությամբ, չվեդուհիներ՝ անգույն աչքերով, հոլանդուհիներ, որոնք չնայած վաղուց ապրում էին Ռուսաստանում, բայց պահել էին իրենց տոհմիկ ինքնուրույնությունը՝ դեռ փոքր-ինչ աղավաղված։

Այսպիսի խայտաբղետ հանդիսատեսին տիրելու համար բավական չէր կրկնել այն միջոցները, որոնցից օգտվել էի Մոսկվայում։ Անկեղծ ու ինքնաբուխ անմիջականությունը, որի վրա հիմնվել էի մինչ հիմա, այստեղ կարող էր դիտվել որպես միամիտ գավառականություն, իսկ ապավինել միայն արևմտաեվրոպական արվեստի ոճին՝ առինքնելու համար ինքնահավան այդ հանդիսատեսին, վտանգավոր սայթաքում կլիներ։

Ինչևէ, հոգեկան այդպիսի երկվության պայմաններում սկսեցի «Համլետի» և «Օթելլոյի» փորձերը։

Բայց ո՞վ էի ես Լենինգրադի հանդիսատեսի համար՝ մի հայ դերասան, որ եկել էր հեռու Կովկասից և, որպես Օթելլո ու Համլետ, խաղալու էր ֆրանսերենով։

Տեսնո՞ւմ ես, սիրելի՛ ընթերցող, թե որքան ծանր է Մոնոմախի գլխարկը, և որքան անհրաժեշտ՝ անհողդողդ հավատը ուժերիդ հանդեպ ամեն անգամ, երբ հարկը պահանջում է մեզ՝ դերասաններիս, դիմագրավել նոր հանդիսատեսի։

Բեմ մտա առանց ծափահարությունների առաջին անգամ իմ կյանքում։ Ճիշտ

է, որ դա եղավ վերջինը։

Երկրորդ նախադասությունից զգացի, որ չփացած ու անտարբեր դահլիճը հավաքեց իրեն, թուլլ ու անպատշաճ նատածներն ուղղվեցին, առաջին կարգի վրա ձգված ոտքերը հավաքվեցին։

Լռությունն տիրեց դահլիճին, թանձրացավ հազարգլխանի վիշապը, մի մարդ դարձավ, և մի րոպեի ընթացքում հավաքելով նրան իմ ձեռքերի մեջ՝ կախարդեցի արվեստի ուժով և արձակեցի իրենց տները՝ միայն ներկայացման վերջում։

Ըստ Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացք» գրքի
(Adaptation from Vahram Papazian, 1888-1968)

Երբ ծնվեց Երեմիան՝ Մարգարի ու Ալխաթունի տասներկուերորդ զավակը, ծնողները հազիվ էին ծայրը ծայրին հասցնում. ուտող բերան՝ շատ, աշխատող՝ քիչ։ Հետզհետե փոխվեց ամեն ինչ, և օրըստօրե բարվոքվեց ընտանիքի վիճակը։ Այս բարօրությունը լռելյայն վերագրվում էր Երեմիային։ Ու քանի գնում, նա դառնում էր գուրգուրանքի և խորհրդապաշտական սիրո առարկա, եղբայրներն ու քույրերը նրա հետ վարվում էին ոչ այն առօրյա հոգացողությամբ ու փայփայանքով, որին արժանանում է սովորաբար տան ամենակրտսերը, այլ ինչ-որ յուրօրինակ մի երկյուղածությամբ։

Փոքրուց ծնողները նրան ուսման տվին նախ՝ տնային քահանայի մոտ, ապա՝ Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանում՝ աստծո պաշտամունքի ծառայությանը նվիրվելու։ Վարժարանում Երեմիան աչքի էր ընկնում իր հեզահամբույր վարվեցողությամբ, հափշտակված, անդադրում պարապմունքներով, ներամփոփ մտաչխարհով։ Վարժապետներն ու հոգևոր հայրերը, որոնց հայտնի էր իրենց հոգեորդուն աստծո ծառայությանը ընծայաբերելու հանգամանքը, հավատում և հավատացնում էին, որ մի նոր Խրիմյան Հայրիկ է լինելու նա, մի արծիվ, որի թևերով նորից երկնամբարձ սավառնելու է Վասպուրական աշխարհը։

Անցնում էին տարիները, և վանքի դպրանոցում ճգնակյաց, հոգու անբասիր դաշնության ու անդորրության մեջ Երեմիան գիշեր ու զօր ջերմեռանդորեն աղոթում էր՝ ունկնդիր երկնային ձայնին, անէացած, անհաղորդ աշխարհիկ կյանքի թե՛ չռայլաշուք, թե՛ քաոմնելի էջերին։ Մագաղաթյա խնկաթույր ու խորախորհուրդ գրքերից գերառատության, բարեպաշտության, քրիստոնեական խոնարհության, ապաշխարության խոսքեր էր անհոնջ քաղում նա՝ մեղսալիր ու ամբարիշտ մարդկանց փրկելու ընչաքաղցության ու ախտածին մոլությունների։ Եվ ոչ մի բան չէր պղտորում նրա անընկճելի հոգին՝ դրդելով աստվածընդդեմ արարքների։ Եվ երբ ավարտեց վարժարանի դասընթացը, վանքի ալեզարդ միաբանները միակամ ու միասիրտ, անթաքույց ոգևորությամբ ու բարյացակամությամբ պատրաստվում էին նրա մեծ ու սրբազան օծման։

Ըստ Զարգանդ Դարյանի «Արծիվ Վասպուրականի» վեպի
(Adaptation from Zarzand Daryan, 1912-1984)

Արեգակը ծագեց, և նրա հրակարմիր շողերի տակ փայլփլեցին եղյամով պատած ընդարձակ դաշտերը։ Երևում էին դեղնականաչ պարտեզներով շրջապատված լքյալ գյուղերը։ Արևի տակ համատարած սիրվել էր ուկրաինական դաշտանկարը՝ իր բոլոր հմայքներով ու բույրերով։

Պարզ, թափանցիկ օր էր։ Հալվում էին եղյամն ու մերկասառույցը, բլուրները պսպղում էին հազարերանգ, կարծես ջարդված ապակիների միլիոնավոր կտորտանքներ էին չաղ տրված հունձքի դաշտերի վրա ու փայլփլում էին ծիածանի նուրբ գույներով։

Մեսրոպյանն աչքատում էր չնայել ականներից այլանդակված խորդուբորդ ճանապարհների կողմը, որ չտեսնի ծվեն-ծվեն չորերով տովալուկ երեխաների խմբերը՝ ցեխերի միջով քայլելիս, չտեսնի տնային խայտաբղետ իրերով բարձած սայլակներն ու ձիերի անվերջ դիակները։ Սրտաճմլիկ պատկերներ էին դրանք։

Այդպես տեղահան եղան, ծեր ու երեխաներ գաղթի ճամփաներն ընկան՝ լացուկոծով ու հառաչանքով, վերջին անգամ նայելով թափուր մնացած տներին ու ամայացող գյուղերին։

Լսվեց գումարտակի հրամանատարի որոտընդոստ կանչը՝ օդանավե՛ր, օդանավե՛ր... Հոգնաբեկ մարտիկները վայրկենապես ճուլվեցին գետնին։ Զոհրապ Մեսրոպյանն առաջինը նկատեց դեղին, պոռտանման ծուխը և հողի վեր-վեր խոյացող սև չաորվանները։ Հետո լսվեցին երկրորդ, երրորդ, չորրորդ պայթյունները՝ մեկը մյուսից խոլական, մեկը մյուսից ահասարսուռ։ Ու հանկարծ տիրեց մի անսովոր լռություն...

Հրաման եղավ ոտքի ելնել։ Մեսրոպյանն արագորեն վեր կացավ։ Նույն րոպեին, իրար օգնելով, մեկ-մեկ ոտքի կանգնեցին և մյուսները։ Մի զինվոր հետ դարձավ, նայեց Մեսրոպյանին, որն ավտոմատն ուսից կախած՝ վերցրել էր մի բուռ սևահող ու մոտեցրել խռովահույզ դեմքին։ Թուխ հողը բուրում էր ծանոթ, քաղցր, երազային բուրմունքով, ճավարի պես հատիկ-հատիկ ու սրսուռ։

— Ինչո՞վ ես զբաղված, — հարցրեց ավտոմատավորներից մեկը։

Զոհրապը տխրահեծ հայացքով նայեց նրան, նայեց բուռն մեջ, հողին, ռումբերից բացված ճագարին ու չչնչաց։

— Մեղք է հողը...

Ըստ Հրաչյա Քոչարի «Մեծ պատմ զավակները» վեպի
(Adaptation from Hrachia Kochar, 1910-1965)

Կեսգիշեր էր։ Խորունկ, քաղցր քնի մեջ կամսարյանը չէր տեսել, թե ինչպես հորիզոնը ծածկող ամպերը, բարդ-բարդ կուտակվելով, լուսինը ծածկեցին, և ապա դանդաղորեն թանձր մառախուղը սքողեց սար ու ձոր։ Հետո սկսեց բարակ անձրև մաղել, ապա քիչ-քիչ գնալով սաստկացավ ու հորդացավ։ Քամին չառաչելով փոթորկում էր անձրևը և հոսանքն ուղղում դեպի սրահը, ուր փայտե թախտի վրա այդ վայրկյանին քաղցր քնի մեջ էր «առաքյալը»։ Բայց հանկարծ պայթեց մի որոտ, հանդիպակաց բլուրները դողդողացին, և անձրևի չառաչյունը կարծես կրկնապատկվեց։

Կամսարյանը վեր թռավ տեղից սարսափով և տեսավ ոչ միայն օդի մեջ մրրկող հեղեղը, այլև իր անկողնու երեսն ամբողջովին թրջված: Բացի դրանից, հողածածկ կտուրից տեղ-տեղ ծորում էր պղտոր անձրևաջուրը: Այդ անակնկալ պատահարից չփոթված՝ Կամսարյանը դողում էր: Նրան հարկավոր էր մի ծածկարան՝ անընդհատ հորդացող անձրևից պատսպարվելու համար, և նա, ահա, գտել էր այն: Բացեց ախոռին կից փոքրիկ սենյակի դուռը, հապշտապ փռեց անկողինն այնտեղ գտնվող ճռճռան թախտի վրա ու պառկեց քնելու: Սակայն չանցավ քառորդ ժամ, և ախոռից փչող սրտխառնիչ հոտը սկսեց անհանգստացնել նրան: Հոգնած, նյարդայնացած բացեց սենյակի դուռը և նորից պառկեց, բայց մի կողմից՝ թախտի ճռճռոցը, մյուս կողմից՝ անհանգիստ խորհրդածությունները թույլ չէին տալիս նիրհել: Հազիվ աչքը փակել էր, երբ քաղցից արյան ծարավի լվերը վխտալով հարձակվեցին փափկակենցաղ հյուրի վրա և սկսեցին իրենց «սև» գործը: Պետրոսը սկսեց չուռռումուռ գալ, բայց իզուր, ոչինչ չէր օգնում: Արնաբաղձ լվերը վաղուց էին սպասում մի այդպիսի համեղ որսի, այն էլ ի՛նչ որսի... Նրանք, իհարկե, ամենևին էլ չգիտեին, որ Կամսարյանը համալսարանական է և իրավաբան, այդ պատճառով էլ ծծում էին նրա արյունն անգթորեն, առանց դատ ու դատաստանից վախենալու: Այսպես տևեց երկու-երեք ժամ, բայց տանջալից ու ջղագրգիռ պահերին հաջորդեցին հուսաբեր անուրջները... Անձրևն անցավ, քամին դադարեց, և աղոթարանն սկսեց բացվել:

Ըստ Մուրացանի «Առաքյալը» վիպակի
(Adaptation from Muratsan, 1886-1967)

Նույն նողկալի երազը՝ ահավոր ու սարսափազդու, վերջին չաբաթվա ընթացքում երրորդ անգամ այցի եկավ քեռի Թորոսին: Այնտեղ՝ երկրում էր, իրենց հինավուրց ընկուզենու տակ. Մեհմեդ էֆենդին երկար, կմախքացած մատներով սեղմում էր իր կոկորդը: Ծանր, մղձավանջային երազից քեռի Թորոսը հազով արթնացավ: Նա աչք բացեց մութ սենյակում և անմիջապես ձեռքը տարավ կոկորդը: Ինչ-որ բան դեմ էր առել կոկորդին, քոր էր տալիս, ճանկռում: Նա ուզում էր չփել սփրթնած դեմքը, կուրծքը, բայց հազը խեղդում էր:

Սենյակում գոնե մեկը լիներ: Կնոջ մահից հետո՝ հինգ-վեց տարի, մենակ էր քնում և առաջին անգամ մեկնումեկի կարիքն զգաց: Խոր գիշեր էր, և քսմոնելի երազը, մթան հետ չաղախված, չէր ուզում սենյակից դուրս գալ. լույսը վառել էր պետք: Նրան թվում էր՝ եթե լույս լինի, և՛ կոկորդի ճանկռոցը կանցնի, և՛ հազը:

Քեռի Թորոսը մի կերպ պոկվեց անկողնուց, ափլփելով վառեց լույսը և տարօրինակ հայացքով նայեց չուրջբոլորը:

Վերջին չաբաթվա ընթացքում գամված էր անկողնուն: Արդեն չէր խոսում, ձայնը կտրվել էր. չունչը հևիհև էր, ուժահատ, աչքերը փոս էին ընկել՝ ընդգծելով ակնակապիճների խորությունը, անընդհատ խեղդվում էր հազից:

Բայց աչնանամուտի այդ օրը՝ լուսադեմին, քեռի Թորոսը ծնկներում ուժ զգաց և ձեռնափայտին հենվելով՝ դողդոջուն քայլերով դուրս ելավ: Աստղերը չքացել էին, միայն լուսաստղն էր թրթռում հայոց լեռնապարին, բացկուրծք սարերին:

Քեռի Թորոսը չնչահեղձ էր լինում, նյարդերը քանդվում էին, բայց նա հեռվում մնացած իր երկրի հետ էր, որի կարոտից մղկտում էր սիրտը։ Նա ճիգով բարձրացրեց գլուխը և արցունքակալած աչքերով նայեց երկնքին։ Արշալույսը՝ գունեղ, խորհրդավոր, ավելի գեղեցիկ թվաց նրան։

Ըստ Մուշեղ Գալշոյանի «Քեռի Թորոսը» վիպակի
(Adaptation from Mushegh Galshoyan, 1933-1980)

Եկավ հրաժեշտի օրը։

Ես ջանքեր էի գործ դնում, որ անբասիր պահեմ ուսուցչի անունը, բայց կրծքիս տակ փրթթող ամենահաղթ զգացմունքը՝ սերը, փափուքով անընդհատ կրկնում էր նրա անունը՝ Խոնարհ, և մրրկում հոգիս։

Օհան ապերը հետևում էր ինձ, խորհուրդներ տալիս. նանը ուղեկցիս՝ ձիապանին, պատվիրում էր ինձ լավ տանել և զգույշ մնալ, որ պայուսակը չընկնի, դյուրագգաց Աչոտը, մի անկյունում կծկված, չդիմանալով ներքին հուզմունքին, սրբում էր թարթիչներից կախված արտասուքի կաթիլները և կցկտուր հարցեր ուղղում ինձ։

Բայց իմ հոգին, ամբողջ էությունս որոնում էր նրան, տենչում միմիայն նրան։

Երբ անցնում էինք դպրոցի մոտով, աշակերտները իջան բլրակով՝ ինձ բարի ճանապարհ մաղթելու։ Աղջիկներից ոմանք լաց եղան։ Նրանք և՛ ժպտում էին, և՛ սրբում արցունքը, որ ծորում էր աղբյուրի պես։ Լալիս էր և Խոնարհի քույրը։ Մեկը թե՝ «Ուսուցի՛չ, մեզ չմոռանաս»։ Ճուտիկն էր։ Նա միշտ դպրոց էր գալիս հոր մեծ վափախը գլխին, երկար հնամաշ տրեխներով։ Որը էր Ճուտիկը՝ լուիկ-մնջիկ մի երեխա, որին բոլորը սիրում էին։ Նա վաթսաթվեց ծնկներիս, և մեծ վափախի տակից տեսա նրա խելոք աչքերը, լացակումած դեմքը։ Կուացա և ջերմորեն համբուրեցի ճակատը, ինչպես Օհան ապերը՝ իմ ճակատը։

Վերջապես անցնում ենք Խոնարհենց տան մոտով։ Անհուն հուզմունքից խեղդվում եմ, նայում բակի կողմը. ոչ ոք չկար։ Խոնարհին բակում չտեսա։ Տխուր քայլում եմ ձիապանի հետևից։ Դեմուդեմ հուռթի արտերն են՝ կանաչ գոտիով, բարձունքի վրա ծերուկ հովիվը, կռթնած իր անբաժան ձեռնափայտին, հետևում է ոչխարների հոտին։ Մյուս կողմի կանաչ արտերում կանայք քաղհան էին անում։ Նրանց մեջ հանկարծ տեսա... Խոնարհին... Մեր հայացքները իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ չտեսա։ Արահետով բարձրանալիս միշտ հետ էի նայում։ Կուացած կանայք կանաչին ընկած թռչունների էին նման։ Եվ այդ երամից մեկը՝ գորշ չորերով մի աղջիկ, ավելի հաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին, որ արևի չողերը չխանգարեն տեսնելու անտառի մեջ հալվող արահետը և միայնակ անցվորին...

Ըստ Ակսել Բակունցի «Խոնարհի աղջիկը» պատմվածքի
(Adaptation from Axel Bakunts, 1889-1937)

Կառքի փոխարեն բեռնատար ֆուրգոնը եռօրյա հոգնատանջ ճամփորդությունից հետո ապագա վիպասանին հասցրեց հեքիաթային գորշ քաղաքը՝ Բաքու։

Բրդյա արխալուղը հագին, մորթե գդակով գավառացի միամիտ պատանու հայացքի առաջ սփռվում է հույսերի ու հույզերի քաղաք Բաքուն՝ ասֆալտապատ փողոցներով, գործարանների ու հանքերի թանձրահոս ծխով, նավթային բուրգերի սև անտառներով։ Ինչպիսի՛ հակադրություն Շամախու կենսաթրթիռ ու զվարթ, բայց և անդորրավետ բնության ու այս մռայլ, անհրապույր, ժխորային նավթաչխարհի միջև։ Դառնագաժան թախիծ է իջնում անհյուրընկալ քաղաքին անընտել պատանու հոգուն։ «Թվաց ինձ, — գրում է մեծաչնորհ վիպասանը, — թե իջնում եմ մի տեսակ դժոխք, ուր պիտի հավիտենապես տանջվեմ՝ այդ հեղձուցիչ, թանձր ծխի ու մրի մեջ հարուցած խոչընդոտները հաղթահարելու համար»։

Բախտի քմահաճ մրրիկը մի քանի տարի առաջ Բաքու էր նետել նաև Աբելյանի ընտանիքը՝ հանապազօրյա հաց հայթայթելու։ Կինը՝ Մարիամը, Շիրվանզադեի մորաքույրն էր։ Առաջին օրը մինչև կեսգիշեր նրանց կրտսեր ու ավագ որդիները անհուն փափագով հարցուփորձ էին անում Շամախու անցուդարձից, առօրյա կյանքից, իրենց բարեբառով զվարճահարույց պատմություններ անում։

Բաքուն հյուրընկալ քաղաք չէր ընչացքը նոր սևացած պատանու համար. այնտեղ ի դերև ելան նրա հույսերը, հօդս ցնդեցին ցնորամիտ, մտացածին բոլոր առասպելները։ Անօթևան գավառացի պատանու համար դյուրին չէր այդ քաղաքում ապաստան գտնելը։

Հարմար որևէ աշխատանք գտնելու համար գիշեր ու զօր որոնումներ էին պետք, նաև թախծալի ու կիսաքաղց օրեր էին լինում։ Ուրբաթախոս, երկչոտ պատանին երկա՛ր, երկա՛ր դեգերում էր ծովափին, նայում հեռացող դանդաղընթաց չոգենավերին, նախանձում նավաբազրիքներին կռթնած անհոգ նավորդներին, որոնք բոլորն էլ ուրախ ու զվարթ էին, իսկ ինքը՝ նրանց հասակակից, բայց արդեն կյանքի հոգսերից կքած՝ միայն երազահույս, երազատենչ մի պատանի էր։

Ըստ Հրանտ Թամրազյանի «Շիրվանզադե» աշխատության
(Adaptation from Hrant Tamrazyan, 1926-2001)

Աչուն է։ Ճամփեզրին երկինք էին խոյացել բարդիները՝ կանաչ, դեղին, դեղնակարմիր, նարնջագույն՝ ստեղծելով մի խճանկար։ Ճեփ-ճերմակ և սևաթույր ագռավների մի երամ, աչնան արևից արբած, խենթ պտույտներ էր անում կարկաչուն առվակի վրա։ Թիթեղածածկ տներից մեկի ընդարձակ բակում խառնվել են բաց կանաչը, մուգ կարմիրը, չագանակագույնը, վարդագույնը և երանգներ հազարաթույր, որոնց համար անուն պիտի փնտրես և կամ մտածես՝ դրանք տեսե՞լ ես երբևէ։ Իսկ այգինե՞րը։ Եթե մեկը երբևէ ուզում է երանությունից կարգին խենթանալ, ուրեմն աչնանը համարձակություն պիտի ունենա մտնել Արարատյան դաշտի որևէ այգի կամ թեկուզ անցնել նրա կողքով։ Դեռ հեռու հեռվից քեզ պարուրում են հաճելի բույրերը։

Խաղողի ողկույզները փայլփլում, աչքով են անում մերթ ընդ մերթ, ծառերի ճյուղերից ասես հիմա կկաթկթեն մալաչա տանձերը, կես-կես լինելով արևի բերանը կընկնեն դեղձերը քաղցրահամ, և արևից չիկնած խնձորները կհեղեղեն ճամփաղ։

Մայքլը, ձիգ բռնած աղջկա ձեռքը, սլացավ հարթ դաշտով մեկ։ Հասմիկը, չկարողանալով հետևել երիտասարդի ընթացքին, պոկվեց նրա պիրկ ձեռքից և փոխելով ուղղությունը՝ առաջ նետվեց։ Քամին գդում, խճճում էր նրա ոսկեղեղճան մազերը, թափում քրտնած դեմքին, բայց նա չարունակում էր ինքնամոռաց, խելակորույս վազքը։ Մայքլ-Վանը անհացած՝ երանությամբ հետևում էր նրան։ Հասավ, բռնեց։ Ու նրանք թավալվեցին աշնան երփներանգ ներկերի մեջ։

Երևանյան հեքիաթային աշուն էր, մթնշաղի նուրբ չողերը հեղեղում էին նրանց, ոսկեզօծված խոտերն ասես իրենք էին ասում՝ տրորեցե՛ք մեզ... Եվ Մայքլը, այո՛, պիտի երդվեր, որ այդպիսի երանություն երբևէ և ուրևէ չի տեսել։ Սա ծունկի իջավ Արարատի դեմուդեմ, կռացավ, գլուխը խոնարհեց գետնին, ինչ-որ չչնջաց, ինչ-որ երդվեց ու համբուրեց հողը։ Հասմիկը տեսավ, որ նրա աչքերը փակ էին, համբուրեց նրան ու հենց այդ ժամանակ նկատեց նրա այտերին սառած արցունքի երկու կաթիլներն ու չուրթերի վրա մնացած սրբազան հողը։ Վանը սրտի անկապտելի մղումով ամփոփեց աղջկան իր գրկի մեջ, ամուր սեղմեց կրծքին և դեռ չարթնացած աղոթքից՝ ասաց.

— Երանի նրան, ով ոտքի տակ և հոգու մեջ զգում է մայր հողի անդորրիչ բույրը։

Ըստ Բոգդան Վերդյանի «Ծաղիկներս մնացին հետևում» վեպի
(Adaptation from Bogdan Verdian, 1919-1992)

Երբ գեներալ Հովհաննես Բաղրամյանի՝ անցյալում համեստ անունը տարածվեց Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Սիկյուռքի հայերից նամակների անընդմեջ հեղեղ հոսեց դեպի Նա։

Մի լուսնկա երեկո, երբ պատշգամբում ավարտվել էր ընտանեկան աշխույժ զրույցը, գեներալը, կռթնած իր գրասեղանին, խորասուզվել էր ինչ-որ նամակի ընթերցանության մեջ։

Այսպես էր սկսվում նամակը.

«Ձեզ գրում է բնօրրանից արմատահան եղած տարաշխարհիկ մի հայ կին, որը զօր ու գիչեր երազել է գտնել իր եղբորը՝ թուրքական սրից փրկված միակ հարազատին աշխարհիս վրա։ Երկար ժամանակ չէի կարող գրել. վախենում էի՝ հօդս ցնդեին այն երազները, որոնցով լցվել էր հոգիս այնպես անսպասելիորեն։

Մնվել եմ Վանա ծովի ափամերձ մի փոքրիկ գյուղում։ Բոլորը, բոլորը հիշում եմ, ինչպես այսօրվա այգաբացը, և՛ մեր բարձր լեռները, և՛ խոր ձորերը, մեր բերրի պարտեզները, և՛ մեր մշտածուփ լիճը, և՛ Աղթամարա վանքը՝ կղզու վրա։ Կա՞ արդյոք մի ուրիչ չքնաղ երկիր, ինչպիսին մերն էր, որից զրկեց մեզ ժանտ թշնամին։ Հիշո՞ւմ եք Դուք այդ ամենը։

Թուրքական յաթաղանից ընկավ իմ հայրը՝ արնաշաղախ ղեմքով, մայրս՝ անմեղ

Հայացքը անարդար երկնքին ուղղած, եղբայրներս, քույրերս... Ազատվեցինք միմիայն ես ու եղբայրս։ Ես՝ ութ տարեկան մի աղջիկ, եղբայրս՝ ինը տարով ինձնից մեծ մի պատանյակ, փախանք անտառ, հետո մյուս փախստականների հետ՝ Ալաչկերտ, կարս։ Այնտեղ ես եղբորս կորցրի։ Նա, հրացան առած, գնաց թշնամուց վրեժ լուծելու, իսկ ես, մրրկի բերանն ընկած տերևի նման, տարվեցի անդրօվկիանյան այս երկիրը՝ Ամերիկա։ Հետո իմացա, որ եղբորս տեսել են Սարդարապատի կռիվներում և, վերջապես, հիմա՝ համաշխարհային այս ահեղ թոհուբոհում, գեներալ դարձած։

Սիրելի՛ Հովհաննես, հարազա՛տս, մի՞թե Դուք իմ եղբայրը չեք։ ո՛չ, չի կարող պատահել, որ իմ քրոջական սիրտը ինձ խաբի։

Թույլ տվեք ստորագրել այսպես՝ Քո քույր Անահիտ»։

Գեներալը փոքր-ինչ խորհելուց հետո գրեց։

«Թանկագի՛ն քույրս, նամակդ շատ հուզեց ինձ։ Ես ծնվել եմ ոչ թե Թուրքահայաստանում, այլ Սյունյաց աշխարհում և մինչև այսօր Անահիտ անունով քույր չունեի, հիմա ունեմ։ Մեզ մի մայր չի ծնել, բայց ծնել է մի՛ ժողովուրդ։

Քո եղբայր՝ Հովհաննես»։

Ըստ Հրաչյա Քոչարի «Գևևրալի քույրը» պատմվածքի
(Adaptation from Hrachia Kochar, 1910-1965)

Թելիկ-մելիկ, չարաճճի մի աղջնակ էր Մարանը։ Երբ պատահում էր, էքսկուրսիա էին գնում (ըստ ընկեր Սուքիասյանի՝ «բնագիտական արշավի») դեպի Օձուտի կամ Կարմիր սարի բարձունքները, ինչպես միշտ, նա չրջասփյուռ խոտերի մեջ անպայման առաջին հերթին փնտրում էր ուրցի մանրատերև, նրբաբույր ծաղիկներ։ Կարծես հեռվից զգում էր, թե որտե՛ղ են թաքնված դրանք, ո՛ր քարարանքներում են կծկված։ Եվ երբ գտնում էր, գոհաժպիտ չոքում էր գետնին, հակվում ուրցի քնքուշ ծաղիկներին, զգուշորեն պոկում, ըմբոշխնում նրանց արբեցնող բույրը և ապա ամրացնում մազերին ու դեղձան շրջազգեստին։ Այդ վայրկյաններին նրա աչքերը ցոլցլում էին, քամին մեղմորեն ծածանում էր թավշյա մազերը՝ ուրցի ծաղիկներով զարդարուն, փռփռացնում դարձածալքերով չորը՝ ընդգծելով վտիտ մարմինը։ Երջանկացած՝ պացիկ հասակով մեկ կանգնում էր, մի ակնթարթ անէացած նայում լուրթ երկնքին և, թև առած, եթերային մի սլացքով թռչում բլուրն ի վայր, ինչպես պինչը քամի մտած այծյամ։ Զարմանալի չէր, որ նրանից միշտ ուրցի բույր էր գալիս, և հայտնի չէր, թե ո՛վ էր նրան մի անգամ ասել «Ուրցի Մարան», ու այդպես էլ անունը կպել-մնացել էր։

Օգոստոսյան լուսնկա գիշեր էր։ Աղբյուրի գողտրիկ հուշարձանի մոտ՝ ակացիաների կաթնամշուշ ստվերում, միայնակ կանգնած էր Մարանը։ Շուրջբոլորը մի տրտմաշուք անդորրություն էր տիրում։ Լուսաթաթախ սպասումի մեջ ինչ-որ մի խռովք էր համակել Մարանին։ Ներամփոփ, հազիվ նկատելի նյարդային չարժումով նա անընդհատ քանդում-հյուսում էր ծամերը։ Մերթ անքթիթ զննում էր ուռենու տակ լուսաստվերից գոյացած ժանյակը, մերթ ունկնդրում ծղրիդների միալար օրհներգը, ակնավճիտ աղբյուրի խոխոջյունը և ինչ-որ անծանոթ ձայներ։ Մեկընդմիշ

Հայացքն ուղղում էր լուսնկայի արծաթե չողերի տակ գիշերային հորիզոնում գծագրված Մեծ ու Փոքր Մասիսների բիբլիական կատարներին: Տերևների աննչան շրշյունից անգամ Մարանի մարմնով սարսուռ էր անցնում: Ստեպ-ստեպ անընդդիմադրելի ցանկություն էր ունենում փախչելու դեպի տուն, դեպի մայրական տաքուկ գիրկը, բայց վայրկյան անց ինչ-որ անծանոթ ուժ, սրտաթրթիռ մի բան հետ էր պահում նրան, մի անըմբռնելի ու անաղարտ զգացմունք քնքշորեն թովում, կախարդում էր նրան, որից դեռափթիթ սիրտը թպրտում էր:

Դա նրա սիրո առաջին ժամադրությունն էր:

Ըստ Խաչիկ Հրաչյանի «Ուրցի մարանը» վեպի
(Adaptation from Khatchik Hrachian, 1912-1982)

Առավոտ էր:

Լուսնկա գիշերին հաջորդել էր Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը: Նորածագ արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի երկնակարկառ գագաթը ոսկեզօրվել և փայլփլում էր վարդագույն չողքերով, որոնք աչք էին ծակում: Արագածի երկնահուպ գագաթը չէր երևում. նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մեգով, որպես մի խոնարհ ու ամոթխած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանց շղարշով: Կանաչածածկ, հուռթի մարգագետինները, ցողված վաղորդյան մարգարիտներով, փթթել էին հազարաբույր և հազարաթույր ծաղիկներով և վառվում էին ծիածանի երփներանգ գույներով: Փչում էր մեղմ սյուքը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը՝ ծփում ու ծածանվում, և դաշտի անդորր մակերևույթը օրորվում էր հիասքանչ ալեկոծությամբ:

Գեղեցիկ էր այդ առավոտը:

Թռչունների ճախրը և բարեհնչյուն ճռվողյունները թնդացնում էին օդը, բյուրավոր թիթեռները երփներանգ ծաղիկների նման ցանված էին օդի մեջ և չտապով ու անհագուրդ ծծում էին բազմաբույր ծաղիկների նեկտարը: Սպիտակ արագիլը, կարմիր ոտքերը հորիզոնական դիրքով ուղիղ մեկնած, լայն թևերը անընդհատ թափահարում էր՝ չտապելով դեպի Արաքսի մորուտները: Ջեռնատուն եղջերուն, վայրի վիթն ու այծյամը դուրս էին եկել խոսրովի անտառներից և ազատ, համարձակ վազվզում էին չրջակա մարգերի վրա:

Ջէր երևում միմիայն մարդը:

Ամեն առավոտ թռչունը կարդում էր իր նախարշալույսյան օրհներգը, և նրա հետ լսելի էին ժրաջան մշակի երգի մեղմօրոր հնչյունները: Արևի տակ փայլփլում էր մանգաղը, եռում էր գործը, և ոսկեգեն հունձքը յուր լիառատ բեղմնավորությամբ պարգևատրում էր վաստակաբեկ չինականի աչխատանքը: Իսկ այս առավոտ չկար հնձվորը, և հասունացած արտը, անքաղ ու անխնամ մնալով, չորացել, թարշամել էր, ու անմեկին, ընդհանուր մի սարսափ կարծես թևածում էր չրջակայքում:

Ամեն առավոտ սուրբ տաճարի կոչնակի առաջին հնչյունների հետ զարթնում էր հովիվը: Ոչխարների անուշ մայուները, արջառների ուրախ բառաչյունը կենդանաց-

նում էին կանաչավետ հովիտները խիստ ախորժալուր աղմուկով։ Իսկ այս առավոտ չէին երևում ո՛չ հովիվը և ո՛չ նրա հոտը։ Ցիրուցան գառնուկները թափառում էին սար ու ձոր և, որպես հայրակորույս որբուկներ, որոնում հովվին։

Ըստ Րաֆֆու «Սամվել» վեպի
(Adaptation from Raffi, 1835-1888)

Հետևյալ օրը՝ առավոտյան, երբ Պապը պատրաստվում էր մեկնել Տերենտի դղյակը, եղանակը հանկարծ փոխվեց. պարզ երկինքը ծածկվեց մթին, սևաթույր ամպերով, ու քամի բարձրացավ։ Պապին հյուրընկալող Հավնունի իշխանը խորհուրդ տվեց ճանապարհ չընկնել և ուղևորությունը հետաձգել վաղվան, բայց Պապը չհամաձայնվեց։ Իշխանն այլևս չընդդիմացավ, հյուրընկալության կարգը չխախտելու համար։

Երբ թագավորը հրաժեշտ տվեց իշխանին ու նրա գերդաստանին և նժույգը քշեց առաջ, բոլորը միաբերան գոչեցին.

— Բարի ճանապա՛րհ, արքա՛։

Թիկնապահ գունդը, նիզակներով ու աղեղներով զինված, հետևեց թագավորին։

Պապը ձին վարում էր Բաթի ու Երեմիայի մեջտեղը՝ աչխույժ զրուցելով նրանց հետ։ Երեմիայի մի կողքից կախված էր սուրը, մյուս կողքից՝ կաշվե պայուսակը, որի մեջ պահում էր իր անավարտ մատյանը։

Երբ թագավորական չքախումբը դուրս եկավ անտառից, հեռվում՝ բարձունքի վրա, երևաց Տերենտի դղյակը՝ շրջապատված կանաչազարդ ծառերով։

Հռոմեացի զորավարը մի քանի զորականներով ընդառաջ եկավ հայոց թագավորին։

— Բարի գալո՛ւստ, արքա՛, — ողջունեց Տերենտը՝ ձեռքը բարձրացնելով։

Մտնելով ծառերով չրջապատված բակը՝ Պապը և նրա ուղեկիցներն իջան ձիերից և տանտիրոջ առաջնորդությամբ քարե սանդուղքներով բարձրացան դղյակը։

Տերենտը հյուրերին առաջնորդեց մի ընդարձակ սրահ, որ կահավորված էր բյուզանդական փափուկ բազմոցներով ու աթոռներով։ Պատերին կախված էին զենքի տարբեր տեսակներ՝ թրեր, դաշույններ, որսի կենդանիների՝ եղջերուի, այծյամի գլուխներ՝ գեղեցիկ եղջյուրներով, իսկ այդ բոլորի կենտրոնում՝ վարագի մի գլուխ՝ երկար ժանիքներով։

Հյուրերին առաջնորդեցին ճաշասրահը, որի կենտրոնում դրված էր մի երկար սեղան՝ լիքը ամեն տեսակ խորտիկներով ու ըմպելիքներով։ Հազիվ էր թագավորը ներս մտել, երբ հնչեց մեղմ նվագածուբյուն, որ գալիս էր սրահի խորքից։ Նվագածուբյան ձայների տակ Տերենտը մեծ հոգածուբյամբ նստեցրեց Պապին նրա համար պատրաստված հատուկ բազմոցի վրա, որ դրված էր սեղանի վերևում, ապա ինքը տեղ բռնեց սեղանի այ կողմում՝ արքային մոտիկ։

Ներդաշնակ երգ ու նվագի տակ ճաշկերույթն սկսվեց։

Ըստ Ստեփան Զորյանի «Պապ թագավոր» վեպի
(Adaptation from Stepan Zoryan, 1889-1967)

— Իսկ անտառը չի՞ մեռնում։

— Ո՛չ, չի մեռնում անտառը։ Այն ժողովրդի նման է. մահանում է մեկը, ծնվում է մյուսը, երրորդը, չորրորդը. ընկած դարավոր բնի մոտ նոր չիվ է աճում ու գոյատևում։

Վախը մեծ զգացում է. այն երբեմն անդամալույծ է անում մարդուն, բայց հաճախ մղում է հնարագիտության և խիզախության։

Այդպես պատահեց և անտառապատ բարձունքով փախչող մարդկանց հետ։ Տեսնելով իրենց հետապնդող ձիավորներին՝ զինված թիկնապահներով, նրանք ընդարմացան վախից, սակայն զգալով իրենց կյանքին սպառնացող վտանգը՝ խկույն ևեթ արագացրին քայլերը և գաղտնի կածանով մոտան անտառի խորքը։

Օրը մթնում էր, անտառը՝ մռայլվում. բարձրացած քամին օրորում էր ծառերը, և նրանց ճյուղերը զարկվում էին իրար ու խշշում՝ մե՛րթ մեղմ սարսուռով, մե՛րթ բարձր, տագնապահար՝ անտառը լցնելով բազմաձայն ժխորով։

Մութը գնալով թանձրանում էր. նրա հետ իջնում էր և լուսթյունը, որ երբեմն-երբեմն խախտվում էր ինչ-որ տարօրինակ ձայներից։ Փախստականների խումբը անխոս ու լուելյայն անընդհատ գնում էր առաջ։ Եվ որքան առաջ էր չարժվում, անտառն ավելի էր խտանում, և քայլելը դառնում էր դժվարին։ Շատերն արդեն հոգնել էին, քայլում էին՝ մեծ ճիգ գործադրելով։ Երբ մեկը կամ մյուսը այլթաքում էր, ընկնում, իկույն վեր էր կենում և երկյուղած չարունակում անհայտ, անորոշ ուղին։ Նրանց թվում էր՝ իրենց դեռ հետապնդում են, ուստի անկարգ չարունակում էին առաջ գնալ միևնույն ուղղությամբ՝ իշխանների ձեռքը չընկնելու համար։

— Մարե՛, մինչև ո՞ւր պիտի քայլենք, — հոգնած ոտքերը հազիվ փոխելով՝ հարցրեց ինը տարեկան մի աղջիկ։

— Է՛հ, գնանք, աղջի՛կս, էլ հետ մի՛ նայիր, — սրդոդած ասաց մայրը։

Այլևս անկարող էին առաջ չարժվել. խումբը կանգ առավ մի բացատում։ Տղամարդիկ տեղավորվեցին ուղղակի գետնի վրա, չնայած խոնավ էր ու թաց, կանայք՝ հագուստների կապոցներին, ոմանք էլ նստեցին տապալված ու փտած ծառաբների վրա։

Անտառի գիշերային ձայները երկյուղալի սարսուռով էին լցնում մարդկանց սրտերը։ Ծառերի սաղարթների արանքից մեկ-մեկ երևում էին մանր ու մեծ աստղեր՝ հանդարտ թարթող աչքերի նման։

Երկնքի կապույտ ֆոնին գծագրվեց Հարդագողի ճանապարհը։

Ըստ Ստեփան Զորյանի «Հայոց բերդը» վեպի
(Adaptation from Stepan Zoryan, 1889-1967)

Տարագրության և ցեղասպանության արհավիրքներից հիշողության մեջ անջնջելի մնացած սարսուռեցուցիչ, ահազարհուր եղեռնապատկերներից մեկն է հայ դեռափթիթ ու սովալլուկ մանուկների վաճառքը Սեպիլի վրաններում։

Սեպիլը դժբեմ ու տանջալլուկ հայերին՝ դեպի դժոխք տանող առաջին կայարանն էր։ 1915 թվականի դեկտեմբերի վերջերին, մի լուսնկա գիշեր, հասա այնտեղ

և տեսա, որ դաշտը ծածկված էր բյուրավոր վրաններով, որոնք լեցուն էին Խարբերդից, Մալաթիայից, Տիգրանակերտից, Պարտիզակից և այլ կողմերից գերեվարած թշվառ տարագիրներով, որոնք, իրենց ակուբձները լքած, դեգերում էին անհյուրընկալ եզերքում: Տիֆը, ժանտախտը, դողէրոցքը օրական 500-600 կյանք էին հնձում: Աղբահավաք սայլերը օրնիբուն վրանից վրան էին անցնում՝ դիակներ հավաքելու, և ամեն սայլի մեջ տասից տասներկու դիակներ դիզում:

Պատահում էր, որ հոգեվարքի մեջ գտնվողներին էլ մեռածների հետ սայլերի մեջ էին նետում:

Բայց ամենից սրտաճմլիկը մանուկների վաճառքն էր: Գոռոզամիտ ու ամբարտավան հարուստ կանայք չրջում էին վրանները՝ հարցնելով.

— Մախու երեխա չկա՞...

Այն մայրերը, որոնք դեռևս կարող էին մի պատառ հաց հայթայթել, տոկումով ու արհամարհանքով քշում էին գնորդներին, իսկ նրանք, որոնք անել վիճակում էին, անոթի, լացուկոծով, անեծքով և ալեկոծ սրտով հարուստ կանանց էին հանձնում իրենց զավակներին՝ մի քանի արծաթ դրամի դիմաց: Գնորդներն իրենց հետ բերում էին ախորժագրգիռ որևէ բան. փոքրիկ աղջկա ձեռքը, օրինակ, մի նարինջ էին տալիս (այդ կանայք միշտ աղջիկներ էին գնում), ու խեղճ, անոթի փոքրիկը հարճակվում էր նարնջի վրա: Հետո ցույց էին տալիս եգիպտացորենն ու ասում.

— Այս էլ կառքի մեջ կուտես:

Ու սովահար փոքրիկը, ինչպես անմեղ գառը, որ մի բուռ խոտի հետևից է գնում, լալով հետևում էր կանանց, առավել՝ եգիպտացորենին, և երբեմն-երբեմն նայում հետ՝ մայրիկին:

Քանի՛-քանի անգամ խելահեղ մայրերը պոռթկուն զղջումով վազել և կառքի միջից հետ են խլել իրենց զավակներին՝ դրամը ամբարիշտ գնորդների երեսին չպրտելով: Խե՛ղճ մայրեր...

Ըստ Երվանդ Օտյանի «Սեպիլի վրաններու տակ» հուշագրության
(Adaptation from Yervand Otian, 1969-1926)

Սիրելի՛ Հռիփսիմե, իմ անգի՛ն քույրիկ. դու զարմանում ես, թե ինչպիսի եղանակով էի գրել նամակս:

Ես, ըստ երևույթին, արտոնյալու հիմք չպետք է ունենամ, այնպես չէ՞, սիրելի՛ քույրիկ: Բայց արի տես, որ այդպես չէ: Վերջին ժամանակներս ինձ թշվառ եմ զգում առանց որևէ ակնհայտ պատճառի:

Նամակ ես պահանջում, ի՞նչ գրեմ, ի՞նչ ունեմ գրելու, երբ չուրջս ու ներսս կատարյալ դատարկություն է տիրում: Ոչինչ չկա, ոչ մի հիմնավոր բան, որից կարողանայի ամուր կառչել չանհետանալու համար, որի վրա կարողանայի կենտրոնացնել թափառող մտքիս ընթացքը՝ չմոլորվելու համար: Երևակայիր՝ մի անհուն, խորխորատ տարածություն, որի մեջ ընկել է մարդ. նա տարածում է ձեռքերն այս ու այն կողմ, որպեսզի մի բան գտնի, որից կարողանա բռնել՝ ավելի խորը չընկնելու համար, բայց

միշտ հանդիպում է դատարկ տարածության՝ ոտքերի տակ հատակ չգտնելով։ Ճշմարիտ է, կա իմ մեջ մի զգացմունք, որի համար պարտական եմ եղբորս, և թեպետ այդ զգացմունքը բարերար ազդեցություն է ունեցել ինձ վրա, բայց, անգի՛ն քույրիկ, հասկանո՞ւմ ես, թե որքան երիտասարդ եմ ես դեռ, և սիրտս ու հոգիս բնականաբար դեպի ինչը պիտի ձգտեն։

Անցյալ կիրակի մեր տուն եկավ Թոմաս Գասպարիչը՝ հորս վաղեմի բարեկամը (դու ճանաչում ես նրան)։ Նա նույնն է մնացել, հագուստն էլ նույնն է՝ նույն խունացած գլխարկը՝ կարմիր երիզով, նույն զգեստը՝ հնությունից սևացած երկաթե կոճակներով, և նույն ձեռնափայտը, որից նստած ժամանակ անգամ չի բաժանվում։ Ես նստած էի սենյակում՝ բաց լուսամուտի առջև, և Տուրգենև էի կարդում։ Հայրս նստած էր լուսամուտից հեռու՝ մեջքը դեպի ինձ արած, և մտախոհ նայում էր քաղաքին։ Նա այն աստիճան խորասուզված էր իր մտածմունքների մեջ, որ չնկատեց, թե ինչպես Թոմաս Գասպարիչը մոտեցավ իրեն դանդաղ, երերուն քայլքով։

— Շատ խորն ես մտածում, աղա՛ Գևորգ, — ասաց Թոմաս Գասպարիչը՝ հայացքը հառելով նրա վրա։

Հայրս հանկարծ սթափվեց և նայեց նրան.

— Ա՜, Թոմաս Գասպարիչ, այդ դո՞ւ ես, բարև (ու մեկնեց նրան իր ձեռքը)։ Ինչպե՞ս ես, քեֆդ լա՞վ է։ Համեցի՛ր, նստի՛ր։

Ըստ Նար-Դոսի «Անահա Սարոյան» վիպակի
(Adaptation from Nar-Dos, 1867-1933)

Լենինականի հին թաղերից մեկում՝ Ջորի բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անունը, իր փոքրիկ տան մեջ մեռնում է աղբյուրների աչխարհահռչակ վարպետը՝ ուստա Մկրտիչը։

Երբ այցելության եկան սրտամոտ ընկերները՝ Օնեսը, Ավետիքը, Միսակը, Հաբեթը, ուստան, արհամարհելով մարմնում օրըստօրե աճող, դողէրոցքի սարսուռն ու մրմուռը հիշեցնող սրսփուքն ու տենդը, ճիգ ու ջանքով կռթնելով դողդոջուն ձեռքերին, մի կերպ ընկողմանեց տափակ բարձին և անդորր, մարող հայացքը ուղղեց նրանց կողմը։

— Մկրտի՞չ, ի՞նչ է եղել, ընչի՞ ես պառկել, — ուստային դիմեց Միսակը։

— Վերջին պառկելս է, ներո՛ղ եղեք, — ասաց ուստան։ — Հա՛րս ջան, աթոռնե՛ր տուր։

Ընկերները, ինչպես ընդունված է նման դեպքերում, սրտապնդեցին նրան, համոզվածություն հայտնեցին, որ ընդամենը յոթ-ութ օրից հետո նա ոտքի կկանգնի, և միասին կգնան Վարդապետի բաղը, մի լավ քեֆ կանեն։

Ընկերների գնալուց հետո նա չարունակեց պառկած մնալ անգամ, անշարժ, ընդարմացած։ Մարմնում զգում էր ընդհանուր թուլություն, ինչ-որ թմրիր, և թեև չէր կորցրել գիտակցությունը, անտարբեր էր դարձել դեպի աչխարհը։ Ինքնըստինքյան պարզ է, որ այդ վիճակում նրան այլևս ոչ մի միտք չէր հուզում, ոչ մի փափագ չուներ։ նրա ուղեղում ձևավորվում էին և անմիջապես էլ հօդս էին ցնդում անհեթեթ,

հեղհեղուկ պատկերներ։ Այժմ, գիշեր ու զօր, սրա ուղեղի ծակվող դարպասից ներս է սպրդում յուրաքանչյուր մանրուք, ինչ որ գտնվում էր նրա տեսողության դաշտում, նրա աչքերի առջև։ Իսկ այնտեղ գտնվողը միմիայն հանդիպակաց մայթի ականակիտ աղբյուրն էր՝ նրա ուղեղի և ձեռքերի առաջին գործը։ Հինգ տարի անընդմեջ ուրիշ վարպետների մոտ աշակերտելուց հետո քսանվեց տարեկան Մկրտիչը ավարտեց այն, իբրև իր առաջին ինքնուրույն աշխատանքը։ Գյումրու հռչակավոր վարպետները մանրազնին ստուգեցին աղբյուրը, ցնցեցին գլխաքարը՝ ամո՞ւր է արդյոք, խմեցին ջրից՝ սա՞ռն է արդյոք, ձեռքով փակեցին խողովակի բերանը՝ ջուրը հետ չի՞ խփի, չի՞ ընդհատվի արդյոք։ Աղբյուրը դիմացավ ամենապահանջկոտ քննության։ Մկրտչին ձեռնադրեցին ուստա։

Ըստ Մկրտիչ Արմենի «Հեղնար աղբյուր» վիպակի
(Adaptation from Mkrtich Armen, 1906-1972)

Բժիշկների կոնսիլիումից հետո Մարկոս Ալիմյանի դրությունը օրըստօրե վատթարացավ։ Սակայն Սմբատի ժամանման լուրը նրան վայրկենապես հանեց լեթարգիական մղձավանջից, լուսավորվեց նրա դեմքը, մի անխաբ ուրախություն անմիջապես պարզեց ճակատը, որը նրա վաթսունամյա երկարաձիգ կյանքի ընթացքում երբևէ չէր արտահայտել զվարթություն։ Միմիայն մի պահ հիվանդը խորացնին հայացքը ուղղեց որդու դեմքին, ապա արձակելով մի խուլ մրմնջյուն՝ դողդոջուն ձեռքերով գրկեց սմբաստանյալ որդու գանգրահեր գլուխը և սեղմեց ալեկոծ կրծքին կարելվույն չափ պինդ։

Տիկին Ալիմյանն սկսեց հեկեկալ։ Նրան հետևեց աղջիկը՝ Մարթան, հետո՝ որդիները։ Այժմ ծերունին կարող էր իր հոգին ավանդել, օ՛, ոչ հանգիստ, ինչպես կփափագեր, այլ մի անհուն վիշտ բազմահեծ սրտի մեջ։ Ութ տարի էր՝ նա չէր տեսել ավագ որդուն, որին անհագորեն սիրել էր անբասիր սիրով և որին պիտի հանձներ իր բոլոր գործերը։ Եվ ոչ միայն չէր տեսել, այլև չէր ուզում տեսնել, լսել նրա անունը, քանի որ նա իր անողջախոհ վարքագծով վարկաբեկել էր Ալիմյանների տան բարի անունը։ Ա՛հ, որքա՜ն հուսախաբ արեց իրեն այդ սիրված որդին, որպիսի՛ հոգեկան տվայտանք պատճառեց, որը թշնամիներից և նախանձամիտներից թաքցնելու համար հարկավոր էին սաստիկ ճիգեր, կամքի գերբնական զորություն։

Ապրելու անհագուրդ տենչը այլևս չէր հետաքրքրում մահամերձին, այլ ծանր ու անել վիճակը, որը նրան դրդում էր կյանքի գեթ վերջին վայրկյաններին անջատվել հոգին կրծող երկրնտրանքից և որոշել իր դիրքը մեծ որդու նկատմամբ։ Ի վերջո մի խոր, չատ խոր հայացք, որ գալիս էր գերեզմանի խորքից, ամեն ինչ պարզեց մեղսագործ որդու համար։

— Մենա՞կ ես եկել, — կարողացավ միայն բարբառել մեռնողը։

— Մենակ, — պատասխանեց որդին՝ կռահելով հարցի էությունը։

Մռայլ ժպիտը ակնթարթորեն տեղի տվեց հուսո չողին, հոգու անդորրին։ Բայց ահա ծերունու պղտոր հայացքը ընկավ որդու ոսկե մատանու վրա, որը նրա ամուսնության նշանն էր։

— Անցածը վերադարձնել չի լինի, հա՛յր, օրհնի՛ր, — արտասանեց որդին խեղդված ձայնով, որի մեջ զգացվում էր դառը կսկիծ, բայց ոչ զղջում։

— Անիծվե՛ս, եթե վերջին կամքս չես կատարի... — այս սարսռեցուցիչ բառերը մրմնջաց հայրը սառչող շրթունքների միջից։

Ըստ Շիրվանզադեի «Քաոս» վեպի
(Adaptation from Shirvanzade, 1858-1935)

Բանո՛ն...

Մի փոքր գյուղ է սա՝ թառած կանաչազարդ ու գեղատեսիլ բարձրավանդակի վրա։

Ոլորապտույտ, նեղլիկ փողոցների այ ու ձախ կողմերում կողք կողքի չարված են անձև ու խղճուկ խրճիթներ՝ մեջքմեջքի կպցրած, փոքրիկ բլրակների նմանվող ուռուցիկ կտուրներով, որոնց վերևում երդիկներն են։

Գյուղի արևմտյան կողմում Մարալի գեղազարդ սարերն են՝ կանաչապատ, ծաղկավետ փեշերով։ Այդ սարերի ականակիտ աղբյուրներից է սկիզբ առնում Բանոնի լեռնային գետակը, որը, ճեղքելով բլրակների կուրծքը, սրընթաց իջնում է ցած և իր չլուռ չառաչյունով խախտում չրջակայքի անդորրը։ Նա գիշեր ու զօր ծեծում է իր ափերը, մերթ վճիտ, մերթ պղտոր ալիքներով փրփուրթքում նրանց երեսին։ Լա՞ց է լինում գետը, թե՞ գանգատվում է, ոչ ոք չգիտե։

Գարնանը՝ հեղեղների ժամանակ, գետը վարարում է և իր ընթացքի մեջ առնելով մեծ ու փոքր քարեր՝ առաջ է մղում իր աղմկահուչ ալիքները, անզոր բարկությամբ զարկում ափամերձ ժայռերին։

Այս կրածեծ, ուղղաձիգ քարաժայռերից մեկի կատարին՝ սեպաձև բարձունքի վրա, գտնվում է մի հինավուրց մենաստան՝ բնական պարիսպներով շրջապատված։

Դա Բանոնի հայտնի սրբավայրն է՝ Աստվածածինը, որ կառուցել են քրիստոնեական առաջին դարերի հավատացյալները՝ երկնակարկառ այդ բարձունքից առ աստված ուղղելու իրենց սրտաբուխ աղոթքները։

Ոչ ոք չգիտե, թե ե՛րբ է կառուցվել այդ տաճարը, և ո՛ր անարգ ձեռքն է ավերակ դարձրել աստծո տունը. ո՛չ մի գիր, ո՛չ մի հիշատակություն չկա այդ մասին։ Բայց Բանոնի բնակչին հարկավոր էլ չէ դա, նա համոզված է, որ այս ավերակ կամարների տակ, այս կիսակործան խորաններում ցանուցիր ընկած մամռապատ քարերի մեջ էլ աստված կլսի իր թախծամրմունջ աղոթքները։

Լեռնային մի նեղ արահետ այսօր էլ ջերմեռանդ ուխտավորին առաջնորդում է դեպի ավերակ մենաստանը, որ հավատի մոմեր վառի անցյալ փառքի տխուր մնացորդների վրա, համբուրի սրբավայրի մրոտած ու դարերի չնչից մաշված քարերը։

Ըստ Ավետիս Ահարոնյանի «Բաևոն» պատմվածքի
(Adaptation from Avetis Aharonian, 1866-1948)

Մեր գյուղը գտնվում է բարձրադիր լեռան հարավային լանջերին։ Ներքևում մուգ կանաչ անտառներն են տարածվում, իսկ վերևում՝ ալպիական արոտները՝ կանա՛չ, ծաղկո՛տ, բուրավե՛տ։ Ո՞վ է փռել այս չքեղ, երփներանգ գորգերը՝ անձեռագործ, կախարդող գույներով...

Անտառագուրկ բարձունքները զարդարված են կանաչով ու դաշտային պես-պես ծաղիկներով, իսկ լեռան գագաթների միջև սարահարթեր են փռված, զմրուխտ մարգագետիններ, ուր ամռանը կանաչը ծփծփում է ծովի նման։

Աղստևի հովտում միալար վշշում է լեռնային առատաբուխ աղբյուրներից սկիզբ առնող գետը։ Նրա ափամերձ մեծ-մեծ քարերի ճեղքերում ջրափոսեր կան, որոնց մեջ վխտում են կարմրախայտ ձկների վտառները։ Հորդառատ անձրևներից հետո գետը պղտորվում է, գոռգոռում գազազած վիշապի նման, իսկ ամռանը բարակում, դառնում է հեզահամբույր մի գետակ։

Այդ գետի գողտրիկ ափերին է անցել իմ մանկությունը՝ նրա պես գիժ ու անսանձ, նրա պես հեզ ու քաղցրակարկաչ։

Ու հիմա, երբ կրկին այցի եմ եկել մանկությանս նվիրական վայրերին, աչքիս առաջ իմ մանկության պատկերներն են գալիս՝ որպես վաղուց փչրված քաղցր երազի բեկորներ։

Գետն էլի իր հավերժական վշշոցով լցնում է ձորը, էլի կարմրախայտերը՝ նրբին խալերով ու փռված թիւերով, թպրտում են ականակիտ ջրերում, թռչում ջրվեժն ի վեր։ Ամեն ինչ նույնն է, միայն իմ մանկության ընկերը՝ Բողարը, որի հաչոցը դեռ ականջումս է, չկա։ Որսկան Քոչարն էլ որսի չի գնում ու քայլում է իր ուխտունհինգ տարիների բեռան տակ։

Գետակի հոսանքն ի վեր գնալով՝ հասա լեռնահովիտը, որտեղով հոսում է գետը՝ միօրինակ ու թախծալի վշշոցով։ Ու ինձ թվաց՝ իմ մանկության ծանոթ ձայներով լցվեց հովիտը, կարծես մեր Բողարի հաչոցն էի լսում, հորթերի բառաչը, ընկերներիս կանչերը։

Հիմա ուրիշ երեխաներ են խաղում իմ մանկության ընկեր գետակի ափին։ Նրանց բերկրալի կանչերից, գոռում-գոչյուններից թնդում է ձորը։ Ես հեռանում եմ հարազատ վայրերից՝ մի խորին ափսոսանք սրտիս մեջ։

Ըստ Վախթանգ Անանյանի «Գյուղի քահանան» պատմվածքի
(Adaptation from Vakhtang Ananyan, 1905-1980)

Վաղուց է արդեն՝ ինձ հանգիստ չի տալիս մի միտք՝ մի հին պարտամուրհակ՝ թղթին հանձնելու այն ամենը, ինչ գիտեմ, ինչ կա իմ մտապատկերում Պարույր Սևակի մասին, այն, ինչ մեկ ուրիշը կարող է և չիմանալ, քանի որ տարբեր են եղել Պարույրի հարաբերությունները տարբեր մարդկանց հետ, և նրանց առաջ նա բացվել է տարբեր չափով ու կերպով։ Երբ խոսքը վերաբերում է Պարույրի պես վիճող, աստղ-խոսող բռընկուն ընավորությանը, որ իր անհանգիստ միտքը սպառում էր ոչ միայն գրակա-

նուիրյան մեջ և առօրյա կյանքում, նրա ցրած մտքերը, նրա բանավոր ստեղծագործ-ծուիթյունը այնպես էլ կմնան անհայտուիթյան մեջ, եթե ականջալուրերը գրիչ չառնեն։ Մինչդեռ դրանք կարևոր, երբեմն չափազանց կարևոր են իր բնավորուիթյունն ու ստեղծագործծուիթյունը հասկանալու համար։ Առաջին անգամ այս ամենի մասին խոսք բացվեց անպատմելիորեն հուզախառով միջավայրում՝ 1972-ի հունվարի 24-ին, իր ծննդյան 48-րդ տարելիցին, երբ ինքը չկար այլևս, իր նոր բնակարանում, ուր այնպես էլ նրան չվիճակվեց ապրել այնտեղ։ Եվ այդ օրը ծագեց գեթ հուշերով կորուստը մեղմելու միտքը։ Դա է, որ ստիպում է գրիչ առնելու դողացող ձեռքով և գրելու, թե ինչպես եմ տեսել Պարույրին, ինչ եմ լսել նրանից, ինչպես եմ հասկացել ամեն ինչով, նաև հակասուիթյուններով հարուստ այդ բնավորուիթյունը։ Այն տարիները, իսկ դրանք քիչ չեն, որոնց ընթացքում ինձ բախտ է վիճակվել լինելու Պարույրի ընկերը, աչխատակիցը, զրուցակիցը, վերջապես իր նամակների հասցեատերը, ինձ երևի իրա-վունք են տալիս գրելու նրա մասին, գրելու առանց ոչինչ ավելացնելու և ոչինչ պակասեցնելու, ինչպես պատվիրել է չեքոպիրյան ողբերգուիթյան հերոսը։ Գրել մի անհատի մասին, որ եկավ ու փայլատակեց հայ հոգևոր կյանքի երկնակամարում՝ ասես իբրև վկայուիթյուն, որ մեծ անհատները միայն հնում չեն եղել, որ նրանք կարող են ծնունդ առնել ու ահագնանալ նաև մեր օրերում և անցնել անժամանակ մեր ապշահար հայացքի առաջ։ Միայն իր ապրումը չէ, որ արտահայտել է Վահրամ Մավյանը, երբ գրել է։ «Նման անժամանակ մեծ կորուստների դիմաց կարծես հանցավոր ես զգում քեզ դեռ ողջ եղած լինելուդ համար, բայց ինչպես ասում են, այսպես կամեցավ ճակա-տագիրը»։

Ըստ Լևոն Հախվերդյանի «Պարույրը» հուշագրուիթյան
(Adaptation from Levon Hakhverdian, 1924-2003)

ԱՐԵՎԸ

Լսո՞ւմ եք ..., սպասեցե՛ք մի փոքր, ես ձեզ կպատմեմ բոլորն սկզբից...

Գնո՞ւմ եք ..., լա՛վ, ես կպատմեմ ծաղիկներին ու խոտերին...

— Սիրո՛ւն կակաչներ, լա՛վ լսեցեք արևի պատմուիթյունը...

Աղջիկս հիվանդ էր։

Գիտե՞ք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր՝ նախշունիկ դեմքով, ոսկեգանգուր մազերով։ Աղջիկս հիվանդ էր...

Բժիչկը եկավ, իջավ մեր բնակարանը. նա տխուր էր. ինչո՞ւ...

Հա՛, հիչում եմ, նա չէր սիրում ներքևի հարկերը...

Նա իջավ ներքև, նայեց իմ աղջկան, նայեց սենյակի պատերին։

— Խոնավ է, — ասաց, — պիտի փոխեք բնակարանը, պիտի արևկող սենյակ ճարեք...

— Քանի՞ երեխա ունեք, — հարցրեց։

— Երեքն էին, երկուսը մեռան, մնաց այս մեկը… ազատեցե՛ք իմ աղջկան. նա մեր տան հոգին է…

Նա ինչ-որ դեղ գրեց ու տխուր դեմքով դուրս գնաց։

— Հայրի՛կ, ի՞նչ գրեց բժիշկը, — հարցրեց աղջիկս։

— Աբև գրեց, սիրելի՛ս, արև գրեց, որ փայլի քեզ վրա ու ազատի ցավից…

Ու այն օրը գնացի արև փնտրելու։ Գնացի չատ հեռու, քաղաքի ծայրը ու գտա արևկող մի բնակարան։

Սիրու՛ն կակաչներ, արևի՛ զավակներ, ավելի լավ չէ՞ր ձեզ մոտ բերեի իմ ոսկեծամիկ աղջկան։

Դուք նրան կզուգեիք կարմիր ու կանաչ…

Բայց, հա՛, գիտեմ, դուք նրան հաց չէիք տա… դուք սնվում եք վաղորդյան ցողով…

Լսեցե՛ք, ես դեռ չեմ վերջացրել…

… Մյուս առավոտ պիտի տանեի աղջկանս արևի տուն, բայց երբ լուսացավ, նա ինձ կանչեց, ձեռքս բռնեց ու փակեց աչքերը…

Հետո եկան մարդիկ ու տարան նրան…

Ու երբ ոսկեծամիկ աղջիկս հեռացավ մեզնից, մենք բոլորս այրվեցինք լալուց, իսկ ես դարձա արևի հիվանդ։

Ես գնում էի, նստում փոքրիկ գերեզմանի մոտ և սպասում արևածագին։

Ու միշտ տեսնում էի աղջկանս՝ արևը գրկած և իր մազերը նրա վրա փռած…

Բայց երբ պատմում էի արևի մասին, կինս ու մայրս չէին հավատում. նրանք կարծում էին, թե ես խելագար եմ, և ողբում էին այրված, ցամաքած աչքերով։

Ու մի օր էլ դիմեցի արևին.

— Հզո՛ր արև, — ասացի, — մի մեծ գանգատ ունեմ քեզանից… ինչո՞ւ դու մի չողք խնայեցիր իմ աղջկան, ինչո՞ւ սպանեցիր ու տարար նրան…

Նա տխրեց ու մթնեց։

— Գնա՛, — ասաց — հայտնի՛ր աչխարհին, ասա՛, որ վերևի հարկը արևի չողքերը խլեց, տովեր ձգեց ներքևի հարկին ու սպանեց այն ոսկեհեր աղջկան։

Ըստ Մովսես Արազու «Արև» պատմվածքի
(Adaptation from Movses Arazi, 1878–1964)

Սեպտեմբերի 13, չորեքշաբթի, 1922 *— կեսօրից հետո՝ ժամը երկուսին, հայոց թաղի ուղղությամբ նշմարվում է լայնածավալ ծուխ։ Տան վերնահարկից դիտում ենք այդ ծուխը։ Ուրիշ տների տանիքներից էլ շատերը դիտում են այն ու ասում, թե հայոց թաղը կրակի է տրված. ոմանք էլ ասում են, թե կրակը Հայնոցից չէ, այլ նրա մոտակա թաղերից։ Իրողությունը անձամբ ստուգելու նպատակով ճամփա եմ ընկնում։ Հունական հիվանդանոցի մոտ տեսնում եմ կանանց, որ իրենց մա–նուկներին գրկած, անչափահաս երեխաների ձեռքից բռնած ու կապոցներ առած՝*

լեղապատառ փախչում են։ Զանազան գույքեր չալակած տղամարդիկ հետևում են իրենց կանանց։ Առաջանում եմ մինչև Կաթըրջը Օղլու փողոցը, որտեղից երևում է Ս. Ստեփանոսի՝ դեռևս կանգուն մնացած եռակերտ գմբեթը։ Հրդեհը երկու ուղղությամբ է տարածվում. մեկը՝ եկեղեցուց վեր գտնվող Հայնոցի, մյուսը՝ Առաջնորդարանի և նորակառույց խանութների դիմաց գտնվող շենքերի ուղղությամբ։ Այս երկու թևերը միմյանցից անջատ են, և ակնհայտ է, որ հրդեհը միաումնավոր է, քանի որ կրակն սկսվել է միաժամանակ մեկից ավելի տեղերում։ Հայնոցի հրդեհը ավելի ընդարձակ է, ավելի ծավալուն։ Քայլերս ուղղում եմ դեպի Զալգըջը Բաչը, բայց Կաթըրջը Օղլուից Զալգըջը Բաչը տանող անցման վրա հանդիպում եմ մի թուրքի, որ մոտենում է ինձ ու ասում. «Մենք պետք եղածն արեցինք, դուք ե՛տ դարձեք»։ Թուրքը, որ, անշուշտ, հրդեհի հարցում գործուն մասնակցություն ուներ, ինձ ևս իր ցեղակիցը և գործակիցներից մեկը կարծելով՝ թելադրում է, որ այլևս չառաջանամ, այլ ետ դառնամ։ Իրողությունը հասկացողի նման պատասխանում եմ՝ «չա՛տ լավ» և կանգ առնում մի պահ, որպեսզի թուրքը փոքր-ինչ հեռանա և հետս խոսակցության չբռնվի։ Երբ 20–30 քայլ հեռանում է, ետ եմ դառնում և քայլ առ քայլ հետևում նրան՝ երկուսիս միջև պահպանելով միևնույն հեռավորությունը։ Մինչև հունական հիվանդանոց այս կերպ ենք քայլում։ Թուրքը ուղղվում է դեպի ֆրանկների թաղը, իսկ ես մտնում եմ հիվանդանոցների փողոցը ու մի երկար շունչ քաշում։

Սարսափով դիտում եմ փախստականների անհամար բազմությանը։ Հունական և իտալական հիվանդանոցների պատուհանները լեցուն են փախստականներով, որոնց մեջ կան ծանոթ դեմքեր, իսկ հոլանդական հիվանդանոցի դռները ամուր փակված են։ Շտապ անցնում եմ այդ փողոցով և հասնում նավահանգստի տունը։ Պատմում եմ տխուր կացության մասին. տնեցիները բոլորը վերնահարկ են բարձրացել։ Ծուխը լայնածավալ ամպի պես տարածվում է Հայոց թաղից մինչև Փունթա, և մոխիրները թափվում են մեր գլուխների վրա։ Քամին, որ հայոց թաղի կողմից դեպի Փունթա է փչում, հետզհետե սաստկանում է կրակի իսկ արծարծումից։ Մայրամուտից հրդեհը արդեն անցել է հունաց թաղերը, որտեղից խոշոր խմբերով դեպի Քարաի են խուժում ահագին բազմություններ։ Կեսգիշերին կրակը տարածվում է տարբեր ուղղություններով ու աներևակայելի արագությամբ հասնում մինչև նավահանգիստ։ Հրդեհի ծավալմանը զուգընթաց նավահանգստում բազմապատկվում է ահուդողի մատնված մարդկային էակների ալիքը, որը տարածվում է մինչև Փունթա։

Ըստ Կարապետ Խաչերյանի «Զմյուռնիական արկածներս 1922-ին» օրագրի
(Adaptation from Karapet Hatcherian's Diary, 1876-1952)

Պապիկիս օրագրի ընթերցումը արդեն հասունացած տարիքում ո՛չ միայն հաստատեց նրա մասին իմ ունեցած կարծիքը, այլ նաև ինձ օգնեց լրացնելու 12-ամյա երեխայի հիշողության մեջ ուրվագծված նրա պատկերը։ Նրա զսպվածությունը՝ օրագրության համար բառերն ընտրելիս, պատկառանք է ներշնչում։ Այսպես՝ 1915-ի ցեղասպանության ականատես բժիշկ Խաչերյանը զգուշաբար գործածում է «ընդհանուր տեղահանում», «անցյալի սխալներ» կամ «աքսոր» արտահայտությունները։ Տպավորիչ է նաև նրա արտակարգ մարդասիրությունը։ Օրագրի մեջ նա տարբեր առիթներով արտահայտում է մարդկանց բարօրության, արժանապատվության և ազատության հարցերի հետ կապված իր մտահոգությունները։ Նա հանդես է գալիս նաև որպես անուղղելիորեն լավատես մարդ, որը, քաջածանոթ լինելով հակառակորդի՝ անցյալում գործած ոճնձգություններին ու վայրագություններին, չարունակում է հավատալ մարդու բնածին առաքինություններին։ Միայն այդպես կարելի է հասկանալ բժիշկ Խաչերյանի տատանումները, երբ նա կանգնած էր «անդոհական» քաղաքից, 1922 թվականի Ձմյուռնիայից, հեռանալու որոշման առաջ։ Երկար ժամանակ նա համոզված էր, որ թուրքերը չեն կրկնելու անցյալի «սխալները և աշխարհին ցույց են տալու, որ իրենք քաղաքակիրթ ազգ են»։ Իր այս լավատեսության մեջ նա տատանվում է միայն այն ժամանակ, երբ իր աչքով է տեսնում հայերի թաղը՝ Հայնոցը կործանված և մանավանդ, երբ ձերբակալվում է։

Հարց է ծագում, թե արդյոք բժիշկ Խաչերյանը սխալակա՞ն էր։ Շատ դյուրին է հետին հայացքով մեղադրել նրան՝ ժամանակին վճռական քայլերի չդիմելու և իր անմիջական ընտանիքը ավելի շուտ Ձմյուռնիայից չհանելու, մանավանդ իր և իր կնոջ՝ Ակ-Հիսարում մնացած հարազատներին թուրքերի յաթաղանից չփրկելու համար։ Վստահ եմ, որ դրա համար նա իր ամբողջ կյանքի ընթացքում իրեն մեղավոր է զգացել՝ թողնելով իր զավակներին բազմաթիվ հարցադրումներով, որոնցից գլխավորն այն էր, թե ինչպես կարող էր իրենց այդքան իմաստուն հայրը այդպիսի «անիմաստ» որոշումներ կայացնել և մյուս հայ բժիշկների հետ ժամանակին չհեռանալ այդ դժոխային քաղաքից։ Նմանօրինակ քննարկումներ լսել եմ հանգուցյալ մորիցս՝ նրա հետ այդ նյութի շուրջ խոսելիս։ Եթե մայրս իր հոր օրագիրը կարդացած լիներ, վստահ եմ, որ նա իր հոր որոշումները այդ ճգնաժամային օրերին ավելի ճիշտ պիտի ըմբռներ։ Չէ՞ որ բժիշկ Խաչերյանը իրեն համարում էր Թուրքիայի օրինավոր քաղաքացի, ըստ որում՝ իր քաղաքացիական պարտականությունները այդ երկրի հանդեպ լիուլի կատարած քաղաքացի։ Որպես արդարադատ մարդ՝ նա իր նման հավատավոր քրիստոնյաների պես պարզապես ի վիճակի չէր կանխատեսելու մոտեցող աղետը ...

Երախտապարտ եմ պապիկիս՝ պատմությանը նման կարևոր փաստաթուղթ թողած լինելու համար, ականատեսի մի վկայություն, որը հաստատում է, որ հայ ժողովրդի եղեռնը 1915 թվականի ողբերգության մեջ իր վերջը չի գտել, և որ ինչպես հզոր երկրաշարժից հետո տեղի են ունենում լրացուցիչ ցնցումներ, 20-րդ դարի առաջին ցեղասպանությանը հաջորդել են ուրիշ՝ ծավալով ավելի փոքր, բայց ոչ նվազ կործանարար աղետներ, որոնցից մեկը 1922-ի Ձմյուռնիայի աղետն էր։

Հատված Դորա Սաքայանի՝ կարապետ Խաչերյանի «Ձմյուռնիական արկածներս 1922-ին» օրագիրը ներկայացնող աշխատությունից։ (Dora Sakayan, 1931-)

ARMENIAN POEMS
IN TRANSLATION

ՀԱՄՕ ՍԱՀՅԱՆ
(1914-1993)

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն՝ մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:

Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեծ:

Մեր լեզուն արյո՛ւնն է մեր,
Արյունից ավելի թանկ.
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք որ կանք:

Նա պիտի մեր առաջին
Ու վերջին սերը լինի,
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի:

HAMO SAHIAN
Translated by Dora Sakayan

OUR LANGUAGE

Our language is our inner voice,
The sacred bread on our board,
The just plea of our soul,
And the taste in our mouth.

It is the smoke of our hearth,
Our weight in this world,
The salt of our selfhood,
The great sense of our breath.

Our language is our blood,
Even dearer than blood.
Our scent and our color,
It is us, the way we are.

Our language is our love,
Both the first one and the last,
What else is there in this world
That belongs to us that much?

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
(1919-2006)

SYLVA KAPUTIKIAN
Translated by Dora Sakayan

ԽՈՍՔ ԻՄ ՈՐԴՈՒՆ

Այս գարնան հետ, այս ծաղկունքի,
Այս թռչնակի, այս առվակի,
Հետն այս երգի ու զարթոնքի
Բացվեց լեզո՛ւն իմ մանկիկի.
Ու թոթովեց բառ մի անգին
Հայկյան լեզվից մեր սրբազան,
Ասես մասունք հաղորդության
Դիպավ մանկանս շրթունքին...

– Լսի՛ր, որդի՛ս, պատգամ որպես
Սիրող քո մոր խո՛սքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ:
Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի:
Եվ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել ե՛րբք մեր՝ անաղարտ...
Նրանով է մրմնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանո՛վ է որոտացել
Կռվի երգն իմ ժողովրդի.
Նրանով է մայրս ջահել
Ինձ օրորոց դրել մի օր,

WORDS TO MY SON

With the blossoms of this spring,
When brooks bubble and birds sing,
With Mother Nature at her peak,
My infant son began to speak;
And he uttered a priceless word
In Armenian, oh what splendor!
As though a piece of Holy Bread
Touched my infant's lips so tender.

Listen, my son, to this command,
Listen to your mother's words with care:
As of today, I hand you down
The Armenian tongue, precious and rare.
It traveled like a stellar light
Through the firmament of ages,
It clamored with the rapid flight
Of our arrows most courageous.
Thanks to the genius of Mesrop,
It became letters, parchment, art,
Hence our banner and our hope,
Helped us advance, set us apart.
With it, the Armenian migrant muttered
The pain of his aching wounds,
With it, my people thundered
Their war songs in martial tunes.
With it on her lips, my mother then young,
Laid me in the cradle one day.

Հիմա եկել, քե՛զ է հասել
Նրա կարկաչը դարավոր...
Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, աննկի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն:
Պահի՛ր նրան բարձր ու վճիտ,
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ,
Քո պապերի աճյունի պես:
Ու ոսոխի զարկիցը ան
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
Ինչպես մո՛րդ կպաշտպանես,
Թե սու՛ր քաշեն մորդ վրա:
Ու տե՛ս, որդի՛ս, ու՛ր էլ լինես,
Այս լուսնի տակ ու՛ր էլ գնաս,
Թե մո՛րդ անգամ մտքից հանես,
Քո մա՛յր լեզուն չմոռանա՛ս...

The sweet sounds of our tongue
Ring out anew, coming your way.
Part your lips, speak up, my joy,
Chirp cheerfully, hum a song,
May on your lips, my lovely boy,
Our ancient tongue turn young.
Keep it up-high, and keep it bright,
Like the snow on Ararat's peak,
Keep it next to your beating heart,
Like an ancestral relic.
Defend your tongue against the foe,
Stand up for it in deed and word,
As if your mother you would defend
If she were threatened with a sword.
And look, my son, wherever you are,
Under this moon, however far you get,
Even your mother you may ignore,
Your mother tongue, do not forget!

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ
(1877-1937)

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Մեր լեզուն ճկուն է ու բարբարոս,
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին
Պայծառ է նա, որպես մշտաբորբոք փարոս,
Վառված հրով անշեջ դարերում հին:

YEGHISHE CHARENTS
Translated by Dora Sakayan

OUR LANGUAGE

Our language is pliant yet barbaric,
It is manly, rough, yet sends out rays
Like an ever-glowing beacon,
Whose flame was kindled in ancient days.

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
(1919-2006)

SYLVA KAPUTIKIAN
Translated by Dora Sakayan

ԱՐԱՐԱՏ

Աչք ենք բացել, ու դու մեր դեմ եղե՛լ ես, կա՛ս, Արարատ,
Բայց ամեն օր մեզնից հեռու ու մեզ անհաս, Արարատ:

Ասես մի օր կերտել են քեզ, որ մարմարե քո տեսքով
Անհաս տենչի, անհագ սիրո արձան դառնաս, Արարատ:

Աշխարհի մեջ ամեն հայի ամեն ծայրից երևում,
Բայց մնում ես հեռո՛ւ, հեռո՛ւ, մնում երա՛զ, Արարատ:

Աշխարհների անապատում ժողովուրդս՝ մի բեղվից,
Իմ թափառիկ եղբայրների կապույտ միրա՛ժ, Արարատ:

Ախ, մեր կարոտն ելե՛լ, դիզվե՛լ, դե՛մ է առել փեշերիդ
Ու խռոված՝ դարձել է գետ, դարձել Արա՛զ, Արարատ:

Աչք ենք բացել քեզնից հեռու, քո կարոտով ծերացել,
Մի՞թե պիտի մեռնենք մի օր քեզնից անմա՛տ, Արարատ...

ARARAT

Since we opened our eyes, you have been towering before us, Ararat,
Yet day-by-day you're far away from us, out of reach, Ararat.

As though they carved you one day to be the marble-shaped statue
of an unreachable goal, of an insatiable love, Ararat.

Although seen from all over the earth by all Armenians,
You remain distant, you remain a dream, Ararat.

In the wilderness of worlds my people are now Bedouins;
To my straying brothers you're a blue mirage, Ararat.

Oh, our nostalgia has piled up around your feet, Ararat,
Anguish made it a flood, made it the river Arax, Ararat.

We opened our eyes away from you, we grew old longing for you.
How can we die one day, apart from you, Ararat?

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)

AVETIK ISAHAKIAN
Translation by Alice Stone Blackwell

Է՛Յ, ՋԱՆ-ՀԱՅՐԵՆԻՔ

Է՛յ, ջան-հայրենիք, ինչքա՛ն սիրուն
ես,
Սարերդ կորած երկնի մովի մեջ.
Ջրերդ անո՛ւշ, հովերդ անո՛ւշ,
Մենակ բալեքդ արուն-ծովի մեջ:

Քու հողին մեռնեմ, անգի՛ն
հայրենիք,
Ա՛խ, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կյանք,
Հազա՛րն էլ սրտանց քեզ մատաղ
անեմ:

Ու հազար կյանքով քու դարդին
մեռնեմ,
Բալեքիդ մատա՛ղ, մատա՛ղ քու
սիրուն.
Մենակ մի կյանքը բո՛ղ ինձի
պահեմ, –
Է՛ն էլ քու փառքի գովքը երգելուն, –

Որ արտուտի պես վե՛ր ու վե՛ր
ճախրեմ
Նոր օրվա ծեգիդ, ազի՛զ հայրենիք,
Ու անո՛ւշ երգեմ, բա՛րձր ու զիլ
գովեմ
Կանաչ արևդ, ազա՛տ հայրենիք...

HÉ, MY FATHERLAND

HÉ, my fatherland, how lovely thou art;
Thy mountain peaks are lost in the mists
of heaven.
Thy waters are sweet, thy breezes are sweet;
Only thy children are in seas of blood.

May I die for thy soil, thou priceless
fatherland!
Oh, it is little if I die with one life!
Would that I had a thousand and one lives,
To offer thee, all from my heart.

To die for thy sorrow with a thousand
lives!
Let me offer myself for thy children, for
love of thee!
Let me keep for myself only one life,
That I may sing the praise of thy glory,

That I may soar high like the skylark
On the rising of thy new day, noble
fatherland,
And sing sweetly, praise loudly
Thy bright sun, thou free fatherland!

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ
(1875-1957)

AVETIK ISAHAKIAN
Translated by Ara Baliozian

ՄՈՐ ՍԻՐՏԸ

Կա հինավուրց մի զրույց,
Թե մի տղա,
Միամորիկ,
Սիրում է մի աղջկա:

Աղջիկն ասավ. — Ինձ բնավ
Դու չես սիրում,
Թե չէ գնա՛,
Գնա՛ մորդ սի՛րտը բեր:

Տղան մղոր, գլխիկոր
Քայլ առավ,
Լացեց, լացեց,
Աղջկա մոտ ետ ետ դառավ:

Երբ նա տեսավ, զայրացավ.
- Է՛լ չերևաս
Շեմքիս, ասավ,
Մինչև սիրտը չբերես:

Տղան գնաց և որսաց
Սարի այծյամ,
Սիրտը հանեց,
բերեց տվեց աղջկան:

Երբ նա տեսավ, զայրացավ.
- Կորի՛ր աչքես,
Թե հարազատ
Մորդ սիրտը չբերես:

Տղան գնաց՝ մորն սպանեց,
Երբ վազ կտար
Սիրտը ձեռքին,
Ոտքը սահեց. ընկավ վար:

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակմած, —
«Վա՛յ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չցավա՞ց...»

A MOTHER'S HEART

There is an old tale
About a boy,
An only son
Who fell in love with a lass.

'You don't love me,
You never did,' said she to him.
'But if you do, go then
And fetch me your mother's heart.'

Downcast and distraught
The boy walked off
And after shedding copious tears
Came back to his love.

The girl was angry
When she saw him thus
And said, 'Don't you dare come back again
Without your mother's heart.'

The boy went and killed
A mountain roe deer,
And offered its heart
To the one he adored.

But again she was angry
And said, 'Get out of my sight.
I told you what I want
Is your mother's heart.'

The boy went and killed
His mother, and as he ran
With her heart in his hand
He slipped and fell.

'My dear child,
My poor child,'
Cried the mother's heart,
Did you hurt yourself?

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
(1829-1866)

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Ազատ Աստվածն այն օրից,
Երբ հաճեցավ շունչ փչել,
Իմ հողանյութ շինվածքին
Կենդանություն պարգևել.
Ես անբարբառ մի մանուկ
Երկու ձեռքս պարզեցի
Եվ իմ անզոր քևերով
Ազատությունն գրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ
Օրորոցում կապկապած
Լալիս էի անդադար,
Մորս քունը խանգարած,
Խնդրում էի ճորանից
Բազուկներս արձակել,
Ես այն օրից ոխատեցի
Ազատությունը սիրել:

Թոթով լեզվիս մինչ կապերն
Արձակվեցան, բացվեցան,
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,.
Նախկին խոսքն որ ասացի.
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ,
Ազատությո՛ւն, դուրս թռավ
Իմ մանկական բերանից:

«Ազատությո՞ւն, — ինձ կրկնեց
Ճակատագիրը վերևից. —
Ազատությա՞ն դու զինվոր
Կամիս գրվիլ այս օրից:
Ո՛հ, փշոտ ճանապարհ,
Քեզ շատ փորձանք կը սպասե.
Ազատություն սիրողին
Այս աշխարհը խիստ նեղ է»:

«Ազատությո՛ւն, — գոչեցի, —
Թող որոտա իմ գլխին
Փայլա՛կ, կայծա՛կ, հուր, երկաթ,
Թող դավ դնեն թշնամին,
Ես մինչ ի մահ, կախաղան,
Մինչև անարգ մահու այուն
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ
Անդադար՝ ազատությո՛ւն»:

MICHAEL NALBANDIAN
Translation by Alice Stone Blackwell

LIBERTY

WHEN God, who is forever free,
Breathed life into my earthly frame, —
From that first day, by His free will
When I a living soul became, —
A babe upon my mother's, breast,
Ere power of speech was given to me,
Even then I stretched my feeble arms
Forth to embrace thee, Liberty!

Wrapped round with many swaddling bands,
All night I did not cease to weep,
And in the cradle, restless still,
My cries disturbed my mother's sleep.
"O mother!" in my heart I prayed,
"Unbind my arms and leave me free! "
And even from that hour I vowed
To love thee ever, Liberty!

When first my faltering tongue was freed,
And when my parents' hearts were stirred
With thrilling joy, to hear their son
Pronounce his first clear-spoken word,
"Papa, Mamma," as children use,
Were not the names first said by me;
The first word on ray childish lips
Was thy great name, O Liberty!

"Liberty!" answered from on high
The sovereign voice of Destiny:
"Wilt thou enroll thyself henceforth
A soldier true of Liberty ?
The path is thorny all the way,
And many trials wait for thee;
Too strait and narrow is this worldFor him who loveth Liberty."

"Freedom!" I answered, "on my head
Let fire descend and thunder burst;
Let foes against my life conspire,
Let all who hate thee do their worst:
I will be true to thee till death ;
Yea, even upon the gallows tree
The last breath of a death of shame
Shall shout thy name, O Liberty!"

ԵՐԵՎԱՆ-ԷՐԵԲՈՒՆԻ

Երևան դարձած իմ Էրեբունի,
Դու մեր նոր Դվին, մեր նոր Անի,
Մեր փոքրիկ հողի դու մեծ երազանք,
Մեր դարե կարոտ, մեր քարե նազանք:

Կրկներգ. — Երևան դարձած իմ Էրեբունի,
Դարեր ես անցել բայց մնացել ես պատանի:
Քո Մասիս հորով, քո Արաքս մորով,
Մեծանաս դարով, Երևան:

Մենք արյան կանչեր ունենք մեր սրտում,
Անկատար տենչեր ունենք մենք շատ:
Մեր կանչն առանց քեզ իզուր կկորչի,
Առանց քեզ մեր տենչն իզուր կսառչի:

Կրկներգ.— Երևան դարձած ...

Կյանքում ամեն սեր լինում է տարբեր,
Իսկ մենք բոլորս ենք քեզնով հարբել,
Տաք է սերը մեր՝ շեկ քարերիդ պես
Հին է սերը մեր՝ ձիգ դարերիդ պես:

Կրկներգ — Երևան դարձած ...

PARUYR SEVAK
Translated by Dora Sakayan

YEREVAN-EREBUNI

Reborn Yerevan from Erebuni,
Our modern Dvin, our new Ani,
In our little land you're the greatest goal,
Our ancient dream, our grace of stone.

Refrain: Reborn Yerevan from Erebuni,
You have lived so long, yet you remain in infancy,
With Massis your father, with Arax your mother,
Stay forever young, Yerevan!

Our hearts are filled with ancestral calls,
Unaccomplished goals we have a lot,
Without you, our calls will be lost in vain,
Without you, our goals we will not attain.

Refrain: Reborn Yerevan ...

Love has many ends, many shapes in life,
But we all became entranced by you.
Our love is warm, like your sunny stones,
Our love is old, stemming from eons.

Refrain: Reborn Yerevan ...

ԱՊՐԵԼ

Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ սուրբ հողդ երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը։
Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ դու ինքդ էլ երբեք չզգաս քո սեփական մանրությունը։
Ու թե հանկարծ անպետքություն քեզ համարես,
թե ինքդ քեզ արհամարհես
ու համառես,
քեզ հետ վիճի՛,
քեզ չզիջի՛.
համբերատար քեզ հետ խոսի՛,
հակառակո՛ւմ քեզ համոզի
ինքը... հզոր Հանրությունը...

Ապրե՛լ, ապրե՛լ, այնպե՛ս ապրել,
Որ ուրիշի խիղդով խնդաս,
Որ ուրիշի ցնծությունով
Ինքդ էլ ցնծաս, ինքդ էլ բնդաս։
Լինես, մնաս ամենքի հետ,
Նրանց կամքին հպատակվես,
«Ես»-դ խառնես մեծ «մենք»-ի հետ,
Նրանց ցավով լուռ տապակվես։
Տրվես նրանց լույսի նման
Եվ չխաբես՝ հույսի նման։
Արշալույսի նման բացվես
նրա՛նց համար,
Վերջալույսի նման բոցվես
նրա՛նց համար։

PARUYR SEVAK
Translated by Dora Sakayan

TO LIVE

To live, to live, to live in a way,
That your saintly earth won't feel your heaviness.
To live, to live, to live in a way,
That you yourself don't feel your own tininess.
And if you happen to regard yourself
As useless, or just to disregard yourself,
And you insist on that stubbornly,
The mighty Community itself
will argue with you,
and speak to you patiently
to convince you of the contrary...

To live, to live, to live in a way,
That you rejoice with the joy of others,
That you revel with the triumph of others,
And you, too, cheer with them.
Be, stay with your peers,
Comply with their will,
Blend your "I" with the great "We,"
Suffer silently their grief.
Be loyal to them like the light,
and not deceptive, like hope.
Unfold yourself like the day-break,
for them,
Inflame yourself like the sunset,
for them.

Թե լաց լինես՝ նրանց համար.
Թե բաց լինես՝ նրանց համար։
Եվ հա՛ց լինես նրանց համար՝
հոգևոր հա՛ց,
Քեզ նրանցով կյանքում զինես
Եվ նրանցով կյանքում լինես
ոգևորվա՛ծ։
Եվ նրանցով կյանքում լինես
թույլ կամ ուժեղ,
Եվ նրանցով կյանքում լինես
բույլ կամ մժեղ,
Թշվառ՝ ինչպես անապատան,
Հարուստ՝ ինչպես լայն տափաստան...

Ապրե՛լ, սայրե՛լ, ապրել այնպե՛ս,
Որ նրանց հետ մթնես-ամպես
Եվ նրանց հետ շանթարձակվես.
Մեկտեղ հանկարծ ընդարձակվես,
Մեկտեղ դառնաս գունդուկծիկ.
Մեկտե՛ղ բացվես, մեկտե՛ղ փակվես,
Ինչպես նամակ և կամ բացիկ...

Ապրե՛լ, ապրե՛լ, ապրել մեկտե՛ղ,
Կյանքդ խառնել նրանց կյանքին,
Տառապանքդ՝ տառապանքին,
Ջանքդ՝ ջանքին,
Ցանքդ՝ ցանքին,
Եվ ենթարկվել նրանց կամքին,
Նրանց կամքն էլ քեզ ենթարկել,-
Դառնալ և՛ շանթ, և՛ շանթարգել...

If you cry, it's for them,
If you fly, it's for them,
Be bread for them,
Spiritual bread.
Get strength from them in life,
Get zeal from them for life.
Be one of them, whether frail or strong,
And be with them, whether a fly or a throng,
Be poor like a pauper
And rich like the vast prairie.

To live, to live, to live in a way,
That you darken with them like clouds,
And you strike with them like thunder,
With them you expand all at once,
With them you contract all at once.
With them you close and open up,
Like a letter or a card. ...

To live, to live, to live together,
To blend your life with their life,
Your pain with their pain,
Your strife with their strife,
Your grain with their grain,
Comply with the will of others,
Yet impel your own will to others.
And in heaven's global vault
Be both thunder and lightning bolt.

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924-1971)

PARUYR SEVAK
Translated by Dora Sakayan

ՄԻԱՆԳԱՄԻՑ

Ասում են, թե միանգամից կյանքում ոչի՛նչ չի կատարվում.
Միանգամից ո՛չ մի կարպետ և ո՛չ մի գորգ չի պատռվում,
Միանգամից բերդ չի շինվում ու չի քանդվում միանգամից,
Միանգամից ձյուն չի գալիս և չի փչում անգամ քամին:

Մի՛րգ չի հասնում միանգամից, ո՛ւր մնաց թե՝ խելոքանան,
Ջո՛ւյգ չեն կազմում միանգամից, ո՛ւր մնաց թե՝ երեքանան:
Միանգամից չեն կշտանում և չեն զգում ջրի կարիք,
Ո՛չ այսօրն է անցյալ դառնում, ո՛չ էլ վաղն է դառնում գալիք:

Այս ամենը ճիշտ է հարկա՛վ
Հենց այսպես է, ինչպես որ կա:
Սակայն եթե իմ կյանքի մեջ գեթ հարցնեին մի՛ անգամ ինձ,
Թե ես ի՞նչ եմ գերադասում,
Ի՞նչ եմ ուզում
Ու երազում,
Ես կասեի.
– Ինչ լինում է, թող որ լինի միանգամի՛ց...

AT ONCE

They say nothing happens instantly in life,
No carpet nor tapestry is worn out at once,
Instantly no fortress is built, nor is it destroyed at once,
The snow doesn't fall all at once, nor does the wind blow all at once.

Fruits do not ripen, much less do people wisen at once,
Men and women do not couple, much less do they triple at once,
People are not instantly sated, nor do they instantly crave for water,
Today doesn't turn instantly past, nor does tomorrow turn future.

All this is certainly true,
And this is just the way it is.
But if in my life they would ever ask me once,
What would I prefer,
What would I desire,
And to what would I aspire,
I would say:
– Whatever is going to happen, let it happen at once...

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
(1924-1971)

PARUYR SEVAK
Translated by Garig Basmadjian

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ

Ո՛չ-ո՛չ են գալիս, բայց ո՛չ ուշացած.
Ծնվում են նրանք ճի՛շտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց:

Անտուն չեն նրանք կամ անհայրենիք.
Հասարակ հորից ու մորից ծնված,
Սերում են նրանք և ա՛յն վայրենուց,
Որ էլ չէ՛ր կարող ապրել քարայրում:

Սերում են նրանք և ա՛յն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում:
Սերում են նրանք և ա՛յն պատանուց,
Որ սիրահարվեց իր իսկ պատկերին:

Սերում են նրանք բոլո՛ր նրանցից,
Որ սատանային հոգին են ծախում,
Միայն թե աննե՛ն մտածածն իրենց,
Ի՛նչ փույթ, թե մեռնեն ժամանակից շուտ:

Անվտանգ՝ ինչպես հրդեհն արևի,
Անվնաս՝ ինչպես օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետություններին
Մինչև իսկ իրենց կամքի հակառակ:

Արքաների հետ խոսում են «դու»-ով,
Եթե, իհարկե, լսում են նրանց,
Իսկ թե չեն լսում՝ մե՛կ է, չե՛ն լռի,
Կխոսեն նույնիսկ իրենց կոշկի՛ հետ:

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝
Հայտարարվում է և օրենքից դուրս:
Բայց չե՛ն վախենում նրանք չար
մահից.
Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ...

They appear the latest, but they are
never late,
They are born in time,
But they always fall before it,
And they are never pardoned.

They are not without a family or a
homeland.
They are born of ordinary parents
Or a savage unable to live in a cave.

They are brought forth by the old man
Who prefers to sleep in a jug,
Or by the lad
Who falls in love with himself.

They are born of those
Who sell their souls to devils
To execute their thoughts –
So what if they are executed.

They are harmless like the fire of the sun,
Innocent like the useful grass-snake.
They inspire fear in states and
governments,
Even against their will.

They address kings in the second
person singular,
Of course if they listen to them,
And if they don't, it's all the same,
They speak with their shoes.

He who frames a new law or rule
Is declared to be outside the law.
But they do not fear death:
They live with difficulty and die easily.

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ
(1897-1937)

ԵՍ ԻՄ ԱՆՈՒՇ

Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,
Ու նահիյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,
Արևն ամառան ու ձմեռվա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՛րն եմ սիրում։

Ուր էլ լինեմ չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր-
Էլի՛ ես որր ու արնավառ իմ Հայաստան յա՛րն եմ սիրում։

Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա,
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.
Աշխարհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում։

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ

ՄԵՐ ԼԵԶՈՒՆ

Եվ վարպետներ խոնարհ ու հանճարեղ,
Հղկել են այն դարեր,
Եվ փայլել է նա մերթ, ինչպես բյուրեղ,
Մերթ կոպտացել։ ինչպես լեռնային քար։

YEGHISHE CHARENTS
Translated by Gerald Papasian and Nora Armani

I LOVE ARMENIA

